

362

ԳՈՒՏ. ՓԻԼ. Ա. ԳՈՍՊԱՐԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



1927

Տպագրութիւն

ԶՈՒՆԵԱՆ , ԲԵԱՀԵԱՆԱՆ

ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՊԵՏՐՈՒԹ

008
9.31

ԴՈՒՏ. ՓԻԼ. Ս. ԳՈՍՊԵՆՍԵԱՆ

008
Գ-31 Կ

ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



1927

Տպագրութիւն
Ունիւնեան, Բեռլին
Եւ Տէր Յովհաննէսեան
Պէտրոօ

008
Կ-Բ

2010

ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Հայ մտաւորականութեան տենչը դէպի առաջաւոր արեւմտեան քաղաքակրթութիւնը մեր պատմութեան վաղեմի ժամանակներից ապացուցւած փաստ է։ Ամենաողեւորիչ հանդամանքը այստեղ ուշադիր դիտողի համար այն է, որ ամենէն զփնդակ պայմաններում իսկ այդ տենչը չէ մարել և հէնց որ պարագայները ներկայ են, իսկոյն նա զօրեղ թափով հանդէս է եկել հայ կեանքի զանազան մարդերի մէջ։ Բնականաբար հարց է յարուցւում իւրաքանչիւր խորհող հայի մէջ, կարո՞ղ ենք արդեօք իբրեւ ընդհանուր երևոյթ—միանգամայն մի կողմ թողած յարդելի բացառութիւնները—ընդունել, որ հայ մտաւորականը ի վիճակի է արդի եւրոպական կուլտուրայի ընձեռնած բաղմապիտի բընագաւառներում իբրեւ ստեղծագործող հանդէս գալ, ուրիշ խօսքով ասած, իր լուծման ձգել ընդհանուր համաեւրոպական կուլտուրայի մէջ։ Ստեղծագործել բառն աստ պիտի ի նկատի առնել, երբեայս խնդրին լըրջօրէն ենք ուզում մօտենալ։ Ինչպէս յայտնի է, ստեղծել նշանակում է տւեալ որոշ տարրերից մի և՛ ուր թափել։ Այլ եւ այս դէպքում հայ մտաւորական ասելով չպիտի հասկանալ միայն ծագումով հայ, որը կարող է փոքրութիւնից օտար, օրինակ եւրոպական միջավայրում սնւել, կրթւել և կազմակերպւել ու համեմատաբար որոշ չափով ձուլւել այդ միջավայրի հետ,



1637

9

47

այլ հայ մտաւորական ասելով հասկանում ենք հայ կեանքին—սպառնական և ներկայ - կապւած , այդ միջավայրում ապրող և նրա կուլտուրական բազմապիսի կառուցւածքներից առնուազն որեւէ մէկին մասնակից , մի խօսքով հայ կեանքի վրայ որեւէ ձեւով , իւր կարողութիւնները և հակումները թոյլադրած չափով , ազդող մի անձն :

Արդ հարց է առաջ գալիս , որո՞նք են այն սոցիալ-մասնները , որոնցով օժտւած հայ մտաւորականը բնականօրէն զգում է հանդէս գալ եւրոպական կուլտուրայի ընդունւած ստապարէզներում . առաջին սոցիալական անշուշտ ընդհանուր է ամէն տիպի և ամէն ազգի ստեղծագործողի համար— այն է՝ հոգեկան ոյժի մեծ կորուցութիւնն : Այս կանխապայմանը սակայն վերաբերում է նաև զուտ ազգային կուլտուրայի խնդիրներով զբաղւող անձին , այնպէս որ առանց այդ ընդունակութեան՝ որեւէ աշխատանք չի կարող բնութագրուել և մնայուն լինել : Երկրորդ սոցիալական անշուշտ յուրմարտական համալսարանական կրթութիւնն է : Յայտնի է , որ համալսարանի նպատակներից մէկը կայանում է ուսանողի մտաւոր պաշարի ընդլայնման մէջ՝ դասախօսութեանց միջոցաւ : Այս պաշարի ընդլայնումը սակայն , ինչպէս գիտւած է , մեծ մասամբ լրացւում է տարիների ընթացքում հեղինակաւոր ոյժերի կողմից խնամոտ պատրաստւած գիտական գրքերով : Բայց այն ինչ որ ոչ մի գիրք , անգամ ամէնէն հեղինակաւորը , չի կարող տալ , դա մեծ մասնաւոր անձնական հմայքն է , որ իր ոգեւորիչ ներկայութեամբ վարակում է հաշարաւոր պատրաստող երիտասարդների , որոնք իրենց հոգեկան կեանքի կազմակերպման համար կամաւոր

ունկնդրութեան են գնում մեծ վարպետների մօտ : Բացի այս անձնական հմայքից և ներշնչումից , դասախօսների մնայուն և անփոխարինելի ազդեցութիւնը նկատելի է անշուշտ սեմինար կոչուած աշխատանքներում , ուր համալսարանի զանազան ժառանգութեանց դասախօսների անմիջական ղեկավարութեան տակ ուսանողները որեւէ նիւթ պատրաստում կամ իրենց պատրաստածը քննութեան են ենթարկւում : Այստեղ է իսկապէս որ վարպետ մտածողը ազդելով , զանազան խնդիրների քննելու եղանակները օրինակներով ցուցադրելով , իրեն վայել աշակերտներ է պատրաստում , մարդում , ապագային ինքնուրոյն հանդէս գալու , նոր գործեր արտադրելու համար : Փորձը դժբաղդաբար ցոյց է տուել , որ հայ երիտասարտութիւնը մեծաւ մասամբ եթէ մասնակցութիւն էլ ունեւել է նման աշխատանքների մէջ , նա կրաւորական դեր է խաղացել , չտիրապետելով լիակատար , հաւասար իրենց եւրոպացի դասընկերների . եւրոպական լեզուները—գրաւոր և բանաւոր— որոնք անհրաժեշտ են որեւէ նման տիպի սեմինարիական աշխատանքի համար : Սակայն նոյն իսկ ենթադրելով , որ հայ ուսանողութիւնը ի վիճակի լինի հետեւելու այդ դասընթացներին լիակատար կերպով , դարձեալ համալսարանը վերջ ի վերջոյ ուսանողներին կազմակերպում է՝ ապագային ինքնուրոյն կերպով հանդէս գալու զանազան գերութեանց մէջ : Բայց այն հսկայական նիւթը , որը նա պիտի մշակէ որեւէ նոր գործ ստեղծելու համար , անշուշտ համալսարանն աւարտելուց յետոյ պիտի կատարուի : Բաւական է ասու լով յիշատակել , որ եթէ հայ մտաւորականը նոյն իսկ ցանկանայ էլ , եւրոպական կուլտուրայի որեւէ ճիւղ .

դուռ որոշ, մնայուն կերպով հանդէս գալու համար նա պիտի չըջապատուած լինի և օգտագործէ բոլոր այն հարուստ միջոցները և ազդիւրները, որոնց պահանջում է նիւթը: Ըստինքեան հասկնալի է, որ նման գրադումներ ունեցող հեղինակաւոր անձանց հետ մըշտական չփախը աննկարագրելի գրգիռներ կույս և կընպատիր տեւալ անձի սօրից մտաւոր պաշտօն ամբարեւուն: Այս բոլորի իրագործումը հնարաւոր է մշտական և բոլորական միջավայրում ապրելով և ևւրոպականաւորով:

Արդ, քանի որ հայ մտաւորականութիւնը բնականօրէն համալսարանական տարիներէ յետոյ կոչուած է զգացել կամ ստիպուած է եղել վերադառնալ հայրենիք, իւր ուժերը ի սպաս բերելու հայ քաղաքակրթութեան, ուրիշ խօսքով ասած հայ միջավայրի մէջ տեղափոխուելու և գործելու, բնական է որ նա—քանի որ մեր պայմանները տարբեր են և համեմատած ևւրոպականին՝ շատ տարրական են— չի կարող սեղծագործող լինել ևւրոպական կուլտուրայի բնականաւոր խնդիրներում, այլ լուազոյն գլպքում սիւղղ ևւրոպական կուլտուրայի և իրեն աշարկիսին էլ հանդէս կգայ, ինչ որ իհարկէ մի արհամարհելի գործ չէ: Այդպիսի անը կարող է միշտ հետել, ծանօթանալ բազմապիսի խընդիրներին հետ, որոնք յուղում են ևւրոպայի առաջնակարգ մտածողներին, կորոչէ իւր ըմբռնումներին և կարողութիւններին համաձայն այդ խնդիրներին բազմապիսի լուծումներէ մանց առաւելութիւն տալ, գրանք ժողովրդականացնել և մեր գրականութեան մէջ արտայայտել: Այս ախլի մի գործ ի հարկէ շատ արժէքաւոր է մեղ համար: քանի որ մեր կուլտուրան հա-

տորակ լինելով, շատ թարմանալու հոր հոր գրգիռներ տաւանալու, հորիզոնը յայնացնելու կարիք ունի, այն էլ առաջուր ազգերից ստացած: Ո՛չ պակաս նշանակութիւն ունի ի հարկէ և թարգմանական գրականութիւն, և թէ խղճմտօրէն և խնամատ է կատարուած ու երբ լիակատար հայեցի է գործած, այսինքն երբ մենք կարգալիս բոլորովին նոյն մտապատկերներն ենք ունենում ինչ որ ևւրոպային՝ նոյն գրքի ևւրոպական բնագիրը կարդալիս: Այս ի հարկէ մի շատ դժուար գործ է և պահանջում է ևւրոպական լեղուի և հայերէնլիակատար իմացութիւն, ինչ որ սակաւ է պատահում: Պիտի նկատել, որ բոլոր այն ազգերը, որոնք ժամանակին քաղաքակրթապէս շատ բարձր չեն եղած, իրենց գիտութեան և գրականութեան տեղը թարգմանելով են բաւարարել, համեմատաւորաւ զտրդացած ազգերից թարգմանելով: Ի հարկէ թարգմանելիս միշտ էլ կարող ենք ինկատի ունենալ մեր ժողովրդի զանազան կարիքները և մտաւորի մակարդակը ու բոլոր այն ընտրել բազմապիսի ձեւերակներէ միջից մեղ համար հապատասխանողը:

Սակայն այս խնդրում առաջ է գալիս որոշ հայ անձանց մօտ վերաւորուած ևւր, թէ առաջաւոր ազգերի մտաւոր ներկայացուցիչներին չըսթիւններին լոկ հետամուտ լինելը իրեն սիրող, այլ և այդ տեսութիւնների արտայայտութիւնը հայ գրականութեան մէջ, նաև թարգմանական գործով զբաղուլը մեր հոգուն բաւարարութիւն չէ տալիս, քանի որ մենք ևս, թէպէտև համեստ չափերով, ցանկանում ենք մեր տեսակետները հանդէս բերել տուեալ խնդրում: Այստեղ կարելի է նկատել, որ կարծիքներ յայտնել, մեր

մտորումները հաղորդակից անել հայ հասարակութեան զանազան առաջաւոր ազգերի կեանքի խնդիրներէ և պիտական թէորիաների՝ մասին ամէն ոք կարող է և որոշ չափով իսկ ցանկալի է գրանց լսել։ Բայց նման գէպքում երբեք չպիտի մոռանալ, որ դրանք սիրողի կարծիքներ են, որ այդ կարծիքներից այն կողմը պտնուում է վաթպետի կործինը, որը առաջաւոր ազգերի սերունդներ է կրթել և այժմ էլ կրթում է ու որի քրտնաջան աշխատանքների շնորհիւ քաղաքակրթութիւնը առաջ է շարժւում, ուրիշ խօսքով ասած, նա նոր արժեքներ է ստեղծում և մարդկութեան յանձնում իբրեւ աւանդ։ Այդ եթէ մեր հսը այնքան պղծտիկ է, որ փոխանակ յաւայութեան ստեղծողին հետեւելու, մեր սիրողի կարծիքներն ենք ամէն բանից վեր դասում և մեր արտադրութիւնները իբրեւ ինքնուրոյն ստեղծագործութիւն ենք հանդէս բերում և ծախում, ապա դա նշան է, որ այդ տիպի ապրանք առնողը բաւականին յետամնայ կուլտուրայի տէր է, որ իսկականն ու երևոյթը չի կարողանում զանազանել։

Սակայն եթէ մենք չենք կարող սկսել ստեղծագործող լինել եւրոպական կուլտուրայի զանազան րոնադաւառներում, մենք կարող ենք ամենէն յաջող կերպով իւրացնելով այդ կուլտուրան, հանդէս դալ իբրեւ ստեղծագործող մեր միջավայրի, մեր իրականութեան րազմաթիւ խնդիրների ուսումնասիրութեան մէջ։ Ըստ ինքեան հասկանալի է, որ ստեղծագործող լինելու պարագան ոչ թէ այն նիւթիցն է կախուած, որից պիտի նորը կերտուի, այլ այդ նիւթի կերտողից։ այնպէս որ այս խնդրում, արժէքի տեսակէտից զլուած,

միանգամայն երկրորդական է, թէ ատաղձը մեր միջավայրից ենք վերցրել, թէ օտար, աւելի առաջաւոր երկիրների կեանքից։ Եթէ մենք իրօք իւրացրել ենք արդի եւրոպական կուլտուրան ու հմուտ ենք գիտական ուսումնասիրութեանց վերջին մեթոտներին, ապա դրանք մարմնացնելով, կիրառելով մեր հարազատ միջավայրի, կամ պատմական անցեալի ընձևոնած խնդիրներէ վերաբերմամբ, կարող ենք այս եղանակով մեր լուծման ձգել համաշխարհային քաղաքակրթութեան մէջ։ Այստեղ մեր դերը կարող է լինել անփոխարինելի նախ այն պատճառով, որ մենք ի վիճակի ենք մեր իրականութեան պայմանները շատ աւելի զիւրութեամբ, մանրամասն և անսխալ ուսումնասիրել, քան մի եւրոպայի օտար՝ իւր վաղանձուկ տպաւորութիւններով։ Այլ միայն մեր մասնագիտանալը հայրենի խնդիրների լուծման մէջ հսկայական օգուտներ կըտայ մեզ, մեր բարդ միջավայրի յարուցած հարցերի լուծման մէջ այլ և քանի որ մեր հայրենն ու պապերը դարերով մեր հարազատ երկրի հետ են կապուած եղել, մենք կարծէք բնազդօրէն շատ աւելի նրբազգաց ենք մեր պատմական անցեալի ու ներկայի վերաբերմամբ, քան մի օտար անձն և ուրեմն մենք շատ աւելի զիւրութեամբ և անսայթաք կերպով կարող ենք այդ նիւթերին մօտենալ և դոցա մշակման մէջ իսկապէս իբրեւ վարպետ հանդիսանալ և նոր խօսք ասել և ո՛չ թէ իբրեւ սիրող կամ ընդօրինակող երեւալ։ Այս գէպքում ևս հայ ուսումնասիրողը անշուշտ բազմապիսի խոչընդոտներ պիտի յաղթահարէ։ Նա պիտի ունենայ լայն մտաւոր հորիզոն, ընդարձակ ծանօթութիւն զանազան ազգերի անցեալի և ներկայի մասին, դրանց վերա-

բերեալ ուսումնասիրութեանց տեղեակ լինի, այլ և մեր բոլոր միջավայրի սոսանձնայատուկ բնոյթը կարողանայ բերենել. որպէսզի փոխանակ ստրկանալու օտար մտածողներին, կարողանայ ինքնուրոյն բմբրոնումնետի մշակել հարազատ նիւթը և այսպիսով դաբնդհանուր դիտական մտքին հաղորդակից անել: Ուրիշ խօսքով ասած, նա պիտի իւր անձի մէջ արեւելքըն ու արեւմուտքը միացնէ, տաջիկից տոսնալով ուսումնասիրութեան նիւթը, իսկ երկրորդից ուսումնասիրութեան եղանակները: Անկասկած է, որ այս գէպքում ես իւր մնայուն տեղը կարող է գտնել միայն լուրջ և խորագնին մասնագէտը, որն ի վիճակի է տեսել նիւթն առանց մնացորդի հետազոտութեան նիւթ գործնել և այսպիսով դիտական ընտանիքում պատուաւոր տեղ գրաւել: Այլ և զործնական տեսակէտից պատճ, քանի որ մենք մեր աշխարհագրական և ուրոյն պատմական միջավայրի պատճառով առանձնայատուկ դրութեան մէջ ենք գտնուում, նման գէմքը կարող է բազմապիսի բարդ կենսական խնդիրներ լուծման մէջ անդնահատելի օգուտներ տալ: Այլ և նոր սերնդի կազմակերպման ընթացքում նման պատրաստութեան տէր անձինք կարող են երկտասարդութեան մտաւոր լրջութեան նպաստել և ինքնուրոյն անհատական կառուցուածք ունեցող և ըստ այնմ իրենց կարողութիւնները հայ իրականութեան ի սպաս բերող սերունդ արտադրել, որը ակտիւ կերպով կարող է խորամուխ լինել մեր տեղին (պատմական և ժամանակակից) զանազան ազգերի և քաղաքակրթութեանց մէջ և մեր ապագայի ուղին նշմարել ու ըստ այնմ գովծելու տրամադրել:

Վերեւում մենք չեղտեցինք, որ ձեռնարկ տեսակէտից ուսումնասիրութեան մեթոտները մենք մեծ մասամբ արեւմտեան քաղաքակրթութիւնից ենք վերցնում կամ պիտի վերցնենք և ըստ այնմ էլ մեր իրականութեան յարուցած խնդիրները լուծենք: Բացի դրանից, հանրային իրականութեան և այդ իրականութեան մէջ գործող անձանց ընտելացրի ուսումնասիրութեան և մեկնաբանման համար, ինչպէս յայտնի է, զոյւթիւն ունին զանազան տիպի տեսութիւններ (թէորիաներ), որոնցով մենք աշխատում ենք ըմբռնել բովանդակ կեանքը: Տեսութիւնների գլխաւոր կոչումն է, ներկայ գէպքում, հանրային բարդ կեանքի էութիւնը և նրա գլխաւոր մղիչ ուժերը ցուցադրել: Անշուշտ մարդկային մտքի մեծ կորով է պէտք մարդկային կեանքի հազարաւոր երեոյթներն ու փաստերը մէկ կամ մի քանի գործօններով բացատրել: Այլ և մարդկային հոգու պահանջն է երեոյթները ըմբռնելու համար դրանք միութեան բերել, այլապէս դրանք, անկապ և անջատ գէպքեր կը լինին, առանց իմաստի: Եթէ վերջ ի վերջոյ մենք որոշ տեսակէտ չունենանք, ապա անհամար փաստերի կոյտի տակ մենք կը մոլորուինք և խաբխափումների կը մատնուինք: Հոգեբանական տեսակէտից էլ պիտի դիտել, որ գաղափարը շատ աւելի դրաւիչ է, քան իրողութիւնների լոկ արձանագրումը, մասնաւոր հասարակութեան կենսական կարիքները բաւարարող տնտեսութեան վերաբերեալ գաղափարները յատկապէս հանրային հոծ զանգուածների համար մեծ թովչութիւն ունին և մեզ կարող են տրամադրել ամէն տիպի հանրային երեոյթ այդ տընտեսական գործօնով ջանալ բացատրել: Այս կերպ վար-

ուելլը ներկայումս չստ մեծ յաջողութեան գրուական ունի, որովհետեւ տնտեսական խնդիրն այժմ ամենից հրատապն ու կենսաթրթիւն է հասարակական կեանքում:

Ինչպիսի ծանր խնդիր է դրուած մի հայ մտաւորականի առաջ, մեր իրականութեան յարուցած բարդ հարցերը արեւմուտքից վերցրած բանաձեւերով լուծելու ջանալ և դրանց իբրեւ վերջնական խօսք ներկայացնել հայ հասարակութեան: Աւելորդ է այստեղ կանգ առնել այն խնդիրների շուրջը, թէ ինչպիսի փափկանք-կատութիւն, մտածողական հորիզոնի լայնութիւն և ողջմտութիւն է պէտք, չստրկանալու համար որ և է փոխառած տեսութեան, այլ այդ տեսութիւնից կամ տեսութիւններից օգտուել այնքան, ինչքան իրօք դրանք մեր իրականութեան հարազատ բացատրութեան և լուսաբանման կ'օգնեն: Դժբաղդաբար մեզ մօտ այդ տեսութիւնները ծառայել են և ծառայում են, ոչ թէ մեր հայրենի դէպքերի լուսաբանման, այլ բռնազրօսիկ կերպով փաստերը որոշ թէորիաների մէջ մտցնելու, որոնք ոչ մի ողջմիտ անձի համար համոզեցուցիչ չեն և միայն երեւակայութեան մէջ թւում է թէ բազմաբանգ իրականութիւնը բացատրուեց, իրականին մէջ երեւոյթները մնում են նոյնքան չբացատրուած ինչպէս առաջ: Որպէսզի ակնբախ կերպով մեր ասածը համոզեցուցիչ լինի, այստեղ կը ցանկայինք մատնանշել մեր ազգային կեանքի որոշ երեւոյթների վրայ:

Թայտնի է, որ բոլոր ճնշւած ազգերի պէս կովկասահայ երիտասարդութիւնը 90ական թւերից սկսած ամենաբուռն կերպով տարւած էր տաճկահայ ազատագրութեան խնդրով: Զուտ տեղական կովկասեան

կեանքի խնդիրները երկրորդական բնոյթ ունէին: Հերթական հարցերից մէկն էր գնալ անմիջապէս տաճկահայաստան և մասնակցել հայրենի երկրի ազատագրման: Սահմանն անցնելով թւում էր թէ աւետեաց երկիրն էին գնում: Ամենակարկառուն հայ մտաւորականները զբաղւած էին մի խօսքով, տաճկահայերի ազատագրման գործով, որոնք մարդկային կեանքի ամենէն նւաստ պայմաններումն էին գտնուում: Այժմ հարց է առաջ գալիս, ինչով բացատրել այդ շարժումը, չէ՞ որ հանրային իւրաքանչիւր շարժում ունէ տեսութեամբ պիտի բացատրել: Եւ ահա դիւրին կերպով հանդէս է գալիս տնտեսական թէորիան, որը յայտարարում է թէ հայ առաջաւոր մտքի ներկայացուցիչները իբրեւ բուրժուազիայի ներկայացուցիչներ— դիտակից կամ անդիտակից— աշխատում են տաճկահայք անցնել, որպէսզի այնտեղ շուկաներ դրաւեն նորաստեղծ կովկասեան բուրժուազիայի համար: Այսպէս էր ազգաբարւում ժամանակին կովկասում հրատարակող մի շարք պարբերականների մէջ որոշ հայ տեսաբանների կողմից, որոնց իտէալա՛յան ձգտումն էր հայկական շարժումները ևս անպայման կերպով որոշ պատրաստուած կապաւարների մէջ մտցնել:

Այս օրինակը մէկն է այն անթիւ օրինակներից, թէ ինչպէս մենք մեր հայրենի իրականութեան իրադարձութիւնները բացատրել ենք ցանկանում ըստ եւրոպական տեսութեանց: Այժմ հարց կարող է յառաջ գալ, թէ ունէ ողջմիտ, մեր պատմական և ներկայ իրականութեան ծանօթ ու աննախապաշարուած միտք կարո՞ղ է նման բացատրութիւններով բաւարարուել: Արդեօք մեր կեանքի սուր դիտողութիւնը

և այս արտառող պնդումները որ և է տոնչութիւն ունին միմիանց հետ։ Անշուշտ ոչ։ Իւրաքանչիւր ուշադիր անձն գիտէ, որ ազգերի կեանքը դարաւոր պատմութիւն ունի, որ ազգութիւնը իրեն պատմութեամբ կական մի երեւոյթ, ունենալով դարերի ընթացքում ինքնավար կեանք, այսինքն ինքնավար կերպով կարգադրելով իր բոլոր հասարակական խնդիրները, ձեռք է բերել հասարակական կեանքի իւրայատուկ ձեւեր և հէնց հասարակական կեանքի այդ իւրայատուկ ձեւերի զարգացման արդիւնք է ազգային նկարագիրը, որը ժամանակի ընթացքում բարդանալով, անհատականալով, զօրեղանալով մի ոյժ է դառնում, որը աշխատում է անկախ լինել չրջապատի տնտեսական պայմաններից։ Ուրիշ խօսքով առած, մեր մէջ, մեր աշխարհի ազգային նկարագրի կառուցման մէջ, հսկայական դեր ունին մեր ապարդի նախահայրերը, որոնք պատմութեան ընթացքում ազգային արժէքներ են ստեղծել և մեզ փոխանցել։ Ուրեմն մեր նկարագիրը միայն այսօրուայ չրջապատի ստորեայ երեւոյթների արդիւնքը չէ, և որ գլխաւորն է՝ մեր հոգիական բովանդակութիւնը շատ աւելի հարուստ է, շնորհիւ մեր նախահայրերից ժառանգած այդ արժէքների, քան այսօրուայ մեր ողբալի իրականութիւնը կարող էր ստեղծել։ Ազգային ուրոյն ձեւերի պահպանման համար մարդկային խմբակցութիւնները ամէն տիպի զրկանքներ ու զոհաբերութիւններ են երում, յաճախ իրենց ամենակենսական շահերը վրտանդում։ Յատկապէս 19րդ դարում, շնորհիւ կուլտուրայի գէմօկրատացման, ազգութեան հոծ մասաները մասնակից դառնալով այդ ուրոյն ազգային կուլտու-

րական կուլտուրայի արժէքներին, աւելի ևս ջերմ ջատագով են հանդէս գալիս իրենց արժէքների պահպանման համար։ Եւ այսպէս ստեղծուած ազգային զգացմունքը այժմ այնքան զօրեղ է դարձել, որ ազգիայ գէմօկրատային նշանաւոր տեսաբան Կ. Կաուցկիին նկատում է, որ ազգային զգացմունքն այժմ մի գործօն է դարձել, որ գործում է բոլորովին անկախ, առանց որ և է կապակցութեան երկրի տնտեսական զարգացումից, և որոշ պայմաններում նոյնիսկ ի վնաս այս զարգացման։ (Տես՝ Կ. Կաուցկի, ազգային հարցը սօց. գէմօկրատիայի դատարանի առաջ)։

Հետաքրքիր է այժմ իմանալ, թէ ինչու է այս առաջաւոր երիտասարդութիւնը ևս, դրդուած լոկայալ նոյն ազգային զգացմունքից— դարերով ժառանգած— չէր կարող սուանց որեւէ այլ նկատումի, իւր մտահոգութեանց կենդրոնը դարձնել սահմանի այն կողմը զըտնուած իւր տարաբախտ ազգակիցների գոյութեան ազատ պայմանների ստեղծման հարցը։ Անհրաժեշտ է արդեօք այսպիսի մի պարզ և աննախապաշարուած ուղիղ համար դիւրամբօնելի խնդրում որեւէ «շուկայ» գտնելու հարց յարուցանել։ Սակայն տնտեսական գործօնի հայաւարի տեսութիւնը հրամայական պահանջ է դնում հայ մտաւորականների որոշ հատուածի մօտ, անպայման իրականութիւնը մտցնել որոշ կաղապարների մէջ, որը վերջի վերջոյ իրականի ծաղրանկարն է հանդէս գալիս։ Բերածս օրինակը մի փաստ է, թէ ինչպէ՞ս եթէ մենք որոշ տեսութիւնից չրջանայեաց կերպով, լրջմտօրէն, զգուշութեամբ չօգտուինք մեր հայրենի երեւոյթները, խնդիրները մեկնաբանելու և լուծելու համար, նրանք մեզ անհամեմատ աւելի վը-

նաս կրտան քան օգուտ :

Ո՛չ պակաս կարեւորութիւն է ստանում հասարակական երեւոյթները հետ նաեւ կարկառուն անձանց կողման, գործունէութեան, էութեան ըմբռնումը, լուսաբանութիւնը : Եթէ մեծ նշանակութիւն ունին ազգերի կեանքում արժէքներ ստեղծող անձինք, նոյն քան մեծութիւն է պահանջում, այդպիսի անձանց կեանքն ու գործը իւր բոլոր հարադատութեամբ պատկերացնել մի գրական երկրի մէջ : Այստեղ էլ կան նոյնպիսի բազմապիսի խոչընդոտներ, ինչպէս որ հանրային երեւոյթների ըմբռնման ժամանակ մատնանշեցինք : Կարեւոր մօմէնտներից մէկն է անշուշտ այս գէպքում ժամանակի պարապան, քանի որ ինչպիսի խոչընդոտիւն էլ որ ուզում է ներկայացնէ մեծ անձը, նրա կեանքի, գործի և ըմբռնումների վրայ անխուսափելիօրէն իւր գրոյմն է դնում իւր ժամանակաշրջանը : Այլ դարաշրջաններում այդ կեանքը, գործը, ըմբռնումը անշուշտ այլ բնոյթ կ'ստանային և այլ գունաւորում կ'ունենային : Ոչ պակաս կարեւոր է նաեւ ուսումնասիրութեամբ անձի շրջապատը, քանի որ նկարագրի և աշխարհայեացքի կառուցումը սովորաբար ո՛չ թէ տրամաբանօրէն է լինում, այսինքն որոշ նախադրեալների վրայ կառուցուած չէնք է, այլ նայած թէ տուեալ անձը ինչպիսի իրեն շրջապատող մթնոլորտում է ապրում, ի՞նչ շարունակական գրդիւնների, գաղտնիքների ազդեցութեան տակ է կազմակերպւում, ըստ այնմ էլ նրա սպաղառ աշխարհայեացքն ու նկարագրին է կառուցւում : Հանրային կեանքում մեծ մասամբ — րացատութիւններ միշտ էլ կը լինին — «աջ» կամ «ձախ» լինելը ո՛չ թէ զուտ տրամաբանա-

կան խորհրդածութեանց արդիւնք է, այլ զանազան հատարակական շրջապատի և շրջապատի խաւերի արգասիք : Անշուշտ բացի շրջապատից նաեւ անհատի անձնական շեշտը որոշ նշանակութիւն ունի, որը մի առանձնայատուկ բնոյթ է տալիս մեր նկարագրին ու գործունէութեան և որը ո՛չ մի պատճառական կապակցութեամբ բացատրել չի կարելի : Ինչպէս որ չի կարելի լուրջ կերպով հարց տալ և բացատրել ջանալ, թէ ինչո՞ւ այս մարդը թաթեմաթիկական, իսկ այն միւսը գեղարուեստական հակումներ ունի : Անհատի մէջ ամէնից գրաւիչը այդ անհատական շեշտն է, որը հիւստեւելով շրջապատից և միջավայրից, այլ և իւր ժամանակից ստացած ազդեցութիւնների հետ մի ուրոյն ձևով է հանդէս գալիս և մեր սովորական մանկանացուներիս մէջ մի յատուկ տեղ գրաւում ու մեր միօրինակ կեանքի թարմացման համար նորանոր գրգիռների տալիս :

Նախքան անձնաւորութեանց նկարագրման եղանակներին անցնելը, անհրաժեշտ ենք համարում աստ մի քիչ հանգամանօրէն կանգ առնել առհասարակ անհատական աշխարհայեացքի կառուցման վրայ :

Մարդ էակի ամենաբնորոշ յատկանիշներէն է ունենալ որոշ աշխարհայեացք բնութեան և մարդ էակների մասին, այսինքն ջանալ ըմբռնել նրանց գոյութեան իմաստը : Ամէն մարդ անշուշտ իւր հակումների ու կեանքի վրայ ունենալիք տեսակէտների համաձայն էլ աշխատում է իւր դիտողութիւնները բազմաբովանդակ աշխարհի վրայ միութեան բերել, որովհետեւ առանց միութեան բերելու, վերածելու, նա ամենեւին չէր կարող աշխարհը ըմբռնել : Մի բան ըմբռնելու գաղափարի մէջն է կայանում այն հանգա-

մանքը, որ մենք ջանում ենք դրա տարրեր կողմերը
 իբրև միևնույն էություն դանազան երեւոյթները բն-
 դուենել, որոնց բոլորի իմաստը մէկ է սակայն: Եթէ
 աշխարհը մեզ համար բւլրովին տարրեր, իրար հետ
 ամենեւին կ'ախտւոյնուհեցող, փաստեր ու գէպեր ըն-
 ձեռնէր, ապա նա մեզ համար անիմանալի մի օտեղծւած
 կ'լինէր: Բացի այս հանգամանքից, այլ և մենք իւ-
 րաքանչիւր անհատից կարծէք խեղափականօրէն պա-
 հանջում ենք, որ նա իւր այս աշխարհում եղած մա-
 մանակ ո՛չ միայն իւր օտօրեայ պէտքերին զոհացում
 տալու համար միայն ջանայ, այլ և աշխատի իւր ուրոյն
 տեսակետը— թէկուզ շատ համեստ ու տարրական— ու-
 նեմալ աշխարհային երեւոյթների մասին: Եւ իրօք,
 ի՞նչ արժէ մի գոյութիւն, որը երբէք դուրս չէ գալիս
 իւր կաշւի միջից ու մի ընդգրկող հայեացքով այս
 բոլոր աշխարհային երեւոյթների էութիւնն ու իմաս-
 տը փնտռում: Հէնց մեր էութեան, որն այս համայն
 տիեզերքի մի աննշան մասն է, խորամուխ լինելու
 համար պիտի այդ համայնապարփակ տեսակէտի ընդ-
 գրկման ջանանք:

Աշխարհիս երեսի ամենաթանկագին արժէքներին
 է, երբ մենք հոգեկան երկարաս և տանջանքներով,
 երկունքով ուրոյն տեսակէտի տէր ենք դառնում, որն և
 լուսաւորում է մեր անհատական կեանքը ու մեր ամե-
 նաողբերգական պայմաններում իսկ մեր գոյութեան
 աներկնեցուկ դառնում: Այն աշխարհայեացքը, որն
 այսպէս ասած դրսից է դալի և մենք միայն սովոր-
 ւոր կերպով իւրացրել ենք, երբէք չի կարող մեր
 գոյութեան էութեան պայծառացման և վսեմացման
 նպաստել և լուսագոյն գէպքում մեր հորիզոնը կընդար-

ձակէ, բայց ո՛չ ի գէպքում մեր հոգին չի աղնուա-
 ցնէ: Աշխարհայեացքի զարգացումը, որի գէպքում յա-
 ճախ է պատահում, որ մենք մեր հին տեսակէտները
 թողնում ենք և նորը ընդգրկում, եթէ ընական աճ-
 մամբ է ընթանում և կեղծ դրդապատճառներ չեն
 խառնւած այդ նորի ընդունելութեան մէջ— անհատի
 հոգեկան բարձրացման ապացոյցներին է:

Աշխարհայեացքի այն իմաստ, որ զուտ վերաբե-
 րում է տիեզերքի, կեանքի, մի խօսքով գոյի ծագման,
 զարգացման, նրա էութեան ամենաընդհանուր ուսում-
 նասիրութեան, դիւրութեամբ կարող է առարկայական
 ուսումնասիրութեան ընոյթ ստանալ: Այստեղ մեր
 մտածողութիւնը և դրա արդիւնքները գոյի վերաբեր-
 եալ (սրա ծագման ու էութեան մասին) կարող են յա-
 տուկ և առանձին ուսումնասիրութեան նիւթ դառնալ
 և համեմատաբար անկախ հանրային կեանքի պեկո-
 ծութիւնից՝ իւր տրամաբանական ընթացքն ունենալ:
 Ժիշտ է պատմականօրէն ստեղծուած են և մեզ աւանդ
 թողնւած փիլիսոփայական խոշոր սխառմաներ, որոնք
 որոշ դարաշրջաններում յատկապէս կառուցւել են ու
 աշխատում են քարանալ, և իրենց ուժով իրենց են-
 թակայ ուղեղներն այնպէս կաշկանդում են, որ սրանք
 ի վիճակի չեն, անկախ այդ սխառմաներից, երեւոյթնե-
 րը դիտել: Սակայն ինչ որ ամենէն մեծ խոչընդոտն
 է առարկայական իմացութեան, դա մեր հոգու կան-
 խաւսումադուրեւիւններն են, որոնք ազդում են մեր
 աշխարհայեացքի կառուցման բոլոր կողմերի վրայ, թէ
 զուտ վերացական խնդիրներում, օրինակ գոյի էութե-
 թեան և թէ աւելի մեծ չափերով՝ հանրային կեանքի
 վերաբերեալ կազմելիք տեսութեանց, այլ և դաւա-

1637
47



նանքների ստեղծման խնդրում: Թէպէտե մեզ թւում է, որ յատկապէս առաջին դէպքում, զուտ վերացական փիլիսոփայական մտքի մարդանքներում մենք—առօրեայ կեանքի հետ անմիջական հաղորդակցութիւն չունենալով, այս խնդիրների լուծման մէջ— բոլորովին ազատ ենք որեւէ կանխառեալ հակումներից և տրամադրութիւններից ու շահերից և խնդիրն ըստ էութեան ենք վերցնում ու քննութեան նիւթ դարձնում: Սակայն սա միայն թւում է մեզ և այն էլ այն պատճառով է թւում, որ այս մասը մեր՝ աշխարհայեացքի՝ անմիջապէս չի կապւում մեր առօրեայ կենսական շահերի հետ: Սակայն սա ըստ իս միայն աստիճանի խնդիր է. այսինքն մենք աւելի հնարաւորութիւն ունինք ըստ կարելւոյն աւելի հանդիստ հոգով և անշահասէր կերպով խնդրին մօտենալ և ուրեմն դրա եզրակացութիւնները կարող են աւելի մեծ ընդունելութիւն գտնել շատ անձանց կողմից: Սակայն հիմնականն այն է, որ անգամ այս զուտ վերացական մասում, մենք տրամադրւած ենք կանխօրօք, չընորհիւ մեր հոգեկան կազմածքի, այս կամ այն փիլիսոփայական տեսութեան կողմն անցնիլ, ուրիշ խօսքով ասած, շատ անգամ մենք մետաֆիզիքական կամ դրական աշխարհայեացքների կողմնակից ենք լինում ո՛չ թէ երկարատե խորհրդածութեանց և վերլուծմանց շնորհիւ, այլ որովհետեւ մեր հոգեկան կազմը նախատրամադրւած է դէպի այս կամ այն մտածելակերպը և ապա իւր երկարատե աշխատութեանց շնորհիւ հիմնաւորում է այս կամ այն տեսութիւնը: Թէպէտե իսկապէս մենք սպասում ենք, որ տեւալ մտածողը իւր աշխարհայեացքի այս մասը երկարատե ուսումնասիրութիւններից յետոյ կազմէ, բայց

շատ քիչ բացառութեամբ գոնէ ընդհանուր ուղղութիւնը այս կամ այն մտածողի՝ արդէն սկզբից նրա հոգումէջ ձևակերպւած է և ապագայ զբաղումները ծառայում են հոգու այդ կանխատրամադրութեան ամրապնդման, ի հարկ է մտածողը կարող է գիտութեան տեսալների հիման վրայ այս կամ այն փաստը մի կողմ թողնել, իւր պնդումները այլ եղանակներով հիմնաւորել բայց կարծում եմ, որ նրա հոգու ընդհանուր ուղղութիւնը, ուրեմն և աշխարհը ըմբռնելու եղանակը կանխորոշւած է: Անշուշտ ժամանակի ոգին, նրա շրջապատը (հոգեկան), իւր ստացած կրթութիւնը, այն հեղինակները, որոնց սխառեմներին նա հետեւել է, այս բոլորը ի հարկէ ազդել են և ազդելու են նրա աշխարհայեացքի այս մասի վրայ, բայց և այնպէս այս բոլորը կարող են խորացնել, զուցէ և որոշ ձևակերպութիւն տալ նրա հոգու տրամադրւածքին, բայց մի զուտ մետաֆիզիկ հոգուց ստեղծել բոլորովին դրական մտածող, կարծում եմ շատ դժւար էլ լինի, եթէ ոչ անհնարին: Մենք այստեղ անշուշտ չենք ուզում չեղտել, որպէս թէ մի անձն ծնւում է բացառապէս միտաֆիզիք տեսութիւններ ընդգրկելու և մի այլ անձն յօրինակ դրական ըմբռնումների համար, այլ որ կան որոշ հոգեկան տրամադրութիւններ, որոշ ներքին մղումներ, որոնք մեզ կանխատրամադրում են դէպի մտածողութեան այս կամայն եղանակը, և սա աւելի խառնւածքի խնդիր է քան արդիւնք գիտական պաշարի մեծութեան կամ փոքրութեան, որովհետեւ իրականի մէջ մենք տեսնում ենք երկու բոլորովին հակադրեալ տեսութեանց ներկայացուցիչներ նոյնպիսի հիմնաւոր պաշարով միմեանց դէմ են հանդէս գալիս:

Խնդիրն աւելի բարդանում է, երբ մեր աշխարհայեացքի այն կողմերին ենք մտնում, որոնք չօչափում են անմիջապէս մեր մարդ էակաների հանրային կեանքը, կեանքի եղանակը, դրա գործոնները, ուղղութիւնը և այլն։ Այստեղ արդէն մեր աշխարհայեացքը գոտ տեսական բնոյթ չունի, այլ զգալապէս ազդում է մեր ուղեւորակերպի, ինչպէս նաև մեր ամբողջ գործողութեան վրայ։ Բոլորովին նորոգւած է թէ մենք աշխարհի վրայ անապատականի հայեացք ունինք և ըստ այնմ գիտակցաբար հրաժարելով այս աշխարհի բոլոր բարիքներից, Աստուծոյ հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնելով, մեր մեղքութեան մէջ աշխատում ենք մեր հեթանոսական մեղքերը քաւել, թէ այս աշխարհը իբրև բարիքների և դրական արժէքների վայր զիտելով, աշխատում ենք գոյութեան այն կարճ ժամանակաշրջանում, որ վիճակուած է մեղ այս երկրի վրայ դեղերի, ըստ կարելւոյն մեծապէս վայելել այդ արժէքներն ու բարիքները։ Բանք նրանում է, որ մարդկային հասարակական կեանքում կամքը և այն զգալաբարները, որոնցով այդ կամքի միջոցով մենք ազդում ենք կեանքի վրայ, որոշ տեղ ունին, այնպէս որ կեանքի երևոյթների վրայ մենք զանազան կերպով ազդում ենք, նայած թէ մենք ինչ հիմնական ըմբռնումների տէր ենք։ Եթէ օրինակ մի անձն ազգային տեսակէտների ջերմ ջատագով է, նա իւր տանը, իւր երեխաների դաստիարակութեան, իւր հաճախներին ազգային գունաւորում կտայ և ընդհակառակը, եթէ նա ազգազգային է, կարող է իւր կանգնել ընթացքը ազգային սկզբունքներով դեկալարել և ճիշտ հակառակ վերոյիշեալ, ազգային ալիքին, իւր գոյութեան իւրա-

քանչիւր մօմէնտին այլ բովանդակութիւն տալ, հանրային այլ շրջանում շնչել, այլ դաստիարակական հրահանգներ տալ իւր գաւազներին,

Սովորաբար ենթադրում է, որ գիտակից մարդկանց և յատկապէս մտաւորական կարողութեանց տէր անձանց մօտ աշխարհայեացքի այն մասը, որ վերաբերում է հասարակական կեանքին, սրա էութեան, ունենալիք ուղղութեան և այլն — արդիւնք է մարդու երկարատեւ խորհրդածութեանց, կշռադատութեանց, համեմատութեանց, այսինքն տուեալ անձն թէ անձնական փորձով և թէ մարդկութեան դարերի փորձով, որ կուտակուած է դրքերի մէջ և որոնցից մենք օգտւում ենք, եկել է այն եզրակացութեան, որ ինքը ենթադրենք թէ ազգայնական պիտի լինի և այդպիսով միայն կարող է իրական դեր խաղալ այս աշխարհում։ Եւ ընդհակառակը մի այլ անձն բոլորովին նման հանապարհներով, այսինքն անհնազանդ և մարդկութեան դարերի փորձով, եկել է դրան հակառակ եղբայրացութեան, այսինքն որ այս դէպքում համաշխարհային քաղաքացի լինելով է, որ նա մարդկութեան իսկական ծառայութիւն կարող է մատուցանել։ Իրականին մէջ սակայն, մի կողմ թողած շատ աննշան բացառութիւնները, մեր հանրային աշխարհայեացքը և զաւառանքը կառուցւում է շնորհիւ այն շրջապատի, որի մէջ մենք աւելի, մեծացել ենք և որը իւր անջնջելի բնույթ է դրել փոքրութիւնից մեր բոլոր ապրումները վրայ։ Անշուշտ խնդիրը եթէ ամենաընդհանուր ձևով երցնենք, դարաշրջանը, որի մէջ մենք ապրում ենք, անրային մտքի հոսանքները և պայքարները իրենք բնույթ են դնում մեր հայեացքների վրայ, սակայն

այդ բոլորի մէր վրայ ազդելու հանգամանքը և եղանակը պայմանաւորուած է այն միայնուհ տպաւորութիւններով, որ մենք ստացել ենք և ստանում ենք ամէն օր մեր անմիջական շրջապատից: Վերցնենք օրինակ մի բանւորի որդի, որը փոքրութիւնից բանւորական շրջանակում է սնւել, մեծացել և որի վրայ հանրային պայքարները զգալապէս սզդելով, դարձրել են նրան սօցիալիստական գաղափարներին հակուած մի անձն: Այս բանւորական շրջանից դուրս եկած անձը ապագային կրթւելով, չստ զարգանալով ի հարկէ էլ աւելի ցայտուն և գիտակցական կերպով հաւդէս կրերէ իւր իր հայեացքները՝ վերաբերեալ հասարակական կեանքի երևոյթներին: Այստեղ ի հարկէ դեր կարող է խաղալ նաև նրա հոգու անհատական շնչողը, որը իւր ըմբռնումներին առանձնայն օտուկ բնոյթ կարող է տալ: Միաժամանակ վերցնենք մի այլ անհատ, որն իւր մանկութիւնից աղնուական շրջանակի տպաւորութիւններ է ստացել, որի համար աղնուականութեան բարքերն ու կենցաղը սրբացած նշանակութիւն ունեն: Եւ ահա այս ըմբռնումներով մի մարդ, բնական է որ ապագային, իւր նկարագրի կազմակերպութեամբ, էլ աւելի պիտի զօրեղ ջատագովը լինի վերոյիշեալ աղնուական կեանքի ու մտածելակերպի: Արդ, եթէ մենք հանդիպելու լինենք առանձին-առանձին այս երկու տարբեր դաստիարակութիւն ստացած անձանց և խօսենք նրանց հետ, նրանց հանրային դաւանանքների մասին, նրանք ի հարկէ կաշխատեն տրամաբանօրէն ձեզ ներկայացնել մի շարք պատճառաւորութիւններ, որոնցով նրանք իրր թէ ղեկավարած, այս կամ այն դաւանանքն են ընդգրկել իրր աւելի ար-

դարութեան համապատասխանող տեսակէտ: Սակայն սուր դիտողը իսկոյն կընկատէ, որ այս և նման հազարու մի ապացոյցները միայն փորձեր են, հիմնաւորելու այն հոգեկան կանխաւորութիւններ, որ ունին այդ երկու բոլորովին տարբեր միջավայրի մարդիկ: Անշուշտ անհրաժեշտ է, որ անպայման այն շրջանը, ուր մենք կրթւել ու դաստիարակւել ենք, նաև անպայման մեր տնտեսական պայմաններին համապատասխանէ, այսինքն մենք կարող ենք օրինակ միջին դասին պատկանիլ մեր նիւթական կացութեամբ բայց և այնպէս զօրեղ բուրժուական գաղափարներով օժտուած լինել, որովհետև մի հոգեկան մթնոլորտում ենք սնւել ու դաստիարակւել, ուր բուրժուական մտայնութեան դրոշմն է դրուած: Եւ քիչ չեն օրինակներ, թէ ինչպէս աղնուական խաւի դաւակները շնորհիւ մի այլ միջավայրում, շրջանումն ապրելուն և դրա տպաւորութեան տակ բոլորովին դէմօկրատական հայեացքներ են ընդգրկում:

Վերևում մենք ակնարկեցինք արդարութեան գաղափարը, որն անշուշտ տարբեր գոյն է ստանում գաւազան աշխարհայեացքներում: Արդ, արդարութեան գաղափարը զուտ տրամաբանական խորհրդածութեամբ է որ մենք ստանում ենք, այլ դա մեր բարոյական կամքի թելադրանքն է, որն ըմբոստանում է տիրող կարգերի դէմ և լաւագոյնն է ցանկանում մարմնացնել հանրային կեանքում: Մի այլ անհատի մօտ այդ ընդլզումը տիրող կարգերի դէմ կարող է բոլորովին տեղի չունենալ և դուք գիտական աւեալներով ու զուտ տրամաբանօրէն էք կարող մի աղնուականի ներշնչել տալ սօցիալիս-

տական գաղափարներս Նա, որի հոգին ուրոյն դաս-
տիարակութեան շնորհիւ քարացել է դէպի մարդկու-
թեան տառապանքը, կարող է բոլորովին սառնասիրտ
մնալ բոլոր ձեր ազնուատենչ տեսութեանց վերաբեր-
մամբ և դուք երբեք չէք կարող համոզել նրան, զա-
նազան խորհրդածութիւններով ձեր ասածների ճշմար-
տութեան մէջ:

Անշուշտ շահը եւս զորեղ կերպով ազդում է մեր
ըմբռնումների գունաւորման վրայ և յաճախ բոլորո-
վին անգիտակցօրէն մեզ տրամադրում զանազան տը-
րամաբանական խորհրդածութիւններ կատարել, մեզ
համար կենսական անհրաժեշտութիւն դարձած շահերը
պաշտպանելու, դրանց ազնուացրած բնոյթ տալու,
իտէալականացնելու: Բայց ի հարկէ այս ազնուա-
ցնելով ու իտէալականացնելով, մեր ունեցած շահի—մի-
ւնոյն է՝ ի թական, թէ հոգեկան շահ—խորը արմատ-
ները չեն վերանում: Թերեւս մենք գեղեցիկ-եղանակ-
ներով ի վիճակի կը լինինք արտայայտել այն, ինչ
որ մեզ համար ամենէն առաջնակարգ նշանակութիւն
ունի:

Կեանքը, իւր անողոք պահանջները բաւարարու-
թելու համար, ստիպում է մեզ բաղմապիսի, գուցէ և
ամենէն նուրբ ձեակերպութիւններ, բանաձևեր գտ-
նել, գոհացում տալու իւր պահանջներին, այսպէս
ասած այս պահանջները բանականացնել և պատճա-
ռաբանել: Կուշտութեան զարգացմամբ ի հարկէ գաղա-
փարները, դաւանանքները, շահերը այլ բնոյթ կ'ստա-
նան, աւելի կը նրբանան ու կը բարդանան, սակայն
դարձեալ այդ նրբացած ու բարդացած գաղափարները
անմիջապէս արձագանք կը տան մեր հոգու խորքում

զանուած այն կանխատրամադրութիւններին, որոնք
ինչպէս ասացինք, իրենց խորն արմատներն ունեն այն
հասարակական միջավայրի մէջ, ուր մենք սնւել, կրթ-
ւել ենք և որի մշտական գաղափարների, հայեացք-
ների ազդեցութեան տակ մեր նկարագիրն է կերտւել:

Ի հարկէ այս ընդհանուր պատկերը չի խանգա-
րում, որ եզակի անձինք հանդէս գան պատմական
իրականութեան բեմի վրայ, որոնք իրենց հոգու մէջ
խտացնելով ընդհանուր մարդկութեան ամենէն սրբա-
զան և վեհ գծերը, արժէքներ հանդէս բերեն ու քա-
րողեն, որոնք որեւէ դասից ու միջավայրից վեր կանգ-
նելով և մարդկութեան ապագայ ընթացքը կռահելով,
նոր կեանքի պատգամներ ազդարարեն: Հոգ չէ թէ այդ-
պիսի անձինք բացառութիւններ են և մեծ մասամբ
ժամանակակիցներից հալածւած, բայց կասկածից վեր է,
որ նման անձինք են, որ մեր այս սովորական կեան-
քին մի նոր ոգեւորութիւն են ընծայում և զմեզ զգալ
տալիս, ժամանակի առ ժամանակ, մեր գոյութեան ան-
կատար լինելը: Հէնց այս տիպի եզակի անձինք են,
որ սովորական «մեաս»ի կամ «չահի» տեսակէտներից
բարձր կանգնելով և յաճախ իրենց անձի զոհողութեան
գնով մարդկային գաղափարի և արժանիքի իբրեւ այդ-
պիսու սրբութիւնն են ջատագովում ու հէնց դրանով
մարդկութեան ազնուացման նպաստում:

Եւրոպական գրականութեան մէջ, անձնաւորու-
թեանց նկարագրի, նրանց կեանքի ու դործի վերաբ-
տադրման համար երկու մէթօտներ են դործադրւում:
Մէկ դէպքում մենք զուտ տեսականօրէն տեսալ աւնձի
գաղափարների զարգացումն ենք տալիս, այսինքն նրա
ունեցած կամ ստացած տեսութիւնները զանազան խըն-
դիրների մասին մենք տրամաբանօրէն կապակցեալ կեր-

պով շարադրում ենք և աշխատում ենք այդ եղանակով ըմբռնել նրան: Այս դէպքում կարիք չի զգացւում զիմեւ նրա կեանքի բազմապիսի պատահարներին, որոնք որեւէ ձեռով աղքեւ են այդ տեսութիւնների կառուցման և փոփոխման վրայ, որովհետեւ ասում է թէ ինչպէս էլ որ ուզում է առաջ եկած լինի, այսինչ մըտածողը սոյն ըմբռնումների տէրն է և ուրեմն զրանց զարգացումը շարադրելով կարող ենք վերահասու լինել դրա տիրոջ մտայնութեան: Սակայն այս դէպքում մոռացութեան է տրուում մի հանգամանք: Մի մարդուն ըմբռնելը և վերապրելը բոլորովին տարբեր երևոյթնիւր են: Եթէ մենք իրօք ուզում ենք վերահասու լինել որեւէ անհատի ամբողջ կեանքի զարգացման ընթացքին, ապա մենք պարտաւոր ենք ամենից առաջ նրա կենսագրութիւնը, այսինքն նրա ամբողջ կեանքի պատմութիւնը նկատի ունենալ: Որի դէպքում և՛ անհատի չընկալած և՛ միջակայքը, ժամանակաշրջանը, և՛ այն բազմապիսի պատահարները, որոնց նա հանգիպել է իւր կեանքում և որոնք զօրեղ կերպով աղքեւ են նրա այս կամ այն ըմբռնման ծնունդին, այլ և նրա տեսութիւնները, նրա անհատական շնչոյր — այս բոլորը մի վարպետ մարդու կողմից պիտի իրենց միմեանց վրայ ունեցած փոխադարձ կախման մէջ գիտւին ու շարադրւին: Այս երկրորդ ձեւով անձերին հասկանալու դէպքում ուրեմն կենսագրութիւնը և գաղափարները իրենց փոխադարձ կախման մէջ պիտի նկատի առնուին: Վերջ ի վերջոյ, ի հարկէ այս դէպքում մեր իտէալական նպատակն է ամբողջ անհատին խորամուխ լինել, այսինքն նկարագրելիք անձը իբրեւ մի ձուլւած գիտեւ: Երբ արդէն այս նպատակին հասել ենք, այսին-

քըն երբ նրա ամբողջ էութեան գիտակից ենք, ապա նրա մասնակի, այս կամ այն խնդրի առթիւ արտայայտած մտքերը, գործերը իրեւ մասնակի արտայայտութիւններ և օրինակներ կը ծառայեն այդ ընդհանուր կառուցւածքի պարզարանման համար: Ուրեմն գիտաւորն այստեղ կայանում է թէպէտ և շատ դժւարին կերպով, բայց և այնպէս որեւէ անձի հոգու հնոցի մէջ խորամուխ լինելը:

Պիտի նկատել սակայն, որ զուտ գիտական միջոցներով անհնար է, եթէ ոչ շատ դժւար, որեւէ անձն իւր բոլոր հարազատութեամբ ըմբռնել: Այստեղ անհրաժեշտ է մեր հոգու նախազգացութիւնը, որը մի անբացատրելի գիւրադրացութեամբ և կարողութեամբ ի վիճակի է թափանձել ուրիշի հոգու խորքը և նրա բազմապիսի գործերի, գաղափարների մէջ հիմնականը և նրա իսկական էութիւնը վեր հանել: Այստեղ, ինչպէս իրաւամբ նկատւած է, պիտի լինել որոշ չափով գեղարուեստական կարողութիւններով օժտւած, որպէսզի գեղարուեստական սուր աչքերով կարողանանք թափանցել ուրիշի հոգու ծալքերի մէջ, լիակատար վերապրենք նրան և նրա հոգու ամենէն հիմնական տարրը գտնենք: Ինչպէս տեսնուում է, սա մի շատ դժւարին գործ է և վերին աստիճանի ներամտութեան կարօտ, ինչ որ ի հարկէ ամէն սովորական մարդու մօտ չենք կարող գտնել:

Սովորաբար սակայն այսպիսի դժւարին և նրազգաց ճանապարհով չէ որ մենք աշխատում ենք մօտեցնալ անձանց՝ նրանց բնութագրելու համար: Մենք ունինք որոշ պատրաստի նախապաշարած կաղապարներ, օրինակ «բուժուական», «աջակողմեան», «նացի-օնալիստ», «կըղերական» և աշխատում ենք այս ինչ

անձի զոհնազան ժամանակներում արտայայտած մտքերից մէջբերումներ ընել ցուցադրելու համար, որ նրա նկարագիրը իսկապէս մեր վերոյիշեալ մականուններով հարադատօրէն վերարտադրւած է, ինչ որ ինքնատիպութիւն լինելուց զատ նաեւ զաւելտ է։ Այս ձեռով ամէն բան կարելի է ապացուցանել, որովհետեւ իւրաքանչիւր մարդու բազմարտադրական կեանքից կարելի է մի քանի երեւոյթներ կամ արտայայտութիւններ կապակցելով՝ ապացուցանելու սին ջանք ընել, թէ նա այս ինչ բնոյթի տէր է։

Չգայացունց դարձնելու համար մեր ասածը վերջրենք իբրեւ օրինակ հայ առաջաւոր մտաւորականութեան ամենակարկառուն գէւքերից մէկին՝ հանգուցեալ Ս. Զաւարեանին, որն իւր սօյիտ գիտական պաշարով և նկարագրի որոշակի կառուցուածքով աչքի էր զարնում իւր ժամանակակիցների մէջ։ Արդ, եթէ ցանկանք, կարող ենք քմահաճօրէն նրա արտայայտած մտքերից, օրինակ կրօնական խնդրում (արտայայտած էջմիրածնի ռուսահայոց կեդրոնական համադումարում) նրան հայ կեկեցողութեան պաշտպանի մականունը տալ, կարող ենք նրա կեանքի՝ այլ և այլ դրւագոյններից ու խօսքերից եզրակացնելով, նրան անարխիստ, սօցիալիստ, նացիօնալիստ, պաշտպանողական և այլն մականուններով բնութագրել։ Սակայն ինձ կը թւի, թէ այս բոլոր տարրերը նրա էութեան կորովը չեն արտայայտում։ Եւ ինչ որ այդ կողմակերպւած նկարագրի էութիւնն էր այդ բոլոր, նրա գիտակցական ճաց լինելու հանգամանքն էր։ Մենք չորաչար կսխալւինք, եթէ վերոյիշեալ մականուններից իւրաքանչիւրի համար մի չարք փաստեր բերելով, յստակնէք փաստել թէ, նա «ճա

կամ «ձախ» էր։ Այլ և հակառակ բազմիցս պնդած ըմբռնումներին. ինձ թւում է որ մի այլ հայ ակնաւոր մտաւորական, Միքայել Նալբանտեանը, ոչ թէ գիտակցական «բուրժուա» կամ «սօցիալիստ» էր, այլ ապագա սակարգային հայ ազգային մտաւորականներին էր պատկանում։ Ի հարկէ մի այլ մտաւորական կարող է իսկապէս գիտակից բուրժուա կամ պաշտպանողական լինել, սակայն այդպիսի որակման համար մենք պիտի ունենանք ամենէն մանրաշնորհ և անսրկայական կերպով արձանագրւած փաստեր, որոնք առանց մնացորդի պիտի մեզ համոզեն, թէ բուրժուա կամ պաշտպանողական բառը այս պարագային տեղին է գործածւած և ոչ թէ մեզ վախեցնելու կամ չլացնելու համար։ Յարգանքը դէպի այն անձը՝ որը վերարտադրելու յուսակնութիւնն ունինք, այլ և լուրջ վերաբերմունքը դէպի մեր աշխատանքը պահանջում է հրամայականօրէն, որ ոչ թէ մենք կանխօրէն զանազան կաղապարներու տեղենք, զրանց մէջ անձերն ու երեւոյթները մտցնելու համար, այլ անձերի և երեւոյթների ժանրազննին ու վերին աստիճանի զգոյշ ու խնամոտ դիտելուց և ուսումնասիրելուց յետոյ, եթէ մենք որոշ տեսակներ ունենանք, ապա զրանց վրայ միայն յենւած՝ ընդունաւորումներ անենք։ Այսպիսի աշխատանքի մէջ թող մեզ ոգեւորէ մեծ բանաստեղծի խօսքերը, թէ ինչ որ իսկական է, հարազատ, այն միայն կ'մնայ անկործան ապագայ սերունդների համար։

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Հանրային մեծ կազմակերպութեանց՝ ազգերի կեանքում մեծ հետաքրքրութիւն է առաջ բերում ուշադիր դիտողի համար այն հարցը, թէ ի՞նչ պայմանների ու գործօնների ազդեցութեան տակ ազգերի նկարագիրը կազմակերպւում է և ինչպէս նա ժամանակի ընթացքում փոփոխութեան է ենթարկւում: Ըստ ինքեան հասկանալի է, որ հարցի այսպիսի դնելը ըսկիզբից և եթ մերժում է այն տեսակէտը, որպէս թէ զանազան ազգերի ուրոյն անհատականութիւնները ըսկզբից և եթ որոշակի ձևակերպուած և պատրաստի տուեալ պիտի բնդունել: Կասկածից վեր է, որ այժմ ամենաառողջ տեսակէտն այն է, թէ ազգերի անհատականութիւնները պատմական երկարատե իրադարձութեանց արգասիք են, իսկ այդ իրադարձութեանց մէջ անշուշտ որոշ գործօններ, որոնք ստեղծել են այդ անհատականութիւնները, առաջնակարգ և որոշիչ նշանակութիւն են ստանում ու ընդհանուր են բոլոր ազգերին:

Անկասկած է, որ ամենանախնական հասարակութիւնների մէջ, երբ իւրաքանչիւր անհատ ինքնաբաւ է, իրեն անհրաժեշտ կարիքները իւր ընտանիքի հետ հոգում է, ուրիշ խօսքով ասած, նա իւր սնունդը, հագուստը և բազմապիսի այլ պահանջները բաւարարում է, խօսք չի կարող լինել աշխատանքի մասնա-

դիտացման մասին: Իւրաքանչիւր անհատի հոգեկան կեանքը ընդհանուր զծերով նմանւում է իւր համայնակցի կեանքին: Հոգու որոշ չափով կըղզիացումը, այսինքն ինքն իր մէջ ամփոփուելը և իր ապրումների երանգով համայնքից հեռանալը դոյութիւն չունի: Այսպիսի ամենանախնական հասարակութիւնը կարելի է ասել կենցաղակից մարդկանց մի գումար է, այնպէս որ այն ինչ իւրաքանչիւր քաղաքակիրթ հասարակութեան անբաժանելի յատկութիւնն է՝ աստ բոլորովին բացակայում է:

Քալաքակիրթ կազմակերպուած հասարակութիւնը ունի կուլտուրական կառուցուածքներ, օրինակ պետութիւն, իրաւունք, կազմակերպուած տնտեսութիւն, զեղարուեստ և այլն, որը ենթադրում է ո՛չ թէ հասարակութեան անդամների սոսկական գումար, այլ նրանց միմիանց հետ ունեցած շփումներ, այլ և փախադարձ սերտ կախումն և փոխազդեցութիւններ: Փշտտանքի բաժանմամբ սակոյն, այսինքն երբ հասարակութեան որոշ մասը մի առանձնայատուկ մասնազիտութեան է նուիրւում, սկսում է հասարակութեան նախկին կառուցուածքի քանդումը և դրա հետ միասին նաև վերանում է հանրային կեանքի ու անհատների հոգեկանի միօրինակութիւնը: Իւրաքանչիւր մասնազիտութիւն բերում է իւր հետ ապրելակերպի, մտածելակերպի, հաճոյքի որոշ եղանակներ, որոնք տարրերում են միւս մասնազիտութեան տէր անձանց ապրելակերպից, մտածելակերպից և ինչքան մի անձն իւր կարիքների նուազագոյնն է հայթայթում, այնքան բնականօրէն նա կարիք ունի այլ անձանց, որպէսզի նրանց աշխատանքից օգտուելով՝ կարողանայ իւր բո-

լոր կարիքներին բաւարարութիւն տալ: Այստեղից առաջանում է հասարակութեան անդամների փոխադարձ չփման և փոխադրեցութեան հնարաւորութիւններ, որոնք և ստեղծում են այնպիսի կոլտուրական արժէքներ, ինչպիսին պետութիւնն է, իրաւունքը, եկեղեցին և այլն: Ուրիշ խօսքով ասած, ստեղծում են արժէքներ, որոնք անխման և անհատկանալի կլինէին, եթէ հասարակութեան իւրաքանչիւր անդամը իրեն համար կղզիացած ապրէր: Հասկանալի է, որ այս հասարակական արժէքները հասարակութեան իւրաքանչիւր անհատի բարձրագոյն կոլտուրական կարիքները բաւարարելու համար են ստեղծւած: Հասարակութեան բաղկացուցիչ անդամների զարգանալով, փարթամանալով, այդպիսի անդամներից բաղկացած հասարակութիւնն ինքը ներկայանում է իրրե մի բարդ անհատականութիւն, որն իւր տրամագրութեան տակ գտնուած բոլոր միջոցներով իւր հերթին նպաստում է իւր բաղկացուցիչ անդամների անհատականութեանց զարգացման:

Յատկապէս հանրային կեանքի անտեսական գործօնը առաջնակարգ նշանակութիւն է ունեցել և ունի աղբերի անհատական կառուցուածքի զարգացման, բարդաւածման համար:

Աղբի զարգացման իւրաքանչիւր փուլը ուսումնասիրելիս պիտի անպայման նկատի առնել, ի միջայլ նշանաւոր գործօնների, նաև տնտեսականը և ինչքան մօտեցնում ենք վերջին դարերին, այնքան էլ այդ գործօնի որոշակի ձեւակերպող նշանակութիւնը զօրեղանում է հանրային կեանքում: Այնպէս որ որեւէ բնականոն զարգացում ունեցող աղբի կեանքը ուսումնասիրելիս, երբ մենք հետադարձում ենք նրա կազմա-

կերպման ու զարգացման աստիճանը, պիտի ուշադրութեան առնենք նաև այն հանգամանքը, թէ ի՞նչ տիպի աղբեցութիւն ունի նրա կեանքի վրայ նրա տնտեսութիւնը և օրա փոփոխութիւնները: Օրինակ միջնադարեան տնտեսութիւնը բոլորովին այլ կերպ է ազդում հասարակութիւն կազմող անձանց հոգեկանի վրայ քան նոր դարու տնտեսութիւնը: Նոր տնտեսութեան աղբեցութիւնը աշխատում է քանդել մեր հոգու նախկին կառուցուածքը և նրա տեղ նորը դնել: Եւ այսպէս շարունակաբար մարդկային կեանքի բազմապիսի դարաշրջաններում, երբ տնտեսութեան մի ձև փոխարինում է միւսին, վերջինս անպայման իւր նոր դրոշմն է դնում հանրային կեանքի նոր ձեւակերպման՝ ուրեմն և անհատների հոգեկանի նոր կերպաւորման վրայ: Յատկապէս փողային շրջանառութեան շնչուած դերը նոր դարաշրջանում շատ զգալի կերպով նպաստում է հասարակութեանց ուրոյն ձեւակերպման: Այս հանգամանքը պարզ դարձնելու համար կարելի է համեմատել երկու հասարակութիւններ, որոնցմէ մէկը դրամական շրջանառութեան խիստ զարգացած շրջանումն է գտնուում և միւսը, որը դեռ կէս միջնադարեան կենցաղ ունի: Մենք նկատում ենք, որ երբ դրամն է չափանիշը հասարակութեան անդամների առօրեայ յարաբերութեանց, նա սոսկալի կերպով ազդում է բնաւորութիւնների չորացման, նրանց հոգեկանի լարման և սեւեռման: Յատկապէս երբ կոլտուրական մեծ քաղաքներում կեանքի վերին աստիճանի սլոթիւնը, գոյութեան պայմանների վերին աստիճանի դժուարին լինելը, հաց վաստակելու ծանրութիւնը միանում են, այդպիսի պայմաններում ապրող անձին ստիպում են

հողեկան կեանքի այլ կողմերը, օրինակ զգացումայինը, յետ վանել և ապրելու կամքի ուժեղացման նպաստել, զուտ հաշիւ վրայ խորհող եսը հանդէս բերել, որը եթէ չէ ուզում սովամահ տանել իւր ընտանիքը, ամբողջ օրը հողեկան սոսկալի սեւեռմամբ և կեղորոնացմամբ պիտի իւր օրապահիկը հայթայթէ և վաղուայ համար հոգայ Հասկանալի է թէ նման կենցաղը ինչպէս պիտի ազդէ հասարակութեան անդամներին կամքի սոսկալի զօրեղացման, որովհետեւ թոյլ, անձեռնբէջ կամքը չի կարող ապրիլ նման պարագաներում:

Գոյութեան այսպիսի պայմաններին առաջացած զօրեղ կամքի հետ ո՛չ պակաս սրանում, նրբանում և սեւեռնում են մեր դիտողական, մտածողական կարողութիւնները: Թոյլ դիտող, մտածող և գատող մարդը հասարակական կեանքի զարգացման բարձր աստիճաններում ամենալաւ պարագային ամենաշեւտին տեղը կարող է գրաւել: Ով որ զինւած չէ քաղաքակրթութեան վերջին պահանջներով և կուլտուրական արժէքներին լիապէս չէ օգտուում, նա անշուշտ թշուառութեան է մատնւելու:

Հիմի եթէ համեմատելու լինինք նման զարգացման հասարակութեանց կենցաղը միջնադարեան կենցաղի հետ, իսկոյն հակադրութիւնը զգայացունց կը լինի: Մինչդեռ մի դէպքում փողային յարաբերութիւնները մեր կեանքը ժամացոյցի պէս լարում են և մեր հոգին ամենաբարձրագոյն կենդրոնացման միջոց, միւս դէպքում, կեանքի պայմանների դիւրութեան պատճառով, ծուլութիւնը, քէֆանիլը, ուտել խմելու առաջնակարգ նշանակութիւն ստանալով, կամքի, տեսնելու, գատելու և մտածելու կարողութեանց թուլութիւնը չափազանց աչքի է զարնում: Բնական է, որ այս դէպքում չը-

պիտի կարծել թէ յետամնաց քաղաքակրթական պայմաններում ապրողը ի ծնէ այդպէս է, այլ որովհետեւ նրան շրջապատող հասարակութեան, որի մի անդամն է նա, կեանքը համեմատաբար նախնական լիակամ, չի նպաստում իւր մէջ ապրող անձանց նկատարարի որոշակիութեան, վճռականութեան և կենցաղի լարածութեան: Ուրեմն եթէ այս յետամնաց հասարակութիւնը ժամանակի ընթացքում առաջադիմէ, սարակութիւնը ժամանակի ընթացքում առաջադիմէ, բնականօրէն և՛ նա կը լինի տէրը այն բոլոր յատկութեանց, ինչ որ որ ունին արդի առաջադէմ հասարակութիւնները:

Անշուշտ անտեսական գործօնը միակը չէ ո՛չ նոր դարաշրջանների ստեղծելու խնդրում, ո՛չ էլ նրանց ձեւակերպման և զարգացման խնդրում: Կան նաև այլ գործօններ, որոնք պատմական անցիակում և այժմ ևս զօրեղ ազդել են և ազդում են հասարակութիւն կազմող անձանց հոգեկան կեանքի կազմակերպման վերայ: Անկասկած է, որ ազդերի զարգացման, անհատաբայ, Անկասկած է, որ ազդերի զարգացման, անհատաբայ, կանացման համար, վաղեմի ժամանակներից սկսած, աշխարհագրական դիրքը խոշոր դեր է խաղացել: Յայտնի է, որ ծովերն ու գետերը բազմապիսի դիւրութիւններ են տւել նախնական ազդերին՝ վաճառականութեան զարգացման տեսակէտից: Այս տեսակէտից իրաւամբ նկատում է Ռեմանը, որ աշխարհագրութիւնը պատմութեան էական գործօններից մէկն է: Գետերն են առաջնորդել ցեղերին, իսկ լեռները նրանց դադարեցնել: Առաջինները նպաստել են պատմական շարժման, իսկ վերջինները խանգարել: Գետերի և ծովերի ընձեռնած դիւրութեանց հետեանքն այն է լինում, որ տարբեր ժողովուրդները, տարբեր իրենց կենցաղով և ըմբռնումներով, յաճախակի և

փոխադարձաբար միմեանց հետ չլուծւմ են, իսկ ուր յաճախակի չփռւն կոյ, այնտեղ բնականօրէն առաջ է գալիս միմեանցից նոր արժէքներ սովորելու, ընդօրինակելու, ըմբռնումների նոր հորիզոններ ընդգրկելու երևոյթներ, իսկ իրրեւ արդիւնք այս բոլորի է՝ մարդու հոգեւ լերին աստիճանի կղզիացած դրութիւնից դուրս գալը և համամարդկային արժէքների իւրացումը։ Մինչդեռ մեկուսացած նախնական հասարակութիւնները կարծուս են կարճամտօրէն, թէ աշխարհքը իրենցով է սկսել և իրենցով էլ պիտի վերջանայ ու բնականաբար ինչ որ իրենց է պատկանում այն է ամենալաւ բանը։ Զանազան և իրենց բոլորովին հակոտնեայ ժողովուրդների, ազգերի հետ մշտական յարաբերութեան մէջ մտնելով՝ մարդիկ թողնում են իրենց նախապաշարւած կանխասիրութիւնները և իրենց արտառոյց ըմբռնումները ոչ միայն հարթւում, կոկւում են, այլ և նոր տեսակէտներ, կեանքից ունենայիք նոր պահանջներ են առաջ գալիս։ Բնականաբար այս եղանակով հոգեկան լաղելի գծերը, որոնք միացած են դանդաղկոտութեան, սոսկալի աւանդապաշտութեան, կենցաղի միօրինակութեան, ծուլութեան և այլնի հետ, պիտի անհետանան և նորանոր դրդիւններ ստանալով՝ մարդկանց հոգին պիտի աւելի կեդրոնացած, ամփոփւած, շարժուն, ձեռներէց և կայտառ դառնայ։

Նոյնպէս երկաթուղային հաղորդակցութիւնը, որ համեմատաբար նոր ժամանակների արդասիք է, մեծապէս նպաստում է զանազան երկրների բնակիչների յաճախակի հանդիպման և ունի ծովերի, գետերի առաջացրած բոլոր վերոյիշեալ արդիւնքները՝ ազգերի հոգեկան կազմակերպման վերաբերեալ։ Յատկապէս

միեւնոյն ազգութեան պատկանող զանազան ցեղերի մէջ ընդհանուր ազգային զգացմունքի և բովանդակ առաջ գալուն հօրապէս նպաստում է այս եղանակով յաճախ միմեանց հանդիպիր, միմիանց հարազատ լինելու հանգամանքը զգայալունց կերպով նկատելը։ Տնտեսական կապերով երբ միեւնոյն ազգի տարբեր ցեղերը միմիանց մօտենում են—հաղորդակցութեան միջոցների դարգացած լինելու պատճառով—նրանք սկսում են իրենց ունեցած ընդհանուր ազգային գծերը շեշտել։ Պիտի նշեմ, որ ինչպէս որ միեւնոյն ընտանիքի անդամները, երբ սրանք երկար ժամանակ միմեանցից անկախ, հեռու և տարբեր պայմաններում են ապրում, գրեթէ օտարանում են միմեանց հանդէպ և շատ թոյլ կապերով են այլևս միմեանց պատկանելիութիւնը զգում, նոյնպէս և մի ազգութեան տարբեր հատւածները, եթէ ապրում են մեկուսացած, իրենց առանձնայատուկ բարքերով ու ըմբռնումներով, նրանց մէջ շատ թոյլ է ընդհանուր ազգային գիտակցութիւնը ու զգացմունքը և ընդհակառակը յաճախակի տեսակցելը և դրանից առաջացած փոխազդեցութիւնները, զանազան ցեղերի առանձնայատուկութիւնները հարթելով, աւելի ընդհանուր ազգային հանգամանքն է ցուցադրում։

Ի հարկէ ազգութեան ուրոյն քաղաքական մարմին ունենալը կամ առնւազն նոյն պետութեան ենթարկւելը զգալապէս նպաստում է այդ ազգային զգացմունքի և գիտակցութեան բարգաւաճման և դարգացման։ Գերմանական պատմութեան ծանօթ անձը դիտէ օրինակի համար, թէ ազգային զգացմունքը այնտեղ ինչպէս զօրեղ կերպով յաղթանակեց վաղեմի ժամանակներից արմատացած տարբեր ցեղային զգացմունքներ-

րը՝ ոկոսած գերմանական մաքսային միութիւնից և ապա այդ շարժումը իւր գաղաթնակէտին հասցրած գերմանական տղգային պետութեան ստեղծմամբ։ Մեղենից իւրաքանչիւրը խորը ցաւով զգում է թէ տաճկահայի ու ուստահայի բազմապիսի տարիների գրեթէ անջատ կեանքը ինչպիսի հակայական հարւած է այդ երկու հատւածների ընդհանուր աղգային զգացմունքի և բմրոնումների գոյութեան ստեղծման համար։ Կասկածից վեր է, որ տասնեակ տարիներ շարունակ միայն մի փոքրիկ խաւ, այն էլ ամենաբարձր ինտելիգէնտ դասը, հնարաւորութիւն է ունեցել վայելելու միաժամանակ երկու հատւածներում ստեղծադրուող կուլտուրական արժէքները, բայց հայութեան հոծ մեծամասնութիւնը անտեղեակ է եղել սահմանի միւս կողմը ստեղծւած արժէքներին և բնական է որ ամենազիւրիւն ճանապարհով վայելել է միայն այն, ինչ որ սահմանի մի կողմում իւր բարբառով կերտել է։

Ազգերի կեանքում զարգացման ամենամեծ խնթաններինցն է անշուշտ նրանց տարածական և ժամանակային հորիզոնի ընդլայնումը, այսինքն երբ ազգերն ի վիճակի են տեղեակ լինել, թէ ուրիշ վայրերում ի՞նչ տարբեր ժողովուրդներ, ցեղեր, ազգեր են ապրել և այժմ էլ ապրում են, թէ նրանք ինչպիսի կենցաղ ունեն և ինչ նոր արտադրութիւններու կեանքի միջոցներ ունեն, որոնք մեր ունեցածից տարբեր են։ Բացի այս տարածական հորիզոնի ընդլայնումից, հակայական նշանակութիւն ունի ապագայի զարգացման համար նաև ժամանակային հորիզոնի լայնացումը, երբ մենք ի վիճակի ենք հետևելու ո՛չ միայն մեր, այլ և զանազան այլ ազգերի անցեալ ժամանակ-

ներում ունեցած քաղաքակրթութեանց բովանդատութեանց, նրանց առանձնայատուկ բնոյթին, նրանց յուզող հարցերին և իտէայներին, նրանց զարգացման ու անկման պատճառներին։ Ծանոթութիւնը և համեմատութիւնը զանազան ազգերի ունեցած կուլտուրաների յայտնի է, որ մարդու, ինչպէս և՛ ազգերի հոգին լայնացնում է, լուսաւորում և հեռու պահում երեւոյթական և անցողակի երեւոյթները հանրային կեանքի՝ մնայուն գէպքեր նկատելու։ Այս խնդրում պատմականօրէն մեծ նշանակութիւն է ունեցել, բացի նոր աշխարհի յայտնաբերումից, անշուշտ գրեթէ զիւտը, ապա տպագրութեան զիւտը, թերթերի տարածումը և այլն։ Սրանց միջոցով հնարաւորութիւն է տրուում քաղաքակրթութիւնը անվթար կերպով ապագայ սերունդներին փոխանցել և նրանց սեփական կանոնութիւնը զարձնել, ուրեմն և՛ նրանց հոգեկան պաշարը հարստացնել։ Թէ հայ ազգի աղգային գիտակցութեան արթնացման համար ինչպիսի խոշոր նշանակութիւն է ունեցել գրերի զիւտը և սրան յաջորդող մեր մատենագրութեան ոսկէ դարը — աւելորդ է այստեղ այդ հանրածանօթ իրողութեան վրայ կանգ առնել։ Յատկապէս 19րդ դարում, երբ լուսաւորութեան տարածման ջնորհիւ հասարակութիւնը իրապէս սաների մէջ, ազգի հոծ մեծամասնութիւնը իրապէս մասնակցում է հայրենի կուլտուրայի վայելման մէջ, դա անգնահատելի կերպով նպաստում է աղգային գիտակցութեան և անհատականացման զօրեղացման։ Ինչպէս որ մի անդարդացած անհատ, որն իւր հոգեկան բովանդակութեան գիտակից է, չդիտէ թէ այդ բովանդակութիւնը ի՞նչ զարգացման աստիճաններ է

ուռնեցել, նա չուներ իսկապէս և՛ իւր անհատական քաղաքակրթութեան գիտակցութիւնը, ուրեմն և չկարող դա անհրաժեշտօրէն դրոշմել իւր ստեղծագործութեանց վրայ: Եւ ընդհակառակը, ինչքան նրա հոգեկան բովանդակութիւնը բարդանում է, ինչքան նրա հոգու կարողութիւնները լիակատար ծաւալուած են, այնքան էլ նա իւր հոգեկան արտայայտութիւններում անհատական իւրայատկութեան դրոշմն է դրնում: Նոյնն է տեղի ունենում և՛ ազգային անհատականութեանց հետ: Հոգեբանօրէն գիտած՝ ազգային ինքնագիտակցութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգութեան պատկանող անձանց ժամանակաւոր, անցողակի պատկերացումների միացումը աւելի մնայուն պատկերացումների հետ, որոնք առաջ են եկել ազգութեան ընդհանուր անցեալի հոգի վրայ: Եւ ինչպէս որ անհատականութեամբ օժտուած մի անձի մօտ նրա բոլոր ապրումները միութեան են վերածուած, և նրա իւրաքանչիւր գործում նրա ամբողջ էութիւնն է հանդէս գալիս, նոյնպէս և՛ ազգային անհատականութիւնը, որը պատմական պրոցէսում կերտուել է, իւր իւրաքանչիւր ստեղծագործական ակտի մէջ, եթէ նա չէ անդամալուծուած օտար օյժերից, ազգութեան ամբողջ անցեալն ու ներկան օրդանապէս շարկապուած մարմնացնում է:

Ազգի տղէտ ու թերուս անդամները ո՛չ գիտակցութիւն ունին իրենց արժանաւոր նախահայրերի քրտնաջան աշխատանքների, ո՛չ իսկ կարող են իրենց ներկան իբրեւ տրամաբանական շարունակութիւնը անցեալ պատմութիւն նկատել ուրիշ խօսքով ասած, ազգային միութեան և դրա ըստեղծած քաղաքակրթութեան գիտակցութիւնից զուրկ

են: Միայն երբ ազգութեան հոծ բաղմութիւնները լուսաւորութեան տարածման շնորհիւ, ի վիճակի են վայելելու իրենց պատմական և ներկայ կոլտուրական արժէքները, երբ նրանք իրենց հարազատ անցեալին լիակատար իրազեկ են, այլ և գիտակից են իրենց անցեալի ու ներկայի սերտ կապին — նրանց մէջ առաջ է գալիս պայծառ գիտակցութիւնը վերոյիշեալ հարազատ արժէքների ձևի և բովանդակութեանց և կամք՝ այդ իբրեւ սրբութիւն յարատեւ պահպանելու ու բարգաւաճելու: Ապացոյց ասածիս կարող է ծառայել այն, որ այն արեւելեան ժողովուրդները, որոնց մէջ գեղ լուսաւորութեան գործը խորը ակօսներ չէ փորել, ամենալաւ պարագային ցեղային յարակցութեան թոյլ գիտակցութիւնն ունին, դուրս է բնազդօրէն զուտ են միեւնոյն ատաղձից բաղկացած լինելը, բայց երբեք չեն գիտակցում լուսապայծառ կերպով իրենց ազգային ատանձնայատկութիւնը: Այս պատճառով էլ բացարձակ տգիտութեան ապացոյց է, երբ մեր հրապարակագրութեան մէջ յաճախակի հաճ պնդում ենք հայ ազգի վերաբերեալ «ցեղ» արտայայտութեան «ցեղի կամք», «ցեղի կենսունակութիւն» մինչդեռ, ինչպէս յայտնի է, ցեղական վիճակը հայութիւնը վաղուց անցել է և ազգութեան ամենայատկանշական կէտին՝ ազգային ինքնագիտակցութեան է հասել ու ազգային կամքի տէր է, որն ի գին բազմութիւն զոհողութեանց, տրուած վերջին տասնամեակներում, ազատ և գոյութեան բարձր պայմանների տակ ապրելու համար ձեւակերպուած պահանջներ է դրել և դրա համար պայքարել:

Անկասկած է, որ պատմական ուրոյն իրադարձու-

թիւնները, որ ունեցել է ազգութիւնը, իւր երկարատե անցեալի ընթացքում, նոյնպէս իրենց զօրեղ գրոշմն են դրել ազգային նկարագրի կազմակերպման վրայ: Այդ պատմական իրադարձութեանց պատճառով մի ազգ բաղմապիսի յարաբերութեանց մէջ է գրուած եղել իրեն հարեան կամ հեռաւոր ազգերի հետ, իսկ այդպիսի յարատե յարաբերութիւնները իրենց հերթին նոյնպէս նպատուած են ազգային մեկուսացումից հրաժարուելուն և միջազգային արժէքների, դադարների, ստեղծուելուն ու տարածուելուն, եւ ինչ խօսքով ասած, համամարդկային կուլտուրական ըմբռնումներ են հանդէս գալիս, որոնք ձուլուելով մի ազգի առանձնայատուկ ազգային ստեղծագործութեանց հետ վերջիններիս ազնուացման են նպաստում: Ի հարկ է առ բոլորի համար նախապայման է այն ակնյայտ փաստը, որ քաղաքակիրթ ազգերը առանձնացած կերպով չէ որ իրենց ազգային կեանքն ու արժէքները կերտում են, այլ յաճախակի շփման մէջ լինելով միեւն ազգերի հետ, այդ շփման մէջ է զարգանում թէ իրենց ազգային կեանքը և թէ իրենց ազգային կուլտուրական արտագրութիւնները:

Ուրեմն մի որեւէ ազգի ուրոյն անհատական գծերի մէջ պիտի զանազանել նոցա, որոնք ընդհանուր են առհասարակ նոյն քաղաքակրթութեան աստիճանի վրայ գտնուած ազգերին: Իսկ այդ ընդհանուր գծերի մէջ, որոնցով օժտուած է այսինչ որոշ ազգը, որովհետեւ վերջինս այս որոշ միջավայրումն է ապրել, որոշ պատմական իրադարձութիւններ միայն նրա հետ են պատահել, առաջ են բերել դարերի ընթացքում յատուկ ձևեր և՛ ըմբռնման, և՛ զգացման և՛ կեանքի եղանակների: Ահա այս յատուկ ձևերը փոխանցուելով սերնդ-

դէ սերունդ, դարձել են տուեալ ազգի ամենէն անկապտելի և հարազատ ժառանգութիւնը, որի մէջ անխուսափելիօրէն պիտի մտնէ իւրաքանչիւր ազգային ստեղծագործութիւն, եթէ նա իսկապէս ազգային կուլտուրայի մասըն է ուղում կազմել:

Անշուշտ, ինչքան էլ մենք կամենանք ազգային նկարագրի մէջ որոշակի դատել և՛ ուրոյն միջավայրը, և՛ ուրոյն պատմական իրադարձութիւնները, և՛ դարգացման աստիճանը (հոգեկան ու տնտեսական), դարձեալ կմնայ իրրեւ աներեր այն երեւոյթը, որ ազգի աստղը եւ որոշ նշանակութիւն ունի նրա անհատական կառուցածքի և ստեղծելիք գործերի համար, այնպէս որ արդեօք եթէ թուրքերը լինէին յոյների տեղ, բոլորովին նոյն կլիմայական, պատմական միջավայրում, նրանք ի վիճակի կլինէին կերտել յունաց կուլտուրան — ես վերին աստիճանի կասկածում եմ: Մինչև այժմ զեռնասայի խնդիրը հասարակադէտների կողմից կարելի է ասել, իւր բարդութեան պատճառով վերջնականապէս չէ վճռւած, բայց և այնպէս կասկածից վեր է, որ ի միջի այլ գործօնների նա ևս որոշ դեր է խաղում զանազան ազգերի քաղաքակրթութեանց գունաւորման և առանձնայատկութեանց մէջ:

Սակայն այն գործօնները, որոնք առաջացնում են ազգային նկարագիր և անհատականութիւնը, կարող ենք մենք ի հարկէ դատել՝ վերլուծելու համար սակայն հարազատ իրականութիւնը ըմբռնելու համար անհրաժեշտ է նկատի առնել և չեղտել, որ նրանք իրականի մէջ ո՛չ թէ անկախ-անկախ գոյութիւն ունեն և մէկը միւսի յետևից է ներգործում ու առաջ բերում ազգային անհատական նկարագիրը, այլ վերջի-

ներս նրանց միմեանց վրայ ունեցած միաժամանակեալ փոխադարձ ազդեցութեանց արդիւնքն է, ուրիշ խօսքով ասած, մի որոշ երկրամասում, որոշ ատաղձով օժտւած ժողովուրդ, որոշ պատմական իրադարձութիւններ ունեցած, որոշ քաղաքակրթութեան աստիճանին հասած ազդութիւն այս ինչ տիպի ազգային անհատականութիւն է ցուցադրուած: Ըստ ինքեան հասկանալի է, որ ինչքան նման ազդութիւնը զարգանայ, կատարելագործւի, այնքան էլ նրա անհատական գունաւորումները, և շեշտը կ'նրբանան ու ըզրայացունց կ'դառնան:

Այսպէս ամենէն գեղեցիկ տեսարանն է ներկայացնում, երբ համեմատում ենք մի վերին աստիճանի զարգացած ազգային քաղաքակրթութիւն՝ համեմատաբար յետամնաց տիպի քաղաքակրթութեան տէր ազգի կամ ազգերի հետ: Յատկապէս նկարչութեան և գեղարեստական դրականութեան ասպարէզներում, որոնք իրենց նրբութեամբ ի վիճակի են որ և է ազգի ամենէն նուրբ հոգեկան դժերը ցուցադրելու, դերմանական ականաւոր պատմաբան Կարլ Լամպրեխտը երկար ժամանակ Լայպցիկում, իւր հիմնած դիտական ինստիտուտ, նւիրուած կուլտուրայի և համաշխարհային պատմութեան, ուսումնասիրութիւններ էր կատարում և ի յայտ է գալիս, որ համեմատաբար յետամնաց կուլտուրայի տէր մի ազգ, ինչպիսին է օրինակ Չինաց ազգը, նկարչութեան մէջ, այլ և գեղարեստական դրականութեան մէջ, զեռ ճիպի զաղափարին է հասել, ուրիշ խօսքով ասած, նկարում են ոչ թէ զուտ անհատական որոշ նկարագրով օժտուած անձնաւորութիւններ, այլ այս ինչ տիպի անձինք, այսինքն որոշ ընդհանուր յատկութիւններով օժտւած անձինք:

որոնք միմեանց բնականաբար շատ նման են: Նմանապէս գրականութեան մէջ նկարագրւած անձինք ընդհանուր տիպեր են: Ուրեմն Չինացոց մօտ դիտող աչքը զեռ այն շատիճանի նրբութեան, սրութեան չէ հասել, որ անհատական նկարագրի նրբութիւնները տեսնէ և ցուցադրէ և ընդհակառակը նա շատ դիւրին կերպով կարող է բացայայտ եկող և մի շարք անձանց մօտ գոյութիւն ունեցող ընդհանուրը, տիպականը դիտել և նկարել կամ նկարագրել: Ուրեմն այս ազգը մինչև որ մի Ռեմբրանդ արտադրէ, զարգացման ինչ աստիճաններ պիտի անցնի, որպէսզի կարողանայ անձանց, իրերի և երեւոյթների անհատական շեշտը դիտել ու վերարտադրել: Բնական է, որ կուլտուրայի միւս կողմերն ևս՝ կրօն, իրաւունք, տնտեսութիւն, պետութիւն և այլն չեն կարող շատ զարգացած լինել նման ազգի մօտ:

Մենք արեւելցիներս փորձով իսկ գիտենք, թէ Մօլլա Նասրէֆինի առակները կամ նման պատմաժանրեր արեւելքում ինչքան տարածւած են: Նման միօրինակ պատմաժանրերը կարող են համեմատաբար անշարժ, օրից օր անփոփոխ ապրող, գոյութեան պայքարի քիչ հոգսերով տառապող, ծոյլ և ընդարմացած հասարակութեան անդամներին բաւարարել: Նոյնպէս արեւելեան ժողովրդական երգերը իրենց միօրինակ կրկնող մօտիւններով բացարձակապէս վերոյիշեալ հոգեբանական հողի վրայ են կառուցւած և ուրովհետեւ արեւելին, անգամ ամենից զարգացած, ուսեալը, առաջադէմը, իւր հարազատ էութեամբ ու բնազդներով դարձեալ արեւելցի է, նրա համար կրկին թանկագին են այդ միօրինակ ժողովրդական երգերը: Թող ինձ

Թոյլ տրւի աստ յիշատակել, որ լեր արդի ականաւոր բանաստեղծներից մէկը մի օր, մեր ներկայութեամբ, անկեղծօրէն արտայայտուեց, որ իրեն համար շատ տւելի հարազատ է պարկապուկ կոչւած արեւելեան հրնաւորը երաժշտական գործիքը, քան դաշնաժութն ու նման կատարելագործւած երաժշտական գործիքները։ Արդ՝ արեւմտեան քաղաքակրթութեան տէր մի անձի կամ անձանց համար, որոնց նկարագիրը կեանքի զրծաւարութեան, հաղորդակցութեան միջոցների և արդիւնաբերութեան զարգացման, նախահայրերից դարերով ժառանգած կիրթ հակումների պատճառով, անհամեմատ շարժուն, կենսաթրթիւ, ձեռներէջ, որոշակի վճռական է դարձել, այլ և որի գիտողական, մրտաճողական կարողութիւնները վերին աստիճանի նրբացել են, ինչպէս կ'սրող է բաւարարւել միօրինակ ժողովրդական երգերով կամ ընդանուր տիպիկ վերարտադրութիւններով նկարչական կամ գրական ասպարէզներում։ Ի հարկէ այստեղ ի նկատի ունենք ազգի մեծամասնութիւնը ու սրա կուլտուրական ճակարդակը և ոչ թէ առանձնակի անհատները, ինչպէս որ մենք գիտենք, որ որպէսզի որեւէ ազգ բարձր քաղաքակրթական արժէքներ ստեղծէ կուլտուրայի զանազան ասպարէզներում, պիտի նրա զարգացման մակարդակը նոյնպէս բարձր լինի, լինի դա իրաւունքի, տնտեսութեան, պիտութեան և այլն բնագաւառներում։ սակայն այս հանգամանքը չէ խանգարում, որ որեւէ նոյնիսկ համեմատաբար յետամնաց ազգերի մէջ հանդէս գան օրինակ մարգարէներ կամ այլ վերին աստիճանի խտացած հոգեկանի և առանձնակի ուժեղ կարողութեանց տէր անձինք, որոնք իրենց ներքին արժէքները տրամա-

րանական զարգացման և հասունացման հասցնելով՝ համամարդկային քաղաքակրթութեան մէջ տեղ բռնեն։

Արդ՝ զարգացած ազգութեան գիտողական և մրտաճողական կարողութեանց նրբանցման հետ նաեւ կամքը ստանում է ոյժ, լարածութիւն և յարատեւութիւն։ Վերոյիշեալ գիւտարին պայմաններում գոյութեան պայքարի մէջ յաջողութեւ համար նա անհրաժեշտօրէն մղւում է ազգի գիտակից հոծ խմբակցութիւնների՝ սեղմւած շարքերով անսայթաք նպատակադրածին հասնելու։ Պայծառ գիտակցութիւնը գոյութեան բարձր պայմանների և սրանցից զրկւած լինելը անսահմանօրէն լարում է պայքարի թափը և որոշակի զանազանում պայքարող կողմերին։ Յետամնաց ազգերի մօտ նման պայքարներ կարող են տեղի ունենալ, դուցէ և աւելի մոլեռանդ կերպով տարւին, սակայն նրանց յարատեւ լինելը ասպնջուած չէ, որովհետեւ նրանց մօտ կամքի յարատեւ լարումն և սիստեմաթիկ գործունէութիւն տեղի չի ունենում։ Աւելորդ է կանգ առնել այն հանգամանքի վրայ, որ յետամնաց հասարակութիւններում, որովհետեւ լուսաւորութիւնը չէ թափանցել ազգի բոլոր խաւերի մէջ, այդ պայքարները չեղելով իրենց հանրային նպատակներից, յաճախ որոշ զօրեղ անձնական տրամադրութեանց ու նրապատակների են ծառայեցւում, ի հարկ է սքողւած եղանակով։

Հոգեբանօրէն իսկ նկատւած վաստ է, որ ուր կամքն է իշխում, այնտեղ որոշ անջրպետ կայ մարդկանց մէջ, յարաբերութեանց որոշ չորութիւն է առաջնութեւ, իսկ ուր զգացումներն են իշխում, այնտեղ այդ անջրպետը վերանալով, մարդիկ միմեանց մօտ են

զգուժ : Այս է պատճառը , որ մենք զեզուսն զգացումնս-
րով օթաւած արեւելցիներս արեւմտեան հասարակու-
թեան մէջ մեզ լիակատար ձուլած չենք զգում և ընդ-
հակառակը որոշ խորթութիւն ենք զգում : Յատկապէս
արեւմտեան կեանքի մեքենական լարւածութիւնը և
կազմակերպութիւնը մեզնից անսահման էնէրգիա է
պահանջում յարմարելու այդ միջավայրին , մինչդեռ
մեր հարազատ միջավայրում , առանց այդպիսի հազար
ու մի ճիգ ու ջանքերի , ապրում ենք օրը օրին դիւ-
րութեամբ և մեր աշխարհի բարիքները վայելելում :

Բայց և այնպէս մեզ համար անշուշտ գրաւիչ է
այն պատկերը թէ ինչպէս առաջաւոր քաղաքակրթու-
թեան տէր ազգերը իրենց ազգային արժէքների պահ-
պանման ու բարգաւաճման համար հանդէս են բերում
այն զօրեղ , վճռական թափը , որը յատուկ է առհա-
սարակ նրանց նկարագրին : Յատկապէս հայ երիտա-
սարգութիւնը , որն իր անմխիթար գոյավիճակից եր-
բէք զոհ չէ եղել և միշտ աչքը դէպի արեւմուտք է
դարձրել՝ նոր հորիզոններ ընդգրկելու համար , ժրա-
ջանօրէն ուսանելու է գիտակցութեամբ լուսավառւած
այդ աննկուն կամքի ստեղծագործութիւնները , որպէս
զի ապագայի լուսողոյն օրերին դրանց , մեր հայրենի
երկրի պայմանները թոյլադրած եղանակներով , մար-
մնացնէ հայ հայրենիքում :



ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մարդկային հոգու ամենէն հիմնական զծերիցն է՝
կամ խորասուզուիլ երեոյթների ու իրերի խորքին
մէջ և նոցա դոյութեան իմաստը փնտռելու ֆանալ և
կամ այդ երեոյթներն ու իրերը իրենց ամենապարզ
բաղադրիչ տարրերի վերածել ու ուրաւ այդ տարրերը
յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձնել : Այս եր-
կու տիպի վերաբերմունքը դէպի նոյն իրականութիւ-
նը թէպէտեւ տրամաբանօրէն միմեանց չեն հակասում ,
և ընդհակառակը միմիանց լրացնում են , բայց իրա-
կանին մէջ սակաւ է պատահում , որ մի անձնաւորու-
թիւն լիակատար կերպով այդ երկու հոգեկան տրա-
մադրութիւնների տէրը լինի : Կասկածից վեր է սա-
կոյն , որ ամենախիստ ընդհանրացումներն անգամ , և
թէ նրանք յառկապէս արդի դրական քաղաքակրթու-
թեան ժամանակաշրջանում , բոլորի կողմից ընդուն-
ուելու յաւակնութիւններ են ցուցադրում , պիտի
հիմնուած լինին իրականութեան և անձերի ամենաու-
րազնիւն ուսումնասիրութեանց վրայ , որովհետեւ այ-
լապէս նրանք կը մնան լոկ մտքի մարդանքներ , գու-
ցէ և՛ արգասաբեր ներշնչումների աղբիւր կը դառնան ,
բայց երբեք մեզնից չեն կարող կորզել այն խորին
յարգանքը , որ մենք տածում ենք դէպի իւրաքանչիւր
հիմնաւոր , ժամանակակից գիտութեան վրայ հիմնուած
աներկ տեսութիւնները : Յատկապէս հասարակու-
թեան կեանքի , նրա վերելքի ու անկման մասին ե-
ղած գաղափարները , տեսութիւնները , ներշնչումնե-
րը մեզ վերին աստիճանի հետաքրքրում են , քանի որ
մեզնից իւրաքանչիւրը հասարակական էակ լինելով ,

զգուժմ ենք, որ մեր անհատական էութիւնը, կեանքը մեծապէս ազդեւել է ու ազդուում է վերոյիշեալ վերելքով ու անկումով: Մեր իւրաքանչիւր ըմբռնման, կեանքի, եղանակի ու հաճոյքի մէջ այն հասարակութիւնը, որի մէջ մենք ապրում ենք, իւր անջնջիկ զրոյնն է դնում, ուրեմն թէկուզ մեր անհատական էութեան ու ապրելակերպի պատճառներին խորամուկ լինելու համար, մենք պարտաւոր ենք հետեւիլ հասարակական կեանքի ու երեւոյթների մեկին պարզաբանման: Անշուշտ լիակատար և յստակ ճանաչողութիւնը հասարակական երեւոյթների՝ հսկայական չափով նը պատում է, որ մեր ապագայ գործողութիւնները ո՛ր թէ պատահականօրէն տեղի ունենան, այլ իրականութեան անհրաժեշտ պահանջին բաւարարութիւն տան: Արդ՝ հարց է առաջ գալիս, թէ հասարակական երեւոյթ ասելով իսկապէս ինչ ենք հասկանում և ո՞րն է հասարակական երեւոյթի էութիւնը: Եթէ օրինակ տեսալ հասարակութեան բաղկացուցիչ բոլոր անհատները զբոսնելու գնան, արդեօք այդ երեւոյթը հասարակական կարող է՞ կոչւիլ. կամ օրինակ եթէ տօնական օրերին ամէն մարդ իր տանը կերուխումով զբաղւէ, արդեօք սա նոյնպէս հասարակական երեւոյթ կը դառնայ: Անշուշտ ոչ: Ուրիշ խօսքով ասած, բաւական չէ որ հասարակութեան բաղկացուցիչ անդամները միևնոյն գործողութիւնը կատարեն, որպէսզի վերջինս հասարական կոչւի: Անհրաժեշտ է, որ իւրաքանչիւրի այդ գործողութիւնը մի կէտում կեդրոնանայ և միաժամանակ հասարակութեան բոլոր անդամներին շահադրգոյէ, օրինակ երբ ասում ենք զպրոցը կամ եկեղեցին հասարակական հաստատութիւն է կամ յեղափո

խութիւնը հասարակական երեւոյթ է, այդտեղ հասկանում ենք անմիջապէս, որ զպրոցը մի մարդու չէ պատկանում, այլ և մի մարդ չէ կարող կազմել զբոլորոց կամ եկեղեցի: Այս հաստատութեան մէջ կեդրոնանալով տեսալ հասարակութեան անդամների կրթական և կրօնական պահանջները, այդ կեդրոնանալու պատճառով էլ մի ուրոյն ձև պիտի ստանայ մեր կարիքներին բաւարարութիւն տալը: Այնպէս որ եկեղեցու միջոցաւ մեր կրօնական պահանջներին բաւարարութիւն տալը մի անհատացուցական ընդթ է տալիս մեր համապատասխան ապրումներին, քան եթէ մենք նոյն այդ պահանջին լրացում տայինք առանձին կերպով: Բացի հաստատութիւնից, այլ և երեւոյթը՝ դիտելիս մենք նոյն պահանջն ենք դնում: Օրինակ յեղափոխութիւն չի կարելի կատարել մի անձով, այլ և որեւէ յեղափոխական ակտի մէջ մենք լռելեայն հասկանում ենք հասարակութեան անդամների կամ անդամներից մեծագոյն մասի նոր պահանջների կեդրոնացումը մի ակտի մէջ, որ բնականաբար բոլորին է վերաբերում և շահապրդուում: Ըստ ինքեան հասկանալի է, որ հասարակական դէպքի կամ երեւոյթի բոլոր փուլերը պիտի ենթարկին այն ուրոյն հոգեբանութեան, որ իւրաքանչիւր հանրային ինքնազի:

Արդ, քաղաքակրթութիւնները սկզբից և եթ միայն հասարակութեանց մէջ են ծնունդ առել և զարգանել, այնպէս որ քաղաքակրթութեանց զարգացման աղափարի համար պիտի ամենից առաջ դիմել այն դրբւորին, որից առհասարակ որ և է նորմուծութիւն տեղի է ունեցել հասարակական կեանքում:

կասկածից վեր է, որ հանրային քաղաքակրթութեան սկիզբը ստեղծագործող աշխուժութիւնն է, այսինքն երբ ամենանախնական ժամանակներումն իսկ մարդ անհատը իր գոյութեան պայմաններից դո՛ւ չէ և իր աճող կարիքներին բաւարարութիւն տալու համար հաճադում է բնութեան վրայ և վերջինիս բընական բարիքներին որ և է՝ նոր ձեւակերպութիւն տալիս ու յարմարեցնում իւր նորածնի կարիքներին։ Այդ վայրկեանից սկսած մարդը կամաց—կամաց դուրս գալով վայրենական վիճակից ու հրամեշտ տալով բնութեան գրկում օրէց օր աւանդական եղանակով ապրելուն՝ դնում է քաղաքակրթութեան հիմքը։ Անշուշտ, խիստ ձեւական տէսակէտից դիտւած այս վիճակը մըշակոյթ պիտի կոչւի և՛ ոչ քաղաքակրթութիւն, որովհետեւ վերջինս, ըստ ընդունւած սովորոյթի, ևնթադրում է քաղաքի գոյութիւնը, մինչդեռ ամենանախնական հասարակութեանց ժամանակ քաղաքը գոյութիւն չունէր։ Սակայն սա աւելի զարգացման աստիճանի խնդիր է, քան թէ փաստի էութեան, որովհետեւ երկու դէպքում էլ մարդու ստեղծագործող աշխատանքն է, որ դժգոհելով իրական վիճակից, ջանում է աւել տարրերից նորը կերտել։ Բայց սկզբունքային տեսակէտից դիտած, մարդու ըստ հոբեան ցոյց լինելն է պատճառ, որ մենք առհասարակ մարդկային քաղաքակրթութեան պատմութեան իրազեկ կարող ենք լինել, որովհետեւ եթէ մենք ընդունինք, որ մարդկութիւնը տարբեր զարգացման աստիճաններում բոլորովին անջատ—անջատ վիճակներ է ներկայացրել, այդ ժամանակ մենք պիտի ընդհանուր մարդկութեան քաղաքակրթութեան գաղափարներից ձեռք վերցնենք և

մենք, ներկայ քաղաքակրթութեան զարաշրջանի զաւակներս, ամենևին հնարաւորութիւն չէինք ունենալ ըմբռնել նախկին դարաշրջանների մարդկանց և նրանց ստեղծագործութեանց՝ իբրեւ մերինից բոլորովին տարբեր բաներ։ Մինչդեռ իրապէս մարդկութիւնը տարբեր զարաշրջաններում նոյն մարդ էակի մէջ եղած զարգացման հնարաւորութեան տարբեր ձևերն ու աստիճաններն է ցուցադրում, ինչպէս որ կոկոնից աստիճանաբար զարգանում է և առաջանում է վարդը։ Նոյնիսկ մենք գիտենք, որ որոշ քաղաքակրթութեան որոշ զարաշրջաններ կարող են դէպի անկում դիմել, ինչպէս օրինակ յունական, հռոմէական քաղաքակրթութիւններն էին, բայց ապագայ մարդկութիւնը նրանց ստեղծած արժէքներից շատերը իւրացրեց և օգտագործեց իւր կեանքի ազնւացման համար։

Մարդկային մշակոյթի (կուլտուրայի) զարգացումը նպատակ է ունեցել և ունի մեր գոյութեան պայմաններն այնպէս զարձնել, որ մենք աւելի բարձր տիպի կեանք ունենանք։ Դարերի բազմապիսի իրաւարձութիւններից, պայքարներից յետոյ մեր բարեբը շատ աւելի մեղմացել և ազնւացել են, կեանքից ունենալիք մեր պահանջները անհամեմատ բազմացել ու նրբացել են, քան նախնական դարերի մարդկութեան պահանջները և դրանց համեմատ էլ միջոցներ են ստեղծւել բաւարարելու այդ պահանջներին։

Բայց ամենից առաջ անհրաժեշտ է ձեւակերպել որոշակի կերպով թէ ինչ ենք հասկանում մշակոյթ զաղափարով։ Մշակոյթ (կուլտուրա) ասելով ներկայումս հասկանում ենք գիտութիւն, կրօն, տնտեսութիւն, գեղարւեստ, իրաւունք և պետութիւն։ Այս-

տեղ մենք առանձնապէս չենք մատնանշում փրկութիւնը աշխարհիւնը աշխարհաբանութիւնը, որ կարծում ենք թէ փրկութիւնը պիտի գիտութեան հետ միանայ և նա աշխարհի ապագայ ունի, ինչքան գիտական տրամաբանութիւնը վրայ է կառուցւած: Ուրեմն, մի տղա, որ բնականոն կեանք ունի և կուտուրական է ուղղում կոչել: պիտի վերոյիշեալ վեց տարրերն ունենայ: Բերական է, որ ինչքան կուտուրայի այդ տարրերը բնականաբանութեան ու նորմալի, աշխարհի էլ զրանց ստեղծագործող ազգը բարձրագոյն գոյութեան պայմանների տէր կլինի, մինչդեռ նախնական ազգութիւնը, որոնց մօտ վերոյիշեալները շատ ստոր աստիճանի վրայ են գտնուում, նաև ստոր գոյութեան պայմանների տէր են, ուրեմն և նրանց կեանքից ունենալիք պահանջներն ու զրանց բաւարարող միջոցները սոսկալի հասարակ են: վերոյիշեալ բացատրութիւններից պարզ է, որ եթէ կուտուրան պարփակուած է և՛ պետութիւն և՛ կրօն, և՛ տնտեսութիւն ևայլն, ուրեմն տրամաբանօրէն սխալ է, երբ մենք յաճախ, անշուշտ անգիտակցօրէն և բառի ո՛չ խիստ առումով վերցնելով, գործ ենք անում այնպիսի դարձեւածքներ, ինչպէս օրինակ «մի ժողովրդի տնտեսական, պետական, կուտուրական պայմաններ», «մինչդեռ տնտեսական և պետական բառերը կուտուրականի մի մասն են կազմում և ուրեմն լոկ «կուտուրական» բառը գործածելով արդէն հասկացում է և՛ տնտեսականը, և՛ պետականը, և՛ կրօնականը ևայլն:

Կուտուրայի կազմող տարրերից իւրաքանչիւրն ունի իւր սխառմը (համակարգութիւնը) և պատմութիւնը, օրինակ գեղարւեստի, կրօնի, իրաւունքի

սխառմներն ու պատմութիւնները, ու համեմատարար մեկուսացած շարադրում են սոցիալից իւրաքանչիւրին վերաբերող խնդիրները: Միայն նոր ստեղծւած գիտութեան՝ հասարակագիտութեան մէջն է, որ տեսալ կուտուրայի այդ բոլոր ճիւղերը իրենց միաժամանակ միմեանց վրայ ունեցած փոխադարձ ազդեցութեան լոյսի տակ են գիտուում ու շարադրում: օրինակ մի զուտ տնտեսական երևոյթի ըմբռնման և ձևակերպման մէջ մատնանշում է, թէ տեսալ դարաշրջանի իրաւական, պետական, կրօնական ըմբռնումները ինչ աստիճանի ազդեցութիւն են ունեցել: Խնդրի այսպիսի դնելը ենթադրում է, որ կուտուրայի մասերը չեն կարող մեծ տարբերութիւններ ունենալ, այսինքն անհնարին է, որ մի ազգի որևէ դարաշրջանի կրօնական կեանքը վերին աստիճանի զարգացած լինի, մինչդեռ գեղարւեստը նախնական բնոյթ ունենայ: Ուրեմն միևնոյն մակարդակի վրայ գտնուելու պատճառաւ հնարաւոր է, որ որոշ ժամանակի կուտուրայի զանազան բնագաւառները միմեանց վրայ փոխազդեն իրեն միևնոյն ձուլւածքից առաջացած կառուցւածքներ: Իսկապէս այն որ կոչուած է դարու ոգի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն դարու մշակոյթի զանազան կողմերի մէջ գերիշխող ընդհանուր գունաւորումը:

Արդ, հարց է առաջ գալիս, ի՞նչ եղանակներով է մարդկային կուտուրան իւր բարձրագոյն աստիճանին հասնում: Ինչպէս յայտնի է, այդ բարձրագոյն աստիճանին կարող է հասնիլ կամ զարգացմանց (էվոլյուցիա) կամ տագնապնդների (կրիզիս), օրինակ յեղափոխութեանց միջոցաւ: Երբ մենք զարգացում բառը խիստ գիտականօրէն ենք գործածում, նկատում ենք,

որ դա անպայման կերպով չէ զուգադիպում մարդկութեան յառաջագիմութեան զաղափարին, թէպէտեւ մենք մեր առօրեայ խօսակցութեան ընթացքում յաճախ այդ երկու զաղափարները միմեանց հետ չաղկապւած ենք արտայայտում: «Էվէլիցիան (զարգացումը) իրաւամբ նկատում է Պրոֆէսոր Կարէէլը, առարկայական գիտողութեան մի իրողութիւն է, այսինքն առարկայական կերպով մենք կարող ենք վերահասու լինել օրինակ, թէ ինչպէս գերմանական նոր միացեալ պետութիւնը զարգացաւ: Սակայն յառաջագիմութեան (պրօգրէս) զաղափարը ենթադրում ենթակայական (սուբյէկտիւ) գնահատութիւն և նա զրա արդիւնքն է: Թէ իրօք գերմանական պետութեան զարգացումը ի՞նչ աստիճանի համապատասխանում է առհասարակ պետութեան առաջադիմական ընթացքի մասին ունեցած մեր զաղափարներին, սա արդէն մի բոլորովին այլ հարց է և կարող է թերեւ ներկայ դէպքում (գերմանական պետութեան — մինչև վերջին համաշխարհային պատերազմը — վրայ կիրառելով) բացասական պատասխան ստացուի: Նոյնպէս եզրիտները միաբանութեան զարգացումն ու մարդկութեան յառաջագիմական ընթացքը բոլորովին տարբեր երևոյթներ են և մեր ունեցած արդի համոզումներով այդ միաբանութեան զարգացումը ամենևին չէ համապատասխանել ու այսօր էլ չէ համապատասխանում մեր ունեցած յառաջագիմութեան զաղափարին՝ դորձադրած մարդկութեան վերաբերմամբ*:

* Զարգացման եւ յառաջագիմութեան զաղափարի վերլուծման մէջ ղեկավարւում ենք Պրօֆ. Ն. Կարէէլի բնորոշումներով: Տես՝ Պրօֆ. Ն. Կարէէլ «Դաղափարների, հաստատութիւնների եւ անձնաւորութեան դերը պատմութեան մէջ» Թարգմ. Ա. Գասպարեան եր. 51—55:

Ապա նկատելի է, որ զարգացման զաղափարը ենթադրում է աստիճանականութիւն և յաջորդականութիւն, այսինքն երբ մենք խօսում ենք մի հաստատութեան, մի պետութեան զարգացման մասին, մենք ենթադրում ենք, որ դա յաջորդաբար և աստիճանաբար է զարգացել, առանց ցնցումների ու տագնապների այլ և ուրեմն առանց բռնի և կրքեղանային աշխարհային խառնակութեանց ու յեղաշրջումների: Մարդկութեան յառաջագիմութիւնը սակայն միայն խաղաղ զգացումներով չէ, որ տեղի է ունեցել, այլ և յաճախ յախուռն յեղաշրջումներն են փոխել վաղեմի հնացած և արմատացած հաստատութիւններն ու զաղափարները: Ակնյայտ է Ֆրանսայի արդի հասարակարգը հիմնուած է 89 յեղափոխութեան ազդարարած սկզբունքների վրայ: Անկասկած է, որ Ֆրանսայի այժմեան հասարակարգը և պետական կարգը շատ աւելի յառաջադիմական են մինչև մեծ յեղափոխութիւնը ունեցածի հետ համեմատած: Սակայն այս նոր և յառաջադիմական պետական և հասարակական կարգը մենք չենք ստացել զուտ էվոլյուցիայի ճանապարհով, այլ յեղափոխական միջոցով: Եւ ընդհանրապէս, կարող է մի յետաշրջական շարժում դրնէ մամանակաւորապէս խանգարել և կասեցնել մի զարգացում, որ անպայման մեղ համար յառաջադիմական է: Այս տեղից ուրեմն ակնյայտ է, որ զարգացում և յառաջագիմութիւն զաղափարները անպայմանօրէն չեն զուգադիպում:

Սակայն կոյ նաև մի այլ հանգամանք, որ մենք անպայման ի նկատի պիտի առնենք այդ երկու զաղափարների բովանդակութիւնները ճիշտ ըմբռնելու

համար: Եթէ մենք ուզում ենք զսնողսն ազգերի կուտուրայի բոլոր ձիւղերի զարգացման օրէնքներէն խորամուկ լինել, մենք կարող ենք ուսումնասիրել և համեմատել զանազան ազգերի իրադարձութիւնները և այս եղանակով որոշ օրէնքներ զանել բոլոր ազգերի համար: Սա կլինի մի զուտ առարկայական գիտողութեան և համեմատութեան արդիւնք: Սակայն եթէ մենք ցանկանում ենք իմանալ, թէ զանազան ազգերէ բազմապիսի իրադարձութիւնները, խաղաղ զարգացումները, ձգնաժամներն ու յեղաշրջումները ո՞ր պարագային մեզ մօտեցնում են մեր ունեցած յառաջագիւտութեան զաղափարին, այս դէպքում նախ մենք պիտի ունենանք մեր ուրոյն տեսակէտը մարդկութեան ապագայ խոչալական վիճակի մասին:

Ապա այդ տեսակէտից գնահատելով իւրաքանչիւր հաստատութեան զարգացում, կամ տեղի ունեցող երևոյթ, պիտի պնդենք, թէ այսինչ հաստատութեան զարգացումը կամ այսինչ երևոյթը յառաջադիմական է, այսինքն մեզ մօտեցնում է մեր նպատակադրած խոչալական կեանքի զաղափարին: Զարգացման գաղափարի գործադրութեան ժամանակ երևոյթների գիտելը բաւական է, իսկ յառաջադիմութեան զաղափարի գործադրութեան ժամանակ մենք պիտի յարաբերութեան մէջ գնենք երևոյթը մեր ունեցած խոչալի հետ և ապա գնահատենք: Խնդրին զուտ գիտական օրէն մօտեցած պիտի նկատել, որ զարգացման զաղափարը և դրա կիրառումը հասարակական երևոյթների, հաստատութեանց վերաբերմամբ կարող է առարկայական եղանակով ձեռք բերել և ուրիմն դրա արդիւնքները համայնապարտադիր նշանակութիւն կարող են ունե-

նալ, ինչպիսի յառաջադիմութեան զաղափարը, որը միշտ մեր ունեցած ենթակայական (սուբյէկտիւ) նըպատակի, խոչալի վրայ է կառուցւելու և դրանով իրենն ու երևոյթները գնահատելու են, միշտ էլ ենթակայական տարր է պարունակելու, քանի որ մեր մի որեւէ տեսակէտից գնահատման արդիւնքը չի կարող բոլորի կողմից ընդունւել իբրեւ վերջնական ճշմարտութիւն:

Այս կապակցութեան մէջ մենք կ'ցանկայինք միայն անցողակի մասնանշել, որ իրականի և խոչալական դրութեան մէջ, որը մենք ցանկանում ենք մարմնացնել այդ իրականութեան մէջ, տրամաբանօրէն դիտած, մի անջրպետ կայ, որովհետեւ իրականութեան դիտողը կարող է ասել, թէ դրութիւնը օրինակ այսպէս է և դրա հետեանքները կարող է գիտականօրէն շարադրել, բայց որ այդ դրութիւնը պիտի վիճակ մեր նպատակի, խոչալի համաձայն, այս պիտի երբէք չի կարող բղխիլ տեւալ վիճակից, այլ մեր բարոյական կամքից, որն ըմբոստանում է տիրող վատթար կացութեան դէմ և ցանկանում է լաւագոյնը ստեղծել: Այս բարոյական կամքը գիտական պատճառաբանութեան համայնապարտադրութիւնը չունի բոլոր մարդկանց համար: Նրա հիմունքները գտնւում են մեր հոգու ծալքերում: Նա ամենեւին կարիք չունի արդարութեան ձայնը լսեցնելու համար ենթարկւելու մաթեմատիկական բանաձևերի, ինչպէս որ իսկական զեղեցկութիւնը տեսնելու և վայելելու համար պիտի ունենալ գեղարուեստական հոգի և աչք և ո՛չ մի օրէնք չի կարող մեզ զեղեցիկը իբրեւ այդպիսին պարտադրել:

Անշուշտ, այդ խոչալական վիճակը, որը մենք

մտաւոր կերպով կառուցել ենք և որը պիտի լինի աստիճանացոյցը հասարակական երեւոյթներէ, այսինքն որը պիտի ցուցադրէ, թէ այսինչ հասարակական երեւոյթը թէ հաստատութիւնը՝ յառաջագիմական է թէ ոչ, ուրիշ խօսքով ասած, մեզ մտեցնում է մեր իտէալին թէ ոչ— այդ իտէալական վիճակը մեր երկարաւ խորհրդածութեանց արդիւնքն է իրենիւ, այսինքն համեմատելով մինչև այժմ զոյաթիւն ունեցած բազմապիսի հասարակական վիճակները, մենք եկել ենք այն պարզ հիշակացութեան, թէ այսինչ զոյալիճակը լաւագոյնն է, բայց որ այդ լաւագոյն վիճակը պիտի իրականանայ մարդկութեան միջոցով, այլ պիտի ոչ թէ գլխական խորհրդածութեանց արդասիք է, այլ մեր բաւոյական կամքի հրամայականն է:

Ազգերի զարեւրէ ընթացքում ստեղծած կուլտուրական կառուցածքների միակ նպատակը մարդ անհատի բախտաւորութիւնն է, այսինքն մարդը քաղաքակրթութեան զարգացման հետ պիտի իւր բոլոր թաղնւած տենչերին լիակատար բաւարարութիւն տայ այս անցաւոր աշխարհում վերոյիշեալ կուլտուրական կառուցածքների միջոցաւ: Սակայն զարմանալի հագեւանական երեւոյթ է, որ այդ կառուցածքներից իւրաքանչիւրը, օրինակ պետութիւնը, կրօնը և այլն, որոնք ստեղծւած են մարդկանց կողմից՝ սրանց կարիքներին ծառայելու, մի անգամ որ ստեղծուած և ձև են ստանում, արդէն կարծէք որոշ ինքնանկախութիւն են ստանում իրենց ծնող մարդկանցից և ուրոյն ճանապարհով ընթանալով, ունենում են իրենց տրամաբանական անկախ ընթացքը և նոյնիսկ յանդգնում են իրենց ենթարկել իրենց ստեղծող մարդկանց հա-

մապատասխան կեանքը:

Խնդիրը պարզելու համար վերցնենք օրինակ եկեղեցին: Անշուշտ եկեղեցին ստեղծւած է հասարակութեան անդամների կրօնական կարիքներին բաւարարութիւն տալու համար. բայց մի անգամ որ նա ըստեղծւած է և կազմակերպւած ու ձևակերպուած, նա իրրեւ հաստատութիւն՝ իւր ուրոյն կանոնները, օրէնքները, կրօնական սխալմաներն ունի, մտածելակերպի ու կենցաղի որոշ հրահանգներ է թելադրում և պարտադրում ստիպողաբար իւր եկեղեցակէսն համայնակիցներին: Տղաւորութիւնն այն է, որ ազատօրէն ստեղծւելով կրօնական պահանջից, եկեղեցին քարանայով բռնադատում է իրեն ստեղծող անձանց կրօնական ազատ կեանքը և զա որոշ համայնապարտադիր ձևերի ու օրէնքների տակ մտցնում: Եկեղեցու ապագայ զարգացումը էլ աւելի խտացնում, սրացնում է այս երկու կողմերի հաստատութեան ու նրա ենթակայ անձանց հակադրութիւնը: Նոյնն է պատահում նաև օրինակ պետութեան հետ, որ ինչպէս յայտնի է, ըստեղծւած էր սկզբում հասարակութեան բաղկացուցիչ անդամների պաշտպանութեան համար ընդդէմ դրոյթի թշնամիների և ներքին անդորրութիւնը պահպանելու համար: Սակայն մի անգամ որ նա ստեղծւեց, կազմակերպւեց իրրեւ պետական հաստատութիւն— նա գնում է այնուհետև իւր ուրոյն ճանապարհով և իւր օրէնքներին, հրամաններին ենթարկում իրեն ենթակայ հպատակ անձանց կեանքը և նոյն իսկ բռնութիւն է դորձադրում սրանց վրայ: Պետութիւնը կարծէք թէ ինքնանպատակ է դառնում և ոչ թէ ստեղծուած իւր հպատակների կարիքներին բաւարարութիւն տալու

համար: Դուք կարող էք ի հարկէ մի պետական ձեռ մխտով փոխարինել, բայց այդ հակադրեցութիւնը առջէ է գալիս ոչ թէ այս կամ այն ձեւից, այլ հաստատութեան իրրեւ այդպիսու և անհատի փոխարարութիւնից:

Այս հոգեբանական հակադրութիւնը միայն արդի քաղաքակրթութեան մի շարք յոռի դժերի հետ, առիթ է տուել մարդկութեան լաւագոյն զաւակներին յիշեցնել թէ ինչպէս որ ամբողջ քաղաքակրթութիւնը մարդէակի երջանկութեան համար է ստեղծւած. այս վերջինս իրրեւ ինքնանպատակ պիտի լիակատար վայելէ, արդի քաղաքակրթութիւնը և ոչ թէ դառնայ զործիք այս կամ այն հաստատութեան համար: Անմահ Ռուսոն, որ իր անսահման տառապանքի մէջ դոյութեան մրուրը ճաշակեց և զգաց անհունօրէն աշխարհի վայելքներից զրկուած լինելը, նկատելով և քննադատելով հանդերձ արդի քաղաքակրթութեան մի շարք յոռի կողմերը, իր ուշադրութեան կեդրոնն է դարձնում արդի քաղաքակրթութեան և վաղեմի դարերի ռաւակակալ տարբերութեան վրայ: Արդէն Ռուսոյի աշխարհայեացքին ծանօթ անձը պիտէ, որ ըստ այս տեսութեան, ամէն մարդ իւր երեխայութիւնից սկսած, իւր սկզբնական դաստիարակութեան շրջանից սկսած, պիտի ամբողջական և ստեղծագործող էակ լինի, այսինքն պիտի ջանայ իւր զարգացման իւրաքանչիւր շրջանում—դաստիարակի շատ թոյլ նեշնչումների ազդեցութեան տակ— իւր հոգեկան կեանքը աճնական փորձով ու գիտողութիւններով իւր տրամաբանական զարգացման հասցնել: Անհատի ստեղծագործող ձեռներէցութիւնը, նրա զարգացման իւրաքանչիւր շրջանում, նրան անկախու-

թեան է վարժեցնում և կարծիք մեր ինքնանպատակ լինելը մեզ մեր երեխայութիւնից ներշնչում: Ահա այսպիսի հիմնական հայեացքով Ռուսոն մտնում է մարդկային քաղաքակրթութեան և գտնում է, որ այն —ամբողջական անհատի տեսակէտից գիտելով, այսինքն թէ այն ինչքան անհատի երջանկութեան է նպաստում — ռաւակալէ շատ աւելի ցածր է քան նախնական, վաղեմի դարերի կուլտուրան, երբ մարդը իրապէս ամբողջովին վայելում էր տեւալ կուլտուրան և իւր անձի մէջ դա մարմնացնում:

Խնդիրն իրօք այսպէս է տրուած. ժամանակակից քաղաքակրթութիւնը անկասկած է, որ շատ աւելի նուրբ է քան վաղեմի մարդկութեան ունեցածը. սակայն դրա հիմնական նախապայմանն է աշխատանքի բաժանումը: Այսինքն արդի քաղաքակրթութեան գոյութեան համար անհրաժեշտ է, որ հասարակութեան որոշ մասը միայն մի որոշ գործառնութիւն կատարէ, մի ուրիշը՝ այլ մասնագիտական աշխատանք վարէ, որպէս զի հնարաւոր լինի ներկայիս մարդկութեան բազմաժառալ կարիքներին արագ և լաւագոյն կերպով բաւարարել: Արդ, եթէ արդի նրա ցած քաղաքակրթութեան և խիստ մասնագիտութեան մէջ մի անհատ իւր ամբողջ կեանքը պիտի գոհնէ օրինակ զընդատեղի մի մասը պատրաստելու և մի ուրիշ գիտնական էլ իւր ամբողջ կեանքում պիտի ուսումնասիրէ կենդանիների կաշւի փոփոխութիւնների պարագաները և միայն այս եղանակով է քաղաքակրթութիւնը կառուցւելու, արդեօք ներկայ դէպքում, բովանդակութեան հարստութեան տեսակէտից գիտած, որակապէս աւելի բարդ է ներկայ հասարակութեան պատկանող

մարդը, թէ վաղեմի հասարակութեան անդամը, որը թէպէտեւ այն նրբութիւնը չունէր ինչ ներկային ունի, սակայն նա միաժամանակ և՛ երաժիշտ էր, և՛ հոգագործ, և՛ պաշտառ և՛ դատաւոր: Թող որ ամենաանախանահան վիճակում լինէին այս մասնագիտութիւնները, բայց դրանց տէր անհատը շատ աւելի բարդ բովանդակութիւն ունէր, անկախ և ակտիւ էր քան այժմեան քաղաքակրթութեան պատկանող մարդը, որը կարող է մի յատուկ աշխատանքի մէջ շատ կոտորել ու գործել, բայց նա արդի ամբողջ քաղաքակրթութիւնը չէ ընդգրկում իւր անձի մէջ:

Մարդկային հասարակութեան զարգացած մասնագիտացման միջոցով ստեղծւած քաղաքակրթութեան և անհատի մէջ եղած այս հակադրութիւնը շատ սուր կերպով զգացել է 19րդ դարու վերջին քառորդի մի ականաւոր ուսն հասարակագետ և փիլիսոփայ Նիքօլա Միխալլովսկին: Նրա աշխարհայեացքի կենդրոնը ևս կազմում էր բարդ բովանդակութիւն ունեցող անհատականութիւնը և նա որոշակի յայտարարում է, որ աշխարհին երեւին եղած բոլոր բարիքները— միեւնոյն է, մարդու կողմից ստեղծւած թէ բնութիւնից տրւած— պիտի մարդ— անհատի բախտաւորութեան ծառայեն, քանի որ սրանից դուրս իրապէս այլ միութիւն գոյութիւն չունի: Հասարակութիւնը և պետութիւնը ստեղծւած են միայն նոյն ինքն անհատի երջանկութեան համար և ինքնանկախ կեանք չեն կարող ունենալ: Արդի եւրոպական քաղաքակրթութիւնը հիմնւած է հասարակութեան անդամների մէջ տեղի ունեցող աշխատանքի բաժանման վրայ, որի զէպրում մի անհատ իւր ամբողջ գոյութեան ընթացքում լի-

նելով գործիքը հասարակութեան բարդ գործառնութեան, մի ուրոյն մասնագիտական աշխատանք է կատարում: Բնական է, որ նեղ մասնագիտութեան հետ նաեւ մեր հողին ժամանակի ընթացքում իւր այս նեղ պատեանի մէջ սեղմւելով, դառնում է մի մեքենայ մի ինչ որ հասարակութեան զարգացման համար, որն իրապէս գոյութիւն չունի: Մինչդեռ նախնական մարդկութեան մօտ թէպէտեւ քաղաքակրթութիւնը այն բնոյթը չունէր ինչ այժմ և կեանքի պայմանները հասարակ էին, բայց մարդ էակը շատ աւելի համայնապարփակ և ամբողջական էր: Աշխատանքի լիակատար բաժանումն տեղի ունէր հասարակութեան իւրաքանչիւր անդամի անձի մէջ և ո՛չ թէ հասարակութեան զանազան մասերի մէջ: Ուրիշ խօսքով ասած, աշխատանքի աշխատանքի բաժանումն գոյութիւն չունէր: Կեանքը պարզ էր, բայց դրա փոխարէն հասարակութեան իւրաքանչիւր անհատ իւր անհատական օրգանիզմի մէջ աշխատանքի բաժանումը ծայրագոյն աստիճանի էր հասցրած: Նա ինչպէս վերեւում նկատեցինք, միաժամանակ ինքնաբաւ կերպով բազմապիսի գործառնութիւնների, մասնագիտութեանց տէր էր և ուրեմն անհամեմատ աւելի ամբողջական և համայնապարփակ անձն էր, քան արդի քաղաքակրթութեան ժամանակի անձը:

Նախնական մարդը ո՛չ թէ գործիք էր այս կամ այն հաստատութեան, այլ ինքը ինքնանպատակ էր, ինչ որ իսկական բախտաւորութեան հիմնական պայմաններից մէկն է: Արդի քաղաքակրթութիւնը թէպէտեւ կերտւած մեր անհատ—մարդկանց միջոցով և ներառոյն կատարելագործութեան է հասցրած, ինքը

անտէր է, որովհետեւ չկայ մի իրական էակ, որը իւր մէջ պարփակէ այդ և այդ պատճառով էլ խելագէտ իրեն զգայ երջանիկ: Եւ ինչքան մենք ներկայումս ամբողջ էակ դառնալուց հետո ենք և մեր կոչումով ամենափոքրիկ մասն ենք կազմում ներկայ քաղաքակրթութեան, այնքան էլ մեր մէջ բոցափայտում է կուլտուրական աշխարհի բովանդակ բարիքները վայելելուց զրկւած լինելու գիտակցութիւնը ու զգուշացում մեզ մեր անհատական անկատարութիւնը:

Սակայն ո՛ւր է այն միջոցը, որը մեզ ազատէ այն նւաստացուցիչ վիճակից, որի մէջ մեզ դրել է արդի քաղաքակրթութիւնը: Այստեղ ուռւ մտածողը՝ Միխայիլովսկին միայն ընդհանուր պահանջ է դնում, որ պէտք ջանալ ըստ կարելոյն շատ աշխատանքի բաժանումն կատարել է՛ր անհատական օրգանիզմի մէջ և ընդհակառակը խուսափել աշխատանքի բաժանումից հասարակական կեանքում: Ուրիշ խօսքով ասած, նա առաջարկում էր անհատականութեան բարեացում, ամբողջականացում և ընդհակառակը հասարակական կեանքի պարզութիւն՝ խուսափելով աշխատանքի մասնագիտացման պատճառով առաջ եկած հասարակական կեանքի բարդութիւնից, այլատարրութիւնից: Եւ որովհետեւ Միխայիլովսկին, բացի խնդրի տեսական լուծումից, ինկատի ունէր նաեւ իւր հայրենիքը՝ Ռուսաստանը և սրա ապագան, ապա նա իւր մի շարք այլ հայրենակիցների հետ դաւանում էր այն տեսակէտը, թէ Ռուսաստանը կարող է խուսափել արեւմտեան Եւրոպայի կապիտալիստական հասարակարկից և սրան համընթաց աշխատանքի մասնագիտացումից հասարակութեան մէջ ու գնալ իւր ուրոյն

ուղիով՝ համայնական տնտեսութեան ուղիով գէպի սօցիալիզմ:

Ապագային անողոք իրականութիւնը ցոյց տւեց, որ այս միջոցը ևս որեւէ լուրջ արժէք չէ ներկայացնում վերոյիշեալ քաղաքակրթական տաղնապի լուծման համար, որովհետեւ Ռուսաստանը ևս քաղաքակրթութեան անողոք պահանջներով դնաց գէպի արեւմտեան Եւրոպայի կապիտալիզմի ճանապարհով, զգալով իւր վրայ նաեւ վերջինիս բոլոր բացասական հետեանքները աշխատանքի մասնագիտացման տեսակէտից: Վերջապէս փաստը մնում է իբրեւ աներեք փաստ, որ արդի քաղաքակրթութիւնը խարսխւած է մասնագիտացած աշխատանքի հսկայական ծաւալի վրայ, որ յրջօրէն այս խնդրի մասին այն ժամանակ կարելի է խօսիլ, թէ իրօք արդի քաղաքակրթութեան շէնքը պահելով հանգերձ, իբրեւ մարդկութեան դարաւոր քրտնաջան աշխատանքի արդասիք, միաժամանակ և այլ միջոց հնարել, որ փոխարինէ մասնագիտացման առաջացրած բացասական դժերին:

Քսաներորդ դարում մի այլ փիլիսոփայ, պրօֆէսոր Զիմմէլը, որը յայտնի էր իւր վերին աստիճանի նուրբ և մաքրագոյնին հոգեբանական վերլուծումներով գերմանական փիլիսոփայական գրականութեան մէջ, խնդիրը իւր բոլոր երկրորդական տարրերից զըտելով, իսկական հունի մէջ դրեց: Տրուած լինելով, որ մարդ—էակը ընդհանրապէս կուլտուրական կառուցւածքների (կրօն, պետութիւն գեղարուեստ և այլն, ընձեռնած բարիքները վայելելով է լիակատար քաղաքակրթւած անձն դառնում, նա ջանում է դրանց օգտագործել իւր անհատական կատարելութեան համար:

Բայց այս կառուցուածքներին իւրաքանչիւրը, մի անգամ որ ստեղծուել է և ուրոյն ձեւակերպութիւն ստացել, աշխատում է ընդհակառակը անհատին կանգնեցնել նրա զարգացման ճանապարհին մէջ և մի որոշ մասնազտական աշխատանքի ստրուկը դարձնելով, իրեն նպատակներին ծառայեցնել: Տպուորութիւնն այն է, որ օրինակ կրօնը, զիտութիւնը ինքնանկախ կեանք ունին և մեղ մարդ էակներին, որոնց համար միայն ստեղծւած է քաղաքակրթութիւնը, ստիպում են ենթարկւել այդ մեր միջոցով ստեղծւած կուլտուրական կառուցւածքներին: Կուլտուրայի որբերգութիւնը սակայն կայանում է հէնց նոյնինքն կուլտուրայի էութեան մէջ, որը կարող է այնքան ժամանակ դոյութիւն ունենալ, ինչքան աշխատանքի հասարակական բաժանումն, ուրեմն մասնազտացում տեղի կ'ունենայ: Այլ եղանակով հնարաւոր չէ որ և է զարգացած և բարձր կուլտուրա ստեղծուի: Սա այլապէս քաղաքակրթ հասարակութեան և նրա բաղկացուցիչ անհատների փոխյարաբերութեան խնդիրն է, որը զբաղեցնում է ամենէն նուրբ խորհող հոգիներին:

Անգամ սօցիալիստական կուլտուրան չի կարող յաղթահարել այդ հակադրութիւնը, որովհետեւ սօցիալիստական հասարակարգը ճիշտ է կ'վերացնէ բազմապիսի աղաղակող անարդար կողմերը արդի քաղաքակրթութեան և կ'աշխատի հասարակութիւնը, պատահական հանդամանքներից ազատած, զուտ բանականութեան վրայ կազմակերպել, այսինքն ո'չ թէ պատահականօրէն ժառանգած դրամի, դիրքի և այլն պատճառներով մենք հասարակութեան մէջ դեր կ'խաղանք և կ'ազդենք նրա վրայ, այլ միայն մեր ունեցած ար-

ժանիքների համաձայն: Այլ և սօցիալիզմը կ'աշխատի չքացնել արդի կապիտալիստական ուժիմից առաջացած բոլոր յոռիգունաւորումները կուլտուրայի վրայ: Բայց և այնպէս նա ևս չի կարող քաղաքակրթութեան և անհատի մէջ գոյութիւն ունեցող հակադրութիւնը լուծել որովհետեւ մեր միջև այժմ քաղաքակրթութեան մասին ունեցած գաղափարի էութեան մէջն է այդ ողբերգական կացութիւնը: Իսկ յայտնի է, որ իսկական ողբերգութիւնը միայն այն ժամանակէ առաջ զայիս երբ դա անձի կամ երեոյթի էութիւնիցէ բղխում և ո'չ պատահական պատճառներից: Միայն գեղարուեստն է և նրա ներկայացուցիչները, որ մեր հոգին բարձրացնելով և համայն տիեզերքի հետ ձուլելով, մեր կեանքի այս բոլոր անկատարելութիւնները գոնէ ըստէպէս մոռացնել են տալիս և իրենց խտացած և պատկերաւոր արտայայտութիւններով՝ խաբխարումների մէջ զայարւոզ մեր անսահման տենչերին բլրեղացած ձեւակերպութիւն են ընծայում:



ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Յայտնի է, որ բարձր կուլտուրա ունեցող ազգերի մօտ բարձրագույն արժէքները մարմնացնող անձինք զիտուում են և գնահատուում յոկ իրենց հանդիսաբերած թանկագին բովանդակութեանց պատճառով: Երկրորդական տարրերը այդպիսի անձանց և արժէքների խնդրին մեկուսացուում են զիտողի աչքից և նա իր ուշադրութիւնը ուղղում է զէպի խնդրի և արժէքի էութեանը: Հասկանալի է, որ այսպիսի ըմբռնումը ենթադրուում է զիտողական կարողութեանց վերին աստիճանի սրութիւն, նրբութիւն, և սեւեռումն: Այլընչապա փաստ է, որ քաղաքակիրթ ժողովուրդների մշտածողութիւնն ու զիտողութիւնը անհամեմատ աւելի շեշտակի են, լայնատարած (չափաւոր ընդգրկող) ու հիմնականը երկրորդականից զանազանող քան յետամնաց ազգերինը: Հետեւանք այս բոլորի լինում են վերին աստիճանի խտացած արտայայտութիւններ մշտքի, կամքի և զգացմունքի, որոնց ազդեցութիւնը ևս ի հարկէ մնալուն է լինում:

Այժմ մենք կը ցանկայինք այս հանրածանօթ ըմբռնումները մասնակի կերպով կիրառել հայ հասարակական կեանքի սրտը երեւոյթների վրայ, յատկապէս ի նկատի առնելով զազութեան հայութիւնը: Պիտինկատել, որ մեր գաղութահայերը, անգամ նրանք, որոնք երկար տարիներ ապրել են գաղութներում, նոյնիսկ կուլտուրայէս շատ առաջացած վայրերում, էապէս չեն ձուլուած տիրող քաղաքակրթութեան հետ, որովհետեւ նրանք մայր հայրենիքից բերել են հետները ապրելակերպի, մտածելակերպի ըմբռնումներ, որոնք դա-

րերով ժառանգաբար փոխանցւած և արձատացած են նրանց հոգու մէջ և որ զլիաւորն է, այդ ըմբռնութեանը շատ աւելի խորն են և հարազատ, քան նոյնիսկ մի քանի տասնեակ տարիների ստացած ազատ որութիւնները, ազդեցութիւնները նրանց նոր միջավայրից: Այս է հիմնական պատճառը, որ մենք մեզ օտար ենք զլուծւում ամենէն հարուստ կուլտուրայի մէջ անգամ:

Յայտնի է, որ հասարակական կեանքի ստորին աստիճաններում, երբ աշխատանքի նւագ բաժանման ժամանակ մարդու ուրոյն կարողութիւնները դեռ ևս յատուկ նրբութեան և մասնազատացման չեն ենթարկուել, նրա զիտողական և մտածողական ընդունակութիւնները զօրեղ շերտաւորման չեն ենթարկւած: Նոյնիսկ բարոյական հասկացողութեանց մէջ չ'ենկատուում անհատական մեղքի և պատասխանատուութեան գաղափարը, այլ ցեղը, տոհմն է, որ ամբողջովին տուժում է իր մի որեւէ անդամի պատժապարտ գործողութեան համար, միւս ցեղի որ և է անդամին ցուցադրած անիրաւութեան պատճառով: Միմիայն բարձր և փաթեմ կուլտուրայի հետեւանքով է, որ մարդու տեսողական և դատողական կարողութեանց նրբութեամբ մենք ի վիճակի ենք ոչ միայն անձնաւորութեան դադափարը ըմբռնել, այլ և դա գործադրել իրաւունքի, բարոյականութեան և կուլտուրայի այլ ասպարէզներում:

Այստեղ ոչ միայն մարդ անհատը իր ուրոյն գործերի պատասխանատու է, այլ և մենք նրա անհատական յատկութեանց մէջ շերտաւորում ենք մտցնում ու նրա լաւագոյն դժերը որոշակի զանաշանում նրա միտածամանակ ունեցած բացասական գծերից: Նայած

թէ նա իրրեւ ինչ է նկատի առնուած, ըստ այնմ էլ նա արժէքաւորուած է: Օրինակ մի յայտնի գիտուն կարող է միաժամանակ և՛ շատ ցոյի ու անբարոյական, դաւաճան, ժլատ մարդ լինել և բացի իւր նեղ մասնագիտութիւնից՝ այլ գեղարեւոտական, զրտկան խնդիրներում միջակութիւն կամ ոչնչութիւն ներկայացնել: Բայց և այնպէս նուրբ հասարակութեան համար այդ յայտնի գիտունը իր գիտնականութիւնից մազաչափ անգամ չի կորցնում իր անբարոյական, ցոյի, ժլատ, գեղարեւոտական խնդիրներում ոչնչութիւն կամ միջակութիւն ներկայացնելուց: Ի հարկէ մարդկային իշտէալի համար ըզձալի է, որ այդ գիտունը միաժամանակ լինէր համայնապարփակ և լիակատար բարոյական մի անձնաւորութիւն: Սակայն խնդիրն այստեղ ոչ թէ «ըզձալի» մասին է, այլ թէ օրինակ «գիտուն» զաղտիւրի մէջ արդեօք անհրաժեշտօրէն մտնում են նաև բարոյականութեան, շոյալութեան և այլն յատկութիւններ: Անշուշտ ո՛չ, ե՞րբ մենք ասում ենք բոս եւրեան մօտենալ անձնաւորութեան, խնդրին, գէտքին և այլն, դա իսկապէս ոչ այլ ինչ է, և թէ ոչ խնդրը բոլոր կողմնակի, պատահական, ոչ կարեւոր է տարրերից զտել և իր իսկական հունի մէջ դնել: Այստեղ պէտք է նաև մտքի կորով, հիմնականն ու երկրորդականը, կարեւորն ու անկարեւորը զանազանելու և ըստ այնմ արժէքաւորելու համար:

Զուտ տեսական խնդիրների և անձերի վերաբերեալ դեռ կարելի է վերոյիշեալ իմաստով, դիւրութեամբ որոշ եղրակացութեան գալ, որովհետեւ զուտ գիտական և առհասարակ տեսական խնդիրներով ըզբաղողը ենթադրուած է, որ կեանքի ալեծուփ հասան

քից հետո՝ է կամ հետո պիտի լինի, որպէսզի իր առարկայական գիտողութիւնը չպղտորուի ամենօրեայ բուռն պայքարներից և ըստ կարելւոյն մնայուն եղրակացութեանց հասնի:

Հասարակական կեանքում և այն էլ յետամնաց հասարակութիւնների մէջ առարկայական մտածողութիւնը դժբաղդաբար բաղմապիսի խոչնդոտների է հանդիպում: Ծնորհիւ այն հանգամանքի, որ հասարակական կեանքում յուզող խնդիրները մեզ շատ մօտիկից են չահագրգռում ու հետաքրքրում, մենք կորցնում ենք մեր հաւասարակշռութիւնը և մարդկութեան նախնական վիճակում գտնուած մարդու պէս այն ամէնը, ինչ որ հակառակ կուսակցութեան, խրմբակցութեան և յետամնաց վայրերում նաև թայֆային է վերաբերում՝ մենք բացասական որակումն ենք տալիս:

Այստեղից էլ առաջ է դալիս բաւմասանքը: Բամբասանքը յայտնի է, որ զարգանում է այն հասարակութեան մէջ, ուր կեանքի սոսկալի միօրինակութեան պատճառով մարդիկ նորանոր զրգիւններ չտանալով, իրենց ամբողջ ուշադրութիւնը դարձնում են հարեանի ամենախնտիւմ կեանքի զանազան կողմերի վրայ և թւում է թէ աշխարհի ամենակենսաթրթիւ հարցերը դոքա են, որ պիտի լուծուին ստանան:

Վճի առարկայ եղող խնդիրների չուրջը թերեւ հաշտութիւնը աւելի դիւրին լինի, երբ միմեանց գէմ կանգնած են կազմակերպւած կուսակցութիւններ, այսինքն որոշ քանակ ներկայացնող բարդային խմբակցութիւններ, որոնք որոշ զաղափարով չաղկապուած են միմեանց հետ և տեւալ խնդրի վե-

րաբերեալ այս կամ այն տեսակէտն ունին ու ձգտում են
դրան համապատասխան իրագործում տալ մեր կեան-
քում: Այստեղ քաղաքական խմբակցութեանց պատ-
կանող անձանց բարոյական պարտքն է ըմբռնել, որ
թէպէտեւ այս ինչ խնդրում մեր տեսակէտը մի յատուկ
ձեւակերպութիւն է ընդունել, որը մեզ համար սուրբ
է, սակայն մենք նոյնպիսի իրաւամբ պիտի բնորո-
շինք, որ մի հակառակ խմբակցութիւն, բոլորովին այլ
ելակէտներով բարձրանալով, կարող է բոլորովին հա-
կառակ լուծում տալ այդ նոյն խնդրին: Այս երկու
լուծումները սակայն, օրմէկօր դիտւած, համարժէք են:
Անշուշտ երեւոյթը առարկայօրէն տեսնելու համար ան-
հրաժեշտ է «բարոյական մեծութիւն» որովհետեւ իսկա-
պէս ո՛չ ամէն մի մարդ ի վիճակի է իւր բոլոր կապերն,
անձնական մղումները զիտակցօրէն ընկճել և մի բոլոր
զոնէ տեղափոխուել զիմացի զաղափարական հակառակոր-
դի մտայնութեան մէջ ու ըստ այնմ ըմբռնել և արժէքա-
ւորել երեւոյթը: Միայն ազնւական հոգին է որ բարձրա-
նալով իւր առօրեայ հակումներից, ամէն անգամ իւր
զաղափարական հակառակորդին դատում է ըստ ետքեան
և նրա մէջ գոյութիւն ունեցող բազմապիսի բացասա-
կան գծերի մէջ տեսնում է միացեալ այն մէկ դրական
գիծը, որն այդ մարդուն այնուամենայնիւ դրական
արժէքներին է մօտեցնում և նրա գոյութեան իմաստ
տալիս այս անցաւոր աշխարհում: Մտաւոր հորիզոնի
լայնութիւնը, երբ մարդ յատկապէս ծանօթանում է
բազմապիսի այլ ազգերի կեանքի հետ և նրանց ալեկո-
ծող կենսական խնդիրներին խորամուխ լինում ու հա-
մեմատում իւրայինի հետ, զգալապէս նպաստում է հո-

ղու կղզիացութից դուրս դալուն և առողջ տեսակէտներ
լուրացնելուն:

Խնդիրը ի հարկէ փոխւում է, յատկապէս յետա-
նաց հասարակութիւններում, երբ կուսակցութեան
տեղ քայնայ է հանդէս գալիս, որի գէպընձ գաղա-
փար առածը լանը յօդս է ցնդում և մնում են զուտ
անձնականի չորջը խմբուած մարդիկ, որոնք օժտը-
ւած արեւելեան ֆանատիկոսութեամբ, գիմացի մարդ-
կանց իւրաքանչիւր քայլը, ինչ էլ ուզում է այդ լինի,
անգամ այս ձեռքիս գրչակոթը, որը մի անշունչ և
անմեղ առարկայ է, սկզբից և եթ որոշել են պախա-
րակել: Այստեղ արդէն հետուից գիտողի համար ո՛չ թէ
լուրջ պայքար կայ, այլ տղայութիւն, և ուր վիճի
առաւելան ոչ մի արժէք չունի, այլ խնդիրը վիճող ան-
ձանձ անձնական յարաբերութեանց համար մի փոր-
ձադաշտ է՝ իրենց կրքերի տարբեր նիւանները ցու-
ցադրելու: Եւ անպայման այս գէպընձ ինչ որ գի-
մացիներն է ասում՝ սխալ է, աւելացրած դրան նաեւ
նրա բարքերը, նրա ընտանեկան կենցաղը, նրա շը-
ռայլութեան ատիւժանը և այլն: Այս բոլորի գումարը
ի հարկէ բացասական է և այդ մի խեղճ մտածողու-
թեան համար ապացոյց է, որ իսկապէս հակառակորդը
այն վերոյիշեալ խնդրին սխալ է մօտենում:

Այսպիսի պարագաներում ինտելիգենտ մարդուն
մնում է զգաստ և չըջահայեաց լինել գէպի իւրաքան-
չիւր հարց, որ յուզում է հասարակութեան: Չաղղուել
զանազան անձնական, կողմնակի տեղական տրա-
մադրութիւններից, այլ աշխատել կրքի հանրային
միտքը՝ խնդրին ըստ ետքեան, առարկայօրէն մօտենա-
լու տեսակէտից, օգտուել աւելի կուլտուրական ազդե-

րի համապատիւն խնդիրներ լուծման եղանակից, ջանալ այդ եղանակները յարմարեցնել մեր կեանքի պայմաններին և ոչ թէ մեր առօրեայ կեանքի տրամադրութիւններից ազդուած՝ այս կամ այն ընթացքը տալ ազդեցիկ հարցերին: Հայ մտաւորականը իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած կ'ընի, եթէ օժտուած ուժեղ կամքով՝ դիմագրելով չը հիմնաւորուած հասարակական պահանջներին, իւրացրած կրիւնի արեւմտեան Եւրոպայի կուլտուրայի արգասիքները, և դժբախտիւններին, կ'աշխատի մարմնացնել մեր ազդեցիկ—հասարակական կեանքում:

Հասարակութիւնը լինելով վեր-օրգանական մի կառուցուածք, ուր անհատների բնութեման և կամեցողութեան եղանակը որոշ չափով ազդուած է նրա առեւտրային կառուցուածքի և զարգացման բնիկացիի վրայ, հասկանալի է, որ ինչքան նրա բաղկացուցիչ անդամները բարձր և փարթամ զարգացման տէր են, այնքան էլ նոյն ինքն այդ հասարակութիւնը, իւրեւ ամբողջութիւն վերցրած, կ'աւարեալ տիպ է ներկայացնում: Անհատական կատարելագործութեան մէջ անշուշտ կայ եւր մօմէտներից մէկն է իւրաքանչիւր անձի մէջ մնայուն առեւտրի գոյութիւնը, որը ներկայացնում է մեր կեանքի յարափոփոխ երեւոյթների բնիկացի է մեր ամբողջ աշխարհայեացքը: Յայտնի է, որ մարդուն յատուկ է բնութեան և մարդկային երեւոյթները միութեան բերելու ձգտումը, այսինքն ըստ երեւան անձնաւորութիւնը զօրեղ է, այնքան էլ նրա

անեցած մնայուն արմէքները ամուր սեւեռելով իր հոգու մէջ, ընդ որ յարափոփոխ, անցողակի, պատահական դրսի գրգիռների վերաբերմամբ նրա վերաբերմունքը ոլորում է ոչ թէ պատահականօրէն, ըստ տեղի, անձի, տրամադրութեան, այլ թէ ինչքան այդ նոյն գրգիռը մեր գոյութեան իմաստ տալով վերոյիշեալ արմէքների հետ համապատասխանում է, որպէսզի միասին մի հարմոնիք միութիւն կազմեն: Երբ մեր հոգու զարգացման հետ այդ արմէքները աւելի ճիշդաւորում են, այսինքն իրենց ոյժը տարածում են յաղթականօրէն կեանքի բազմապիսի զէպքերի վրայ՝ դրանց բնագրկելու համար, ապա մենք ներկայացնում ենք այն հասարակութեան մէջ, ուր ապրում ենք, ամենաառողջ տարրը, որն ամենեւին տրամադիր է աքննողատ վերաբերմունքով իւրացնելու իւրաքանչիւր գրգիռ, իւրաքանչիւր ներշնչութիւն, որ չափ անգամ այդ հասարակութեան կեանքի համար միայն բացասական արդիւնք կարող է լինել: Վերոյիշեալ իմաստով հասարակական անձը այն ժայռն է, որին զարնելով փչրում են մարդկային կեանքի բազմապիսի պատահական հոգմերը: Յատկապէս ինքնիզը (բանասարկութիւնը), որը մեր արեւելեան հասարակութեան մէջ հակայական չարիք է պատճառում ամէն տիպի հանրային և անձնական գործերում, իւր սրմատն ունի հասարակութեան անդամների անկաւար զարգացման և յարափոփոխ կառուածքի մէջ: Անշուշտ ինտրիզը ամէն հասարակութեան մէջ, անգամ ամենազարգացած, տեղի է ունենում, սակայն այն համաճարակային բրնձիք, որով վարակւած է մեր հասարակական կեանքը այդ ախտով, բացարձակապէս բացատրւում է հոգու

աղքատութեամբ, հոգու անզարգացածութեամբ և անկայունութեամբ: Իսկապէս ինտրիզը ամենահեշտ միջոցն է, առանց պայքարի, ամէն տիպի դործեր վերջացընել, երբ զրա զոհման գործած մարդ արարածը ոչ հասկանում է, թէ ինչ անում է (գիտակցութեան նսեմացման պատճառով) և ոչ էլ որ և է աշխարհայեացք ունի, որով որեւէ ձեռով աշխատի ըմբռնել, թէ այս դործը, որ ևս ուրիշի թեյազրանքով կատարում եմ, արդեօք իմ ըմբռնումների հետ ամենափոքր չափով անգամ յարակցութիւն ունի:

Այն բոլոր ակամայ տեսութիւնները, որ բանասրկու (ինտրիզան) մարդը ստիպուած է տեսնութեամբ և նեղելով առաջ բերել, երբ գիտակից և շեշտուած անհատականութեան է հանդիպում խեղապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի ակամայ տուրք՝ մեր այն անհրաժեշտ պահանջին զոհացում տալու, թէ հանրութեան հետաքրքրութեան և զրադման առարկան կարող են լինել հանրային խնդիրները և ոչ թէ մէկ անձի վերաբերեալ զուտ անձնական դործերը, այլ և հանրային խնդիրները պիտի հանրօգուտ եղանակով լուծուին ստանան: Ահա այստեղ է, ի միջի այլոց, հանդէս դալիս հասարակական օգուտը, վերոյիշեալ զարգացած անհատականութեան, որը իւր անձնական շեշտով վանում է ոչ միայն տեւալ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող վնասակար բանասրկութիւնները, այլ և շնորհիւ իր հոգու հարստութեան, նա այնքան առաջադրած խնդիրներ ունի լուծելու, որ զրանց հետ համեմատած այսինչ մարդու անհատական հաշիւները այնքան մանր ու ճզճիմ են, որ զրանք մաքրելու համար ոչ ժամանակ և ոչ էլ տրամադրութիւն ունի:

Այստեղից առաջանում է մի նոր և թարմ մթնոլորտ հանրային կեանքում, ուր իւրաքանչիւր համայնակցի հետ գործակցելիս, ունենում ևս լիակար հաւաադէպի նրա գործողութիւնները, որոնք պիտի տոգորուած լինեն հանրային շահերով և ուր ամէն տիպի թիւրիմացութիւն հեշտ է լուծել, որովհետեւ թիւրիմացութեան առարկան ակնայայտ է և ոչ թէ վարագոյրի յետեւ թաղնուած:

Բացի մեր այս ակնարկած օգուտից, հասարակութեան անգամների զարգացման բարձր աստիճանը ընձեռնում է նաեւ մի այլ, աւելի խոշոր առաւելութիւն: Յատկապէս երբ զանազան կրթական, կուլտուրական հաստատութեանց, կամ անհատական սիստեմաթիք ինքնազարգացման միջոցով, հասարակութեան իւրաքանչիւր անդամը, մարդկութեան զարգացման ընթացքին և զրա զեկաւարդ օրէնքներին խորամուխ է լինում (յատկապէս հասարակագիտութեան և պատմագիտութեան ճիւղերում,) նա մտաւոր կերպով տեղափոխւում է պատմական իրականութեան մէջ գոյութիւն ունեցած բաղմապիտի հասարակութեանց կեանքի, նրանց զարգացման ընթացքի, նրանց յուզող հարցերի մէջ: Այսպիսի զարգացումը անգնահատելի կերպով խորացնում է և հասունացնում մեր ըմբռնումը ժամանակակից հասարակական խնդիրները վերաբերմամբ:

Մենք տեսնում ենք, որ այն խնդիրները, որոնք մեզ յուզում են, յուզել են մի ժամանակ և՛ այլ հասարակութեանց, այլ և տեւալ մարդու կամ խմբակցութեան կողմից մեզ ներշնչւած լուծումը միակը չէ, որ կատարւել է պատմութեան մէջ նման խնդիրների վե-

բարեբեալ: Յատկապէս հասարակական կեանքի զարգացման օրէնքներին խորամուխ լինելը մեզ վերին աստիճանի շրջահայեաց է զարձնում և հետեւ պահում այն սկիւղ և կորստաբեր եղբակացութիւնից, թէ որովհետեւ մարդ արարածը գիտակցօրէն հակադդել կարող է իւր հանրային կեանքի վրայ, ուրեմն ամեն սիւսի փորձեր կարելի է կատարել տեւալ հասարակական վրայ, առանց ի նկատի ունենալու նրա զարգացման աստիճանը, նրա բնաւորութիւնը և այլն: Ուրիշ խօսքով ասած պատմահասարակագիտական իմացութիւնը մեր հոգին, բովանդակութեան կողմից, ճոխացնելով և ակսիւ դարձնելով դէպի տեւալ անմիջական արտաքին գրգռք (զանազան ներշնչումներ, անսովորութիւններ, փորձեր), չի թոյլատրում, որ մենք իսկոյն կլանենք ամէն մի պատահական մարդու տեսութիւնից, նրա վառվառն երեւակայութիւնից և խոստումներից, այլ մենք զրանց այնքան արժէք պիտի տանք, ինչքան զրանք մեր ձեռք բերած հիմնական ըմբռնումների հետ համաձայնութիւն ունենան: Հասկանալի է, որ ինչքան ուշ և տաժանելի երկունքով ծնւի հասարակութեան բաղկացուցիչ անդամների աշխարհայեացքի կառուցումը, այնքան նա մնայուն և բեղմնաւոր արժէք կունենայ հասարակութեան համար: Կարիք կա՞յ արդեօք չեղտել, թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի հասարակութեան բարեկեցութեան և զարգացման համար այս տիպի անդամների գոյութիւնը: Եթէ մենք չունենանք մնայուն հասարակական արժէքներ, ապա ուրեմն և կուտուրայ չենք կարող ունենալ, որովհետեւ կուտուրան ստեղծում է ո՛չ թէ որեւէ սերունդի սակաւամեայ աշխատանքով, այլ միմեանց յա-

ջորդող սերունդների շարունակական քրտնաջան վտտակներով: Եթէ իւրաքանչիւր սերունդ իւր նախորդների բոլոր արժէքները ոչնչացնէ, ապա ուրեմն մենք կուտուրայից ձեռք պիտի վերցնենք: Մասնաւորելով խօսքը մեր ազգային կուտուրային, պիտի ասել: որ հայութիւնը իւր պատմական ողբերգական պայմաններում անդամ, ստեղծել է և մեզ փոխանցել մի կուտուրա, որի պահպանումն ու բարգաւաճումը պիտի բարոյական պարտքը լինի բոլոր նոցա համար, որոնք իրենց մնայուն աշխարհայեացքում ազգային արժէքներին ևս յատուկ տեղ են յատկացնում:

Վերելում մենք աշխատեցինք ցուցադրել անհատական զարգացման նշանակութիւնն ու օգուտը հանրային տեսակէտից դիտած: Այժմ կը ցանկայինք այդ զարգացումը նայել հէնց հասարակութեան բաղկացուցիչ անդամների տեսակէտից:

Կասկածից վեր է, որ քաղաքակիրթ երկրների կուտուրական պայմաններն այնպէս են դասաւորած, որ այդ պայմաններում գտնուած անհատը, եթէ ունի իսկ իւր անհատական զարգացման վրայ յատուկ գիտակցական ճիգ ու ջանք չթափէ, դարձեալ ակամայից — զեռ մի կողմ թողնելով իւր նախահայրերի միջոցաւ դարերով կուտակւած և ժառանգարար փոխանցւած, ազնւացրած ու կիրթ հակումները և կեանքից ունենայիք տօրեայ բարձր պահանջները — իւր ամենօրեայ կենցաղի ընթացքում այնքան բաներ է տեսնում, լսում, վայելում, որ նա, եթէ իրապէս ուզում է տոյ կուտուրական հասարակութեան անդամը կոչել և ոչ թէ զրանից դուրս մնալ, արդէն որոշ կուտուրական մակարդակի վրայ է կանգնած: Այդ մակարդակից նա

ի հարկէ էլ աւելի բարձրանում է ապագային բազմապիսի կրթական-մասնագիտական հաստատութեանց, զանազան ընկերութեանց և այլն միջոցներով ընձեռնած արժէքներով:

Խնդիրը բոլորովին փոխւում է մեր արեւելեան հասարակութեան մէջ, ուր մեզ շրջապատող կեանքի պայմանները լինելով վերին աստիճանի տարրական, գրեթէ ոչինչ չեն մատակարարում մեր անհատական կատարելութեան համար և ուր կարելի է առանց այլ արժէքների էլ հասարակութեան ամենապատուաւոր անդամը լինել, միայն թէ դրա համար որոշ չափով անձնապատանութիւն ունենաք, որը յաճախ ոչնչով է հիմնաւորւած, և որոշ նիւթական միջոցներով օժտւած լինիք: Անշուշտ ամենաառաջաւոր երկրներումն իսկ նիւթական միջոցներին առաջնակարգ նշանակութիւն է տրւում և սակայն ինչ որ կարեւոր է ու աստ պիտի չեւտել, դա այն է, որ նիւթական արժէքների կողքին զարգացած հասարակութիւնները — որովհետեւ բազմապիսի պահանջներ ունին, որոնք պիտի բաւարարութիւն ստանան — հաւ այլ, օրինակ հոգեկան արժէքներին առանձնապատուել տեղ են տալիս: Եւ բնականօրէն մի յայտնի ֆինանսիստի կողքին ոչ պակաս նշանակութիւն է ստանում մի յայտնի գերաստան, յայտնի դրականագէտ ու գիտուն և այլն: Սըրանցից իւրաքանչիւրը հաստարակութեան ունեցած բազմապիսի անհրաժեշտ պահանջներին զանազան կերպով և միջոցներով բաւարարութիւն է տալիս:

Մեր կեանքի պայմաններն այժմ այնպէս են, — քանի որ հանրային պարագաները գրեթէ ոչինչ կամ չատ թոյլ զրգիւններ են տալիս մեր անհատական զար-

գացման համար, — որ մեզ մնում է միայն առանձնապատուել կամքի էներգիայով մեր անձնական զարգացման պրոցէսը շարունակել. բայց այժմ հարց է առաջ գալիս, ինչիս է պէտք այդ զարգացման վրայ ջանք թափելը, երբ մենք առանց դրան էլ մեր հացը կարող ենք վաստակիլ, ընտանիք պահել, ինտելիգենտ լինելու յաւակնոտութեամբ մեր «հեղինակաւոր կարծիք»ը յայտնել ականաւոր դէմքերի և զրական երկերի մասին և դա «կլլեցնել» տալ մեր շրջապատին, այլ և ամէնաառաջնակարգ ազգային և պետական պաշտօնների տէր դառնալ: Այս բոլորը կարելի է ձեռք բերել զիւրին կերպով որոշ ճարտիկութեամբ և մեր մարդկային բարոյական նկարագրի (եթէ ունինք) հաշիւն որոշ կոմպրօմիսներ կատարելով: Խնդիրը բարեբախտաբար այդքան հեշտ է լուծւում: Մեզ ճիշտ է թւում այն կարծիքը, թէ այս աշխարհում ամէն մարդ, և թէ չէ ուղում լոկ իւր ֆիզիքական գոյութիւնը պահպանել, պարտաւոր է իւր ուժերի, կարողութեանց, հակումների համաձայն որ և է ձեւով մարդկութեան օգտանակար լինել, որպէսզի իւր մահաւանդ առաջ, իւր փոխակցութեան և հաւատի առաջ կարողանայ ասել, ինչպէս Ֆիլիստին է չեւտում, թէ ես ևս գոյութիւն եմ ունեցել: Իսկ յանուն մարդկութեան կատարած այսպիսի գործունէութիւնը ամենից աւելի օգտակար և բեղմնաւոր արդիւնք կտայ, ըստ իս, եթէ վերոյիշեալ անձը հարազատ ազգային շրջանակում սահմանափակի (և թէ պայմանները թոյլատրում են) իւր գործունէութիւնը, որովհետեւ այդ ազգային մարմնի հետ նա օրգանապէս կապւած է և ուր նրա ոյժերը ամեննին չեն ցրել: Հասկանալի է սակայն, որ այսպիսի մի

դործունէութեան հիմնական պայմանն է, որ նախ մենք մեր կարողութիւնները իրենց տրամաբանական զարգացման հասցնենք, որպէսզի ապա դրանց լաւագոյն եղանակներով ի սպաս բերենք մեր ազգային մշակոյթին:

Անկախ վերոյիշեալ հանգամանքներից, անհատական զարգացման պահանջը հիմնաւորւած է և մի ալ շատ խորը մօտիւով: Ամէն մարդ ըստ իս պիտի ունենայ իւր ներքին ապրումների խորանը, ուր պիտի ամբարւած լինեն նրա բոլոր սրբութիւնները, որոնք և նրա գոյութեան համար մի աներեր նեցուկ են դառնում և նրա կեանքի ամենաողբերդական պայմաններումն իսկ հոգեկան հաճոյքի կենսատու ազդիւրը կազմում: Հասկանալի է, որ ինչքան այս ապրումները գիտակցական բարձր աստիճանների հասնեն, այնքան աւելի սօլիտ կառուցուածք կստանան և այնքան էլ նրանք պատահական գրգիռներից ու հանգամանքներից չեն տատանւի ու փոփոխուի: Բնական է, որ այստեղ մեր հոգեկան զարգացման և հարստացման անհրաժեշտութիւնը պիտի չեղուի: Եւ իրօք, ի՞նչ խեղճ են անգարգացած անհատների հոգեկան ապրումների բովանդակութիւնն ու ծաւալը. նրանց հոգսերը տարրական են, մտաւոր հորիզոնը նեղ:

Այժմ հարց է առաջ գալիս, ի՞նչ եղանակով պիտի այդ զարգացումը ձեռք բերուի: Եւ չեղտեցի, որ մեր պայմաններում, քանի որ դրսի պարագաները մեր անհատական զարգացման գրեթէ չեն նպաստում, մենք պիտի յատուկ ուշք դարձնենք մեր միջոցով այդ զարգացումը ձեռք բերել իսկ այս գէպքում ամենազլխաւոր միջոցը անշուշտ ընթերցանութիւնն է, որովհետեւ ընթեր

ցանու թեան միջոցով մենք իվիճակի ենք տարածականօրէն և ժամանակականօրէն մեզանից հեռու վայրերում և հեռու սնչեալում եւեւ չեմ աշտմ գոյութիւն ունեցող կուլտուրաների հետ հաղորդակցութեան մէջ մտնել և գոնէ այդ եղանակով մեր հոգեկան սոսկալի կղզիացումից դուրս գալ: Այլ և ազգային տեսակէտից դիտած, քանի որ մենք մեր հայրենի հողի վրայ չենք, ուր երբեմնից մնացած յիշատակները մեզ թերեւս ամենաթոյլ կերպով վերյիշել տան և կենդանացնեն մեր ազգային վաղեմի անցեալը, դարձեալ գլխաւոր ապէս ընթերցանութիւնն է, որ պիտի օժանդակէ մեզ չըկբարելու կապը մեր ազգային անցեալի հետ:

Սակայն սովորաբար կարծւում է, թէ անհատական զարգացման խնդիրը կ'յուծուի, եթէ մենք մարսելով, ապա սխտեմաթիկօրէն և շատ կարգաւք ու այսպիսով կը հասնինք մեր անհատական զարգացման դաւթնակէտին: Այս անշուշտ կէս ճշմարտութիւն է: Իւրաքանչիւր սխտեմաթիկ և շատ ընթերցանութիւնը մէկն է մեր զարգացման համար անհրաժեշտ պայմաններից, բայց ոչ միակը: Ամենակարեւորը որ կայ և ուշադրութեան չէ առնւում — դա զարգացած լինելու գաղափարն է: Պարզինք մեր միտքը, եթէ մեզանից մէկը ունի զեղարեւտական գորեղ հակումներ ու ամէն օր էլ նա սխտեմաթիկօրէն, իւրացնելով շատ ընթերցանութիւն է առնում գիւղատնտեսութիւնից, եւ կրթանութիւնից և այլն, դրանով նա երբէք իւր անհատական զարգացման չի հասնի: Անշուշտ այս տիպի ընթերցումը բոլորովին անօգուտ չի անցնի վերոյիշեալ զեղարեւտագէտի համար, սակայն նա դրանից օգտւում է այնքան, ինչքան դրանք նրա հիմնական էութեան,

կոչման փթթման, ծաղկման համար երկրորդական տիպի տարրեր են ընձևոնում: Հիմնականը, կարևորն այստեղ այն է, որ տեւալ անձը իւր էութեան կորիզին, իւր կոչման լիակատար վերահասու պիտի լինի: Սա մի շատ դժւար դործողութիւն է, որը սակայն պիտի վերջ ի վերջոյ տեղի ունենայ: Մի անգամ որ մարդ այս աստիճանին հասել է, այնուհետեւ ինչպէս որ կոկոնից զարգանում է վարդը, այնպէս էլ նրա ուժերը իրենց համապատասխան հունի մէջ գրեկով, զարգանալով, հասնում են լիակատար հասունութեան: Այս հասունացման պրոցէսի ընթացքում անկասկած է, որ նա իրեն կենսապէս յուզող խնդիրներում ինչքան տարրեր, միմեանց հակադիր ըմբռնումների, տեսութիւնների, ներշնչումների պատրաստակամ ունկնդիր լինի, այնքան ապագային նրա նկարագիրը ինքնութոյնութեան, մնայունութեան նշաններ կը ցուցադրի: Ամենահետաքրքիրն և ամենադժուարը այստեղ համոզումների, կարծիքների անհատական նրբերանգներն են (նիւանսները,) որոնք տարբերելով մասսայի բոլորը մէկ յայտարարի, բերելու ձգտումից և պահանջից, թէ անհատին և թէ այդպիսի անհատներից բաղկացած խմբակցութեան մի ինքնատիպ բնոյթ են տալիս, նմանելով ամենազեղեցիկ ծաղկեփնջին, որի մէջ տարրեր ծաղիկներից իւրաքանչիւրը իւրայատուկ կերպով նըպաստում է ընդհանուր ծաղկեփնջի գեղեցկութեան: Յատկապէս կանացիական սեռի մօտ, երբ նոցա հոգեկան բարձր զարգացման հետ, նրանց սեռին յատուկ քնքշութեան և նրբութեան միանում է և՛ նրանց իրերը, երեւոյթները զիտելու կանացիական նիւանսը, այսինքն իրերը, երեւոյթները կնոջ աչքով զիտելու և

ղանակը, առաջ է բերում մի վերին աստիճանի հոգեպէս թարմացնող մթնոլորտ: Այս կապակցութեան մէջ ես կը ցանկայի չեչտել, որ միայն հանձարներն ու մարգարէներն են, որոնք առանց որ և է դրսի միջոցի գիմելու, լոկ իրենց անհատական հարուստ բովանդակութիւնը խորացնելով, հասնում են լիակատար հասունութեան և զարգացման:

Հոգեկան զարգացումը նպաստում է մարդու գէպի այլ անձը, իրը, երեւոյթն ունեցած վերաբերմունքի լրջութեան և նրբութեան: Այս հանդամանքը դժբախտաբար նկատելի չէ մեր միջավայրում: Անխնայ և այն էլ բացասապէս բացասական վերաբերմունք է նըկատուում գէպիմեր ազգային հասարակական արժէքները, զրական անձերն ու երկերը և այն էլ այնպիսի մարդկանց կողմից, որոնց կարծիք յայտնելու փաստը իբրեւ իրենց մտքերը լոկ ճիշտ արտայայտելու փորձեր կարելի է զիտել: Իսկ ոչ քննադատութիւնը այն ժամանակ միայն նշանակութիւն ունի, երբ նախ քննադատը ծանօթ է քննելիք օբժէկտին, նրա ստեղծման պայմաններին, լայն ծանօթութիւն ունի զանազան առաջաւոր ազգերի մօտ եղած նման խնդիրների վերաբերեալ քննադատութեանց: Միայն այս պարագային կարող է քննադատութիւնը ուշադրութիւն գրաւել և արդասաւոր լինել: ապա թէ ոչ արժէքների մերկապարանոց ժխտելու, մերժելու համար իսկապէս ոչինչ պէտք չէր լինի, բայց եթէ ոչնչի վրայ չհիմնւած անձնապատասխանութիւն և թերութա շրջապատ՝ կլլեցնել տալու համար մեր ասածը: Մանաւանդ ազգեցիկ լինելու համար ոմանք օժտւած են քարացած բանաձևերով ու գաղափարներով, որոնց մէջ բռնազրօսիկ կերպով ուզում են մտցնել բազմա-

բանդ իրականութիւնը և այսպիսով հարուստիկ կերպով թւում է թէ երևոյթները բացատրւեցին: Իրականին մէջ մտքի լարակապացութիւն է տեղի ունենում: Խնդրի բարեյաջող լուծումը բոլորովին անյուսալի է, երբ յատկապէս լէճի առարկան իրենց հակառակ մարդու հետ ամենաշնչին կապակցութիւն ունի: Եւ ինչ որ ծիծաղելին է, չի նկատուում, որ մեր մթնոլորտից զուրա մեր «հեղինակաւոր կարծիքը» որ և է ուշադրութեան չէ կարող արժանանալ, էլ չեմ ասում գնահատման: Այս ազգային ցաւը, այսինքն փոխանակ ուսանելու, մեր հոգեկան կեանքը իւր հընարաւոր զարգացման հաղցնելու, ընդհակառակը ուրիշներին շուտափոյթ ուսուցանելու տենչը, շատ հին է մեր մէջ: Դեռ մեր վաստակաւոր քերթողահայր Մ. Խորենացին իւր ժամանակի սոստանեկութեան համար նկատել է նոյնը և այս խնդրում էլ թող խորիմաստ Գեօրգի կեանքը մեզ առաջնորդ լինի, որի համար պիտի. Զիմեկը նկատում է, թէ նա իւր անընդհատ զարգացման ընթացքում երեք այնպիսի բնորոշ և ինքնատիպ աստիճաններ է անցկացրել, որ նրանցից թէ՛ ոչ մէկին, մի սովորական մտաւորական, մինչև իւր կեանքի վերջը հազիւ հասնել կարողանայ:



ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵՆՏԻ

ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՅՐ
(ՇՆՆԻՄԱՆ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Անմահ Գէօթէն իր անզուգական «Ֆաուստ»-ի մէջ հրեշտակաբարբառ ձայնով երգել է տալիս, թէ այս աշխարհում միայն նրանց փրկութիւն կայ, որոնք յաւերտեանապէս ձգտելով՝ ջանում են: Այս ձգտումներով ի աշխատանքը եթէ ունեցել է բացարձակ երջանիկ անծինք, որոնք մինչև իրենց կեանքի վերջի բոլոր տեղեկագործական կորով ու թափ ևն հանդէս են բերել, ապա անպայմանօրէն զրանց է պատկանում նաև կարլ Լամպրենտը: Մի համայնապարփակ ոգի, որին այդ կողմից իրաւամբ համեմատել են Հեգելի հետ: Ով իր կեանքում բախտ է ունեցել հանդիպելու գիտական մտքի տէր հեղինակաւոր անձանց, նա անշուշտ նկատած կլինի, թէ ինչպէս նման անծինք իրենց ամբողջ մտածածն ու ստեղծածը որոշ ձեւակերպւած բանաձեւերի մէջ են աշխատում հաղցնել: Որոշ չրջանակներ գոյութիւն ունին, որոնցով միայն նման անծինք իրականութիւնը ըմբռնել կարող են: Կ. Լամպրենտը տարրերում էր իւր գիտական համագործակիցներին հէնց նրանով, որ նրա հոգին վերին աստիճանի զգայուն, կենսաթրթիւ և լայնատարած լինելով, մինչև իր կեանքի վերջը, իւրաքանչիւր նոր զրգիւի, նոր փառապատրաստ էր յօժարակամ ունկնդրել: Մտածողական թափի և հորիզոնի անսահման լայնութեան հետ, որը թիւ էր տալիս իրականութիւնը բազմակողմանի կերպով

պով դիտել, նա ունէր և՛ անսահման կամք՝ յարատև ստեղծագործելու, որի արդիւնքն է, բացի նրա հրատարակած բազմաթիւ պատմափիլիսոփայական գրուածքներից, նրա գլուխ-գործոցը՝ «Գերմանական պատմութիւնը», որը պարունակում է մօտ 20 հաստափոր հատորներ:

Հայ ուսանողութեան մի պատկառելի քանակ ևս բախտ է ունեցել ժամանակին ունկնդրելու այս եղակի անձնաւորութեան և նրանից անսահման գրգիռներ ըստանալ: Հանդուցեալը հայրական գուրգուրանք ունէր զէպի լւբաքանչլւր անհատութանով, որի մէջ նկատում էր խոստմնալից ապագայ: Մի հայ երիտասարդ ևս, Վահան Նալբանտեանը (վանեցի), որը արտակարգ ընդունակութիւն էր ցուցադրում իր տառապալից ուսանողութեան ժամանակ, նրա յատուկ գուրգուրանքին էր արժանացել և ապագային լոյս տեսաւ, Լամպրեխտի հրատարակութեանց մէջ, նրա համալսարանական արժէքաւոր գիտէրտացիօնը Ռանքէի պատմական աշխարհայեացքի մասին:

Յիշում եմ ինչպէս երէկ, թէ ինչպէս տարիներ առաջ, Լայպցիկի համալսարանին կից գտնուած մեծ եկեղեցում, այս գերմանական խոշոր դէմքի մահաւան առթիւ, հաւաքւել էր Լայպցիկի ամբողջ ակադեմիկ դասը իրենց ընտանիքներով: Եւ անթիւ ծաղկեալը սակններով ողողուած դադաղի առաջ, տխրալից երաժշտութիւնից յետոյ, վեր կացաւ գերմանական մըտածողութեան արհին, ութսունամեայ փիլիսոփայ Վուսդը, և գողգոջուն ձայնով ու ձեռներով մատնանշեց մահացեալի բարձր արժանիքները, ընդգծեց նրա տեսնելը՝ պատմութիւնը դարձնել մարդկային կուլտուրայի

պատմութիւն՝ իր բոլոր համայնատարած ձեւերով: Ապա թէ ինչպէս այդ նպատակով, այսինքն կուլտուրայի զանազան ձեւերը ուսումնասիրելու համար, Լամպրեխտը հիմնեց Լայպցիկում «Կուլտուրայի և համաշխարհային պատմութեան ինստիտուտը», ուր կարող էին ուսումնասիրել, բացի իւր դադափարակիցներից, նաև այլ տիպի մտածողներ, այսինքն մտքի անհատականութիւնը յարգելու ջերմ կողմնակից էր Լամպրեխտը: Այս վերջին հանգամանքի նշանակութիւնը հասկանալու համար պիտի նկատել, որ այդ ինստիտուտը բացի ուսումնասիրութիւններից, այլև ծառայում է իբրև համալսարանական նոր սերնդի, ուսանողների գիտականօրէն պատրաստուելու վայր և ուրեմն եթէ միայն միակողմանի մտածող գիտուններ մուտք ունենային անդ, միակողմանի սերունդ էլ կ'պատրաստուէր, ինչ որ ի հարկէ վերին աստիճանի մերժելի է: Միայն լայնախոհ դէմքերն են, որոնք անդամ իրենց ստեղծած հաստատութիւններում հակառակորդ մտքի ներկայացուցիչներ են թոյլատրում՝ երիտասարդ սերնդի հոգու կազմակերպման ընթացքը աւելի բեղմնաւոր ու հաստատուն դարձնելու համար: Ուշադիր ուսանողը, եթէ միաժամանակ ունկնդիր է զօրեղ, յաճախ իրար ժխտող դէմքերի, ապա նա փոխանակ ստրկանալու մի հեղինակութեան, ժամանակի ընթացքում հասունանալով, կարողանում է մեծ ինքնուրոյնութիւն հանդէս բերել:

Որպէսզի մեզ համար պարզ լինի Կ. Լամպրեխտի դերը գերմանական և առհասարակ ժամանակակից պատմագիտութեան մէջ, պիտի ի նկատի ունենալ, որ Գերմանիայում, ինչև Լամպրեխտը, գրեթէ ամենաաղղկ-

ցիկ և տիրապետող պատմական ուղղութիւնը է. Ռանքէի և նրա անթիւ աշակերտների ուղղութիւնն էր: Ըստ Ռանքէի աշխարհայեացքի, պատմական իրականութեան մէջ մարդկային հասարակութեանց զարգացումը պայմանաւորուած է պետութեան զործունէութեամբ: Պետութիւնը իր քաղաքական զործողութիւններով — ինչին դրա գիպլօմատիական ակտեր թէ պատերազմներ — ամենից զօրեղ կերպով ազդում է տեւալ հասարակութեան կեանքի բոլոր կողմերի վրայ. այդ պատճառով էլ պետութեան կեանքը, նրա ունեցած բազմապիսի պատահարները, նրա ծաւալումը, նրա վերելքի ու անկման պատճառները պիտի կազմեն պատմութեան կորիզը: Մարդկային կուլտուրայի միւս կողմերը՝ գեղարեստ, գիտութիւն, տնտեսութիւն, թէպէտեւ ըստ այս տեսութեան բոլորովին չեն սրտաքաշուած պատմութեան բովանդակութիւնից, սակայն գիտւում են չատ հարեանցիօրէն, թողնելով դրանք իրեն ուսումնասիրութեան նիւթ համապատասխան մասնագիտութեանց՝ յատուկ գիտական, տնտեսական և այլն ուսումնասիրութեանց: Եւ որովհետեւ պետական, քաղաքական իրադարձութիւնները եղանի ղէպքեր են, այսինքն մէկ անգամ և մի որոշ ժամանակում միայն տեղի են ունեցել ու նոյնութեամբ երբեք չեն կարող կրկնուել, ապա հասկանալի է, որ նման տիպի մէկ անգամ կատարուած իրադարձութիւնները կարող են միայն նկարագրուել և՛ ոչ մի պարագային օրէնքի տակ չեն կարող մտցուել: Եւ իրօք, նկարագրական արեստը իր գեղարեստական բարձրագոյն աստիճանին հասած մեծ վարպետի՝ Ռանքէի մօտ: Ով բախտ է ունեցել կարգալու թէկուզ մի անգամ նրա «Պատերի պատմութե-

թիւնը», չի կարող չը դիւթել այն դունեղ, պատկերաւոր նկարագրութիւններից, որոնցով նա աշխատում է պատերի կենցաղը յաւերժացնել: Ձեզ լուում է, թէ այդ իրենց ժամանակի վրայ իշխող, տիրապետող պատերը հէնց ձեր աչքի առաջ են կատարում իրենց կեանքի լւրսքանչիւր մանրամասնութիւնները:

Լամպրեխտի համար սակայն պատմագիտութեան խնդիրը այլ կերպ էր ներկայանում: Նախ և առաջ միանգամ կատարւած եղանի ղէպքերի նկարագրութիւնը, ինչքան էլ որ այս վերջինը գեղեցիկ լինի, չի կարող հսկայական պատմական իրականութիւնը սպռել, որովհետեւ անհնար է մի առ մի թւել և գրի առնել այն բոլոր անհատական ղէպքերը, որոնք տեղի են ունեցել անցեալում: Նկարագրութիւնը գեղարեստի չործն է և ոչ թէ գիտութեան: Եւ ուրեմն եթէ իրօք պատմագիտութիւնը գիտութիւն է դառնալու, ապա նա պիտի աշխատի անցեալ իրականութեան տիրապետել, այդ իրականութիւնը ըմբռնել, իսկ դա կարող է տեղի ունենալ միայն, եթէ մենք համայնապարող է տեղի ունենալ միայն, եթէ մենք համայնապարող իր գաղափարները մէջ աշխատինք այդ անցեալը բնագրկել: Այդպիսի գաղափարներ են օրինակ պետութիւն, տնտեսութիւն, զարգացում և այլն: Թէպէտեւ այս վերջին ղէպքում, այսինքն գաղափարներով իրականութիւնը բնագրկել ջանալիս, կեանքի նրբերանգները չատ անգամ անխուսափելիօրէն անհետանում են, սակայն այլ միջոց չկայ համայնապարսագիր իմացութեան հասնելու համար:

Ընդունելով ուրեմն պատմութեան հակառակ գեղարեստական նկարագրութեան — գիտութիւն դառնալու անհրաժեշտութիւնը, Լամպրեխտը իր պատմական ու-

սուսմասիրութեան կենդրոնն է ընդունում իւրաքանչիւր ազգի ամբողջ կուլտուրական կեանքը իր բոլոր ճիւղերով: Ուրեմն հակառակ Ռանքէի կողմնակիցներին, որոնք գլխաւորապէս ազգի պետական կեանքն ու սրա ելեւէջներն են պատմութեան զբաղման հիմնական խնդիրը համարում, Լամպրեխտը գտնում է, որ քաղաքական—պետական իրադարձութիւնները ազգային կեանքի մէկ կողմն են և իբրեւ այդպիսին պիտի ուսումնասիրուին, սակայն նոյնպիսի իրաւամբ նաեւ կրօնը, տնտեսութիւնը, հասարակական կեանքը, գեղարւեստը, իրաւունքը պիտի պատմական ուսումնասիրութեան մէջ մտնեն, եթէ մենք իրօք ուզում ենք տեւալ հասարակութեան որոշ շրջանի լիակատար պատկերը տալ: Ուրիշ խօսքով ասած՝ Լամպրեխտը տեսականապէս հիմնաւորեց և գործնականապէս—իր «գերմանական պատմութեան» մէջ—իրագործեց կուլտուրայի պատմութեան գաղափարը, որը իւրաքանչիւր ազգի թափած ստեղծագործական ճիւղի ամբողջ արդիւնքը իր բոլոր ճիւղերում հանդէս է բերում:

Հասկանալի է ըստ ինքեան, թէ նման տիպի ըմբռնումով պատմագէտի ուսումնասիրութեան դաշտը ի՞նչ աստիճանի ընդարձակւում է. միաժամանակ և՛ նոր դժուարութիւններ առաջ բերու, եթէ մենք իրօք ուզում ենք նպատակադրածը ամենալայն լրջութեամբ իրագործել: Նախկին քաղաքական պատմագէտի համար բաւական էր լեզւական տեխնիկայի ուսումնասիրութեան ընդհանուր պահանջների հետ ծանօթանալ, այլ և պատմա—քաղաքական գրաւոր յիշատակարանի հետ լրջօրէն վարեւելու և օգտւելու եղանակը իւրացնել և այնուհետեւ նա կարող էր յանդգնել նման որ-

ևէ աշխատանք կատարել: Պատմութեան նոր ըմբռնումով սակայն պատմագէտը միաժամանակ և՛ լայն ծանօթութիւն ու հասկացողութիւն պիտի ունենայ, բացի պետական—քաղաքական դէպքերից, այլ և կրօնի, գեղարւեստի, տնտեսութեան և այլն մասին, որպէսզի ի վիճակի լինի ազգի համապատասխան կեանքը, օրինակ կրօնականը և սրա զարգացումը ընդգծել: Այսպիսի լայն ուսումնասիրութիւնը հսկայական ժամանակի ու աշխատանքի կարիք ունի և իրօք Լամպրեխտը իր ամբողջ կեանքը վատնեց միայն գերմանական ազգի պատմութիւնը գրելու համար: Ունենալով գեղարւեստագէտի պէս գիտող նուրբ աչք, նա երկար ժամանակ աշխատում էր նկարչական ստեղծագործութիւնները և նրանց զարգացումը ըմբռնել: Նուրբ գիտող մարդու համար տնտեսական կեանքը բաղմամբիսի նիւթ է տալիս և Լամպրեխտի ուսումնասիրութիւնը, օրինակ Գերմանիոյ միջնադարեան տնտեսութեան մասին, անկասկած դասական բնոյթ ունի: Այստեղ պիտի յիշատակել, որ Լամպրեխտը թէպէտեւ մարքսիստ չէր, սակայն խորապէս ազդւած էր այդ խորունկ մտածողից, և կարծում էր, որ մարքսկային հասարակութեանց ձևակերպման և զարգացման գլխաւոր աղբալներէն խոշորը տնտեսականն է: Բայց ի հարկէ նրա՝ համայնապարփակ, շարժուն ոգին հետեւ էր ստրկանալու այս տեսութեան առաջ և օգտւում էր տեւալ տեսութիւնից այնքան՝ ինչքան նա անհրաժեշտ էր իր աշխարհայեացքի կառուցման համար: Ես փորձեմ ևս իմ աշխատութեան մէջ («Ազգութեան գաղափարը 19րդ դարու գերմանական պատմաբանների մօտ») ցուցադրել—հակառակ թիւրիմացութեամբ տա-

րածուած կարծիք — որ Մարքսի և Լամպրեխտի աշխարհայեցքի մէջ Լակտոն տարբերութիւն գոյութիւն ունի հասարակութեան զարգացման ընթացքի, նրա ազդակներին վերաբերեալ:

Այժմ հարց է առաջ գալիս, ո՞րն է ուղեցոյց զի՞ծը Լամպրեխտի պատմահայեցողութեան: Այս խնդրի լուծումը կարեւոր է այն պատճառով, որ նոյնիսկ ընդունելով թէ պատմագիտութիւնը պիտի զբաղուի կուլտուրայի զանազան կողմերով, զրանով դեռ մարդկային հասարակութեանց ամբողջական զարգացումը միասին առած չի ստացւիլ, այլ մենք զրանով լոկ գեղարուեստի, դիտութեան, տնտեսութեան և այլն զարգացումն ու պատմութիւնը կունենանք, կամ լուսավոյն պարագային՝ զրանց գումարը, որը մի նոր բան չի աւելացնի մեր արդէն իմացածի վրայ:

Լամպրեխտը պատմական կեանքի զարգացման համար իբրեւ ելակէտ ընդունում է ազդութիւնը, որովհետեւ ազդութիւնը կանոնաւոր մարդկային հասարակութիւնն է, որը համեմատաբար բնականոն զարգացում ունի: Այսպիսի բնականոն կեանք ունեցող ազդութեանց պատմական կեանքը ընթանում է զանազան դարաշրջանների մէջ, որոնցից իւրաքանչիւրն ինքն իր մէջ մի ամբողջական միութիւն է կազմում: Ուրիշ խօսքով ասած՝ մի ազդի տեւալ դարաշրջանում ունեցած բոլոր կուլտուրական ստեղծագործութիւնները մի միութիւն են ներկայացնում և նոյն գունաւորումն ունեն, այսինքն միեւնոյն ոգին է իշխում այդ բոլոր կուլտուրական ստեղծագործութեանց մէջ և օրինակ անհատապաշտական (ինդիւիդուալիստական) դարաշրջանում թէ՛ կրօնի, թէ՛ գեղարուեստի, թէ՛ արն-

տեսութեան մէջ դերիշխում է անհատապաշտական ուղղութիւնը:

Այստեղ պիտի նկատել, որ Լամպրեխտը մարդկային զարգացման իր այս տեսութիւնը հիմնել է անհատի զարգացման տեսութեան վրայ. այսինքն ըստ նրա, մի անհատի զարգացումը, երեխայութիւնից մինչև հասակն սունկը, համապատասխան է մի ազդի զարգացման՝ սրտ ամենատնտեսական վիճակից մինչև զարգացման հասնիր: Եւ ինչպէս որ անյրիւ քաղաքակրթութեան հասնիր: Եւ ինչպէս որ անհատի երեխայ ժամանակ նրա բոլոր զգացողական, մտային, կամային կարողութիւնները երեխայական գունաւորում են կրում, այնպէս էլ մարդկութեան կամ մի ազդի նախնական վիճակում նրա կուլտուրայի բոլոր կողմերը նախնական բնոյթ են կրում: Նմանապէս ինչպէս որ երեխան իր բնածին յատկութեամբ զարգանալու մղումն ունի իր մէջ, այսինքն անպայմանօրէն պատանի, երիտասարդ, հասակաւոր պիտի դառնայ իր ներքնապէս առաջ մղող սկզբի պատճառով, այնպէս էլ ազդութիւնը իր նախնական վիճակից յաջորդական զարգացման դարաշրջաններ պիտի անցնէ, մինչև հասնէ իր լիակատար զարգացման: Եւ որ գլխաւորն է՝ իւրաքանչիւր դարաշրջանում տեսողազդ իր քաղաքակրթական բոլոր գործողութեանց վրայ նոյն գրգռում է գնում, ինչպէս օրինակ երիտասարդութիւնը գնում է իր անխնայութեան գրգռման մեր երիտասարդ ապրումների վրայ:

Հասկանալի է, որ այսպիսի մի պատմական բաժանման մէջ չատ երկրորդական նշանակութիւն կարող են ունենալ եզակի դէպքերը, քաղաքական, պետական իրադարձութիւնները, քանի որ մի դարաշրջ-

ջան իր ներքին ուժի մղումով միևնույն է անխուսա-
փելիօրէն պիտի անցնի աւելի կատարեալ տիպի զար-
գացման։ Այս զարգացման շնորհիւ մարդկային հոգե-
կան ոյժը աւելի ու աւելի զօրեղանում է, ինչ որ
պարզ կարելի է նկատել նրա հոգեկան արտադրու-
թեանց մէջ։ Այս աշխարհայեացքում մարդկային հա-
սարակութեանց հանրային (հաւաքական) ձգտումնե-
րն ու ճիգերն են, որ որոշիչ նշանակութիւն ունին
պատմութեան համար։ Այդ հաւաքական, հանրային
ճիգերն են, որոնք տւեալ դարաշրջանից գոհաւորու-
մէն ստանալով, կ'որենոր ազդակ են դառնում պատ-
մութեան ընթացքում։

Անշուշտ այս պատմական տեսութիւնը թերի է և
մի զօրեղ հակադրութիւն է նախկին նկարագրական
պատմագրութեան, որն ընդհակառակը, քաղաքական
—պատմական գէպքերին մեծ արժէք է տալիս պատ-
մութեան մէջ։ Որպէսզի մեզ համար պարզ լինի
կամպրեստի աշխարհայեացքի թերի կողմը, վերցնենք
որպէս օրինակ, մի միջին իրական մարդու, որն իր
հասուն տարիքումն է գտնւում։ Անշուշտ նրա նկա-
րագրի համար, ինչպէս նա այժմ իրօք գոյութիւն
ունի, նրա տարիքի հասունութիւնը նպաստել է նրա
գործողութիւնները ցուցադրում են որոշ հասունութիւն։
Մենք ի վիճակի ենք այդ մարդու զարգացման ըն-
թացքը հետեւելու։ Մենք պիտենք, որ նա այս կամ
այն ուսուցչին է ունկնդրել, որ նա իր կեանքում այս
կամ այն պատահարներին է հանդիպել։ Ուսուցիչը,
պատահարները նրա անձնաւորութեան տեսակէտից
պատահական երևոյթներ են, այսինքն նա կարող էր
այդ ուսուցչին և այդ գէպքերին չհանդիպել, սակայն

այդ պատահական իրողութիւնները նրա նկարագրի
կազմակերպման համար և նրա գործողութեանց համար
վճռական նշանակութիւն են ունեցել։ Մենք կարող
ենք հարց տալ, թէ այս անձնաւորութեան հասունու-
թեան համար ի՞նչ մօմէնտներ էական են, արդեօք
նրա հասունացած տարիքը, թէ վերոյիշեալ պատա-
հարները։ Այս հարցին կարող է միայն նրա կենսագը-
րութիւնը, այսինքն նրա կազմակերպման ընթացքի
նկարագրութիւնը պատասխան տալ։ Եւ այդտեղ ան-
շուշտ պատահարները նոյնքան կարեւորութիւն ունեն,
որքան նրա հասունացած հասակը։ Եւ եթէ մենք ազգի
տւեալ դարաշրջանը համեմատում ենք անհատի զար-
գացման որոշ աստիճանի հետ, ապա պիտի նկատենք,
որ նման անհատական կեանքին, բաւական չէ միայն
նկարագրել մի ազգի մի որոշ դարաշրջանի զարգաց-
ման աստիճանը, որն անշուշտ գոհաւորւում է այդ շըր-
ջանի բոլոր երևոյթները, այլ և պիտի յիշատակենք
այն բոլոր պատահական, եզակի, քաղաքական—պետա-
կան գէպքերը, որոնք թէպէտ քաղաքական պատմա-
գրների մօտ չափազանցեցրած ձևով առաջնակարգ նը-
շանակութիւն են ստացել, սակայն աստ ևս, թէպէտ
համատ չափերով, անպայման ի նկատի պէտք է առնը-
ւեն, եթէ մենք իրօք բազմերանգ իրականութիւնը
ամբողջապէս բացատրել ենք ուղղւում։ Ուրիշ խօսքով
ասած, կօնկրէտ իրականութեան մէջ ընդհանուր գո-
յալիճակը, պայմանները և մասնակի, փոփոխակի գէպ-
քերը, իրադարձութիւնները անքակտելի կերպով մի-
ացած են հանդէս դալիս և հէնց այս փոփոխակի, մի
անգամ պատահած գէպքերն են, որ պատմական փաս-
տի ինքնութիւնն են շեշտել տալիս։ Բայց իսկական

Լամպրեխտի համար իւրաքանչիւր դարաշրջանի դու-
լութեան համար այդ գէպքերը, թէպէտեւ կարեւոր,
բայց ո՛չ անխուսափելի երևոյթներ են և ուռանց զը-
րանց էլ պատմութիւնը ըստ էութեան նոյն ընթացքը
կուսենար:

Սակայն ինչքան էլ որ Լամպրեխտը թերի լինի
իր պատմափիլիսոփայական աշխարհայեացքով, նրա
մօտ քառորդ դար տեւող անվեհեր մարտը հին, մի-
ակողմանի քաղաքական պատմադրութեան գէժ, նրա
մտաւոր լայն և համայնապարփակ հորիզոնը, որով նա
պատմութիւնը մարդկային բովանդակ կուրտուրայի
պատմութիւն դարձրեց, վերջապէս նրա գլուխ դործու-
ցը «Իւր Բանակւան պատմութիւնը», որով նա գործադը-
րեց իր դադաւարները մի մեծ սղգութեան զարգաց-
ման վերաբերմամբ— Բեզ իրաւունք են տալիս այդ
մեծ և կորովի մտածողին վերջին քառորդ դարու եւ-
րոպական մտքի առաջնակարգ գէժքերից մէկը համա-
րել:

ՎԵՐՉ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
1. — Մտաւորական խոհեր	1
2. — Անհատական նկարագրի կառուցուցումը ազ- գերի կեանքում	30
3. — Կուլտուրական խնդիրներ	49
4. — Կուլտուրական ըմբռնումներ	70
5. — Կ. Լամպրեխտի պատմափիլիսոփայական աշ- խարհայեացքը	89



ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊՍԿՆԵՐ

Էջ	Տող վերևից՝	Տպւած է	Պիտի լինի
3	25	դերութեանց	գիտութեանց
7	14	վաղանձուկ	վաղանցուկ
14	7	պահանջում	պահանջում
15	15	գրաւում	գրաւում
16	16	խմաստը	խմաստը
19	20	միտափիղիք	մետափիղիկ
20	20	ղգաւարները	ղաղաւարները
20	28	տպաղգային	տպաղգային
22	12	իւր իր	իւր
28	30	«Շա»	«աջ»
34	13	սեւեռում	սեւեռում
35	27	ղաղարեցնել	ղաղարեցրել
40	29	պատմութիւն	պատմութեան
43	11	և	ևս
62	12	արդի	այդ
67	15	թէ	եթէ
93	26	համայնապարտադիր համայնապարտ ուղիւր	

2001

0016181

362

ՀՀ Ազգային գրադարան





NL0016181

Լայպցիկի Կուլսուր-Պատմական ինստիտու-
տի կողմից հրատարակած է նույն հեղինակի
«Ազգութեան զաղափարը 19-րդ դարու գեր-
մանական պատմագիրների մօտ» (գերմաներէն
լեզուով):



ՊԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԴՐՈՒԹԵԱՆ
«ՊԱՏՄԱ-ՇԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ-
ՆԵՐ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ:



ԴԻՄԵՆ՝

ՈՒԶՈՒՆԵՊՈՒՆ ԳՐԱՏՈՒՆ Beyrouth B. P. 496